INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN NAS RA

APPLIED LINGUISTICS ISSUES

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА НАН РА

ВОПРОСЫ ПРИКЛАДНОЙ ЛИНГВИСТИКИ

Yerevan – 2023

Ереван – 2023

INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN NAS RA

APPLIED LINGUISTICS ISSUES

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА НАН РА

ВОПРОСЫ ПРИКЛАДНОЙ ЛИНГВИСТИКИ

Yerevan – 2023

Ереван – 2023

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊՐԱԿ Բ

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 81'33
ԳՄԴ 81.1
Կ 530

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Կ 530 Կիրառական լեզվաբանության հարցեր / Գ. Գրիգորյան, Օ. Խաչատրյան, Ֆ. Հակոբյան, Լ. Հովսեփյան, Ս. Ղուկասյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023. Պրակ Բ.- 159 էջ:

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2016-17թթ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են կիրառական լեզվաբանության ուսումնասիրության խնդիրներին: Ներկայացված նյութը կարող է օգտագործվել դպրոցական և բուհական ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 81'33
ԳՄԴ 81.1

ISBN 978-9939-9305-7-2
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2023
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակչություն, 2023

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը, որի աշխատանքներն ընթանում են հետազոտական մի քանի ուղղություններով (լեզվաբանական հոդվածների և մենագրությունների մատենագիտության կազմում, կիրառական և համակարգչային լեզվաբանության արդի խնդիրների ուսումնասիրություն, փորձառական հնչյունական հետազոտություններ և այլն), ընդլայնում է իր սահմանները՝ ներառելով նաև երկլեզվյան զուգադրությունների, նյարդալեզվաբանության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտական աշխատանքներ:

Կիրառական լեզվաբանության արդի գիտական հարցերի վերաբերյալ գրվել են հոդվածներ՝ խոսակցական և գրական լեզուների տեմպի, հնչերանգի, համաբարբառների համակարգչային մշակման խնդիրների, հայատառ հաղորդակցման խնդիրների, Մ. Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարում բառերի խոսքիմաստային երկարժեք, եռարժեք և քառարժեք դրսևորումների, կրկնակ բաղաձայնների տևողության վերաբերյալ: Վիճակագրական լեզվաբանության ոլորում ուսումնասիրվել են *այո-ոչ* հարցումները Մատթէոսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը հրապարակում է աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Կիրառական լեզվաբանության հարցեր» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ

խմբագրական միջամտության: Շարքի երկրորդ պրակը պարունակում է բաժնի աշխատակիցներ Գ.Գրիգորյանի, Օ. Խաչատրյանի, Ֆ. Հակոբյանի, Լ. Հովսեփյանի, Ս. Ղուկասյանի աշխատանքները, որոնք 2016-17թթ. հրապարակվել են տարբեր հանդեսներում և ժողովածուներում:

Գ.Գրիգորյան

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՏԵՄՊԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

Գրիգորյան Գայանե

Սույն զեկուցման մեջ քննարկվում է խոսակցական և գրական լեզուների տեմպի հարցը՝ ելնելով փորձառական հնչյունաբանական վերլուծության տվյալներից: Համեմատվում են հն չյունների տևողության և ուժգնության արժեքները խոսակցական և գրական տարբերակների պարագաներում:

Խոսակցական լեզուն զրուցակիցների անմիջական մասնակցությամբ տեղի ունեցող հանպատրաստից, ազատ, ինքնաբուխ, անկաշկանդ խոսքն է, որն իրականացվում է ոչ պաշտոնական իրավիճակներում: Խոսակցական լեզվի հիմնական գործառույթը տեղեկության փոխանցումն է, որն իրականացվում է հնչող խոսքի միջոցով: Խոսակցական լեզվի առանձնահատկություններից մեկն այն է, որ տեղեկության մեծ մասը պարունակվում է ոչ այնքան շարադրանքի (տեքստի), որքան հաղորդակցման իրադրության մեջ:

Խոսողը հույս ունի, որ իր խոսակիցը կարող է ընտրել անհրաժեշտ տեղեկությունը, քանի որ նա ևս գտնվում է նույն համատեքստում, հաղորդակցման նույն իրավիճակում. ժամանակը, տեղը, նաև արտալեզվական միջոցները (դեմքի արտահայտություն, դիմախաղ, ժեստեր և այլն) ստեղծում են բավարար պայմաններ դրա համար: Սրանից տուժում են բառերը՝ ենթարկվելով քանակական և որակական փոփոխությունների: Ժեստերն ու դիմախաղը ուժեղացնում են զգացմունքներն ու արտահայտությունները. դեմքի արտահայտությունն ավելին է ասում, քան բառերը:

---

* «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, «Աստղիկ» հրատ., Երևան, 2016, էջ 209-213:

Գրական լեզուն, որը բնորոշվում է որպես ժողովրդական լեզվի մշակված տարբերակ և որին բնորոշ է նորմատիվությունը, կիրառվում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում: Այս ոճին բնորոշ է «հնչյունների լիահունչ, մաքուր, բաց արտասանությունը և հստակ առոգանությունը»[1]: Մեր նպատակը չէ տալ այս երկու տեսակների ձևակերպումները, այլ բացահայտել, թե ձայնաբանական ինչ փոփոխությունների են ենթարկվում հնչող բառերը այս երկու պարագաներում, մասնավորապես տևողության և ուժգնության դեպքերում:

Այս նպատակին հասնելու համար առաջին հերթին ձայնագրվել են պատահական երկխոսություններ, որոնցից առանձնացվել են այն բառերը, որոնք հանդիպում են նաև գրական լեզվում: Պատա հական երկխոսությունների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հնարավորինս ապահովվի անկաշկանդությունը և խոսքի բնականությունը: Դրանից հետո այդ ընտրված բառերից կազմվել են տեքստեր, որոնք հատուկ են նաև գրական լեզվին: Այդ շարադրանքները կարդացվել են 3 հաղորդավարների կողմից, որից հետո կատարվել են համեմատական դիտարկումներ:

Սովորաբար խոսքի տեմպը կախված է մի շարք հանգամանքներից, որոնց մասին շատ է ասվել՝ խոսողի յուրահատկություններից և տարիքից, մարդու հուզական վիճակից, հաղորդակցման իրավիճակից, խոսքի ոճից, տեքստի բովանդակությունից և այլն: Մեր պարագայում այս կախվածությանը «մասնակցում են» հիմնականում խոսքի ոճը և տեքստի բովանդակությունը, այսինքն՝ խոսքը գրական և խոսակցական լեզուների մասին է:

Փորձառական հնչյունաբանական հետազոտությունները կատարվել են ՊՌԱԱՏ ծրագրի[2] միջոցով, որը համակարգչային

---

[1] **Թ.Ղարագյուլյան,** *Ժամանակակից հայերենի ուղղախոսություն*, Երևան., 1974, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 81:

[2] *Պռաատը (Praat, հոլանդերեն՝ խոսք, խոսել) ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող խոսքի վերլուծության համակարգչային*

ծրագիր է և օգտագործվում է շատ հնչյունաբանական լաբորատորիաներում: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս հաշվարկելու հնչյունների տևողությունը և ուժգնությունը: Ձայնագրությունները կատարվել են տնային պայմաններում, նյութը կարդացել են հայերենախոսներ: Փորձարկման են ենթարկվել 28 բառեր, որոնք ուսումնասիրվել են 2 պարագաներում՝ խոսակցական լեզվում՝ երկխոսությունների ժամանակ, և գրական շարադրանքում՝ հաղորդավարների ընթերցմամբ:

Ուսումնասիրությունները կատարվել են բոլոր ձայնավորների և բաղաձայնների գերակշիռ մասի նկատմամբ: Բառերը հնչել են նախադասությունների մեջ և առանձին ուսումնասիրվել ծրագրի օգնությամբ:

Հետաքրքրականն այն է, որ ողջույնի և բաժանման ժամանակ ասվող բառերը ամենից շատ են ենթարկվել փոփոխությունների, նույնիսկ ամբողջական հնչյուններ կուլ են գնացել, որն ակնառու է ոչ միայն ձայնի պատկերում, այլ նաև լսելի է անզեն ականջով: Օրինակ՝ խոսակցական լեզվում *բարև ձեզ* արտահայտության մեջ առաջին [e] հնչյունի տևողությունը 80 միլիվայրկյան է, որը մոտ 2.5 անգամ փոքր է գրական լեզվում արտասանված տարբերակից, երկրորդ [e] –ն՝ *ձեզ-* ի, համարյա թե չի լսվում, իսկ ձայնապատկերի մեջ արտահայտված էլ չէ: «Ձեզ»-ը հնչում է մոտավորապես «ցս»: Ինչ վերաբերում է ուժգնությանը, ապա այստեղ հակառակ պատկերն է. գրական լեզվում [e] ձայնավորի ուժգնությունը զիջում է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորի ուժգնությանը:

ծրագիր է, որը նախատեսված է խոսքի վերլուծության, այդ թվում՝ սպեկտոգրաֆիկ, և խոսքի համադրության (սինթեզի) համար: Դա մշակվել և շարունակում է զարգանալ Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից : Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:

Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել տնողության փորձառական հնչյունաբանական հաշվարկների տվյալները՝ ըստ 3 հաղորդավարների:

	Խոսակցական	Գրական		
ՁԱՅՆԱՎ.		Հաղորդավար 1	Հաղորդավար 2	Հաղորդավար 3
Ա	170	195	200	210
Օ	117	130	190	180
ՈՒ	118	150	155	190
Ի	133	160	180	150
Է	175	180	190	210
Ը	73	90	120	100

Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել ուժգնության փորձառական հնչյունաբանական հաշվարկների տվյալները՝ ըստ 3 հաղորդավարների:

	Խոսակցական	Գրական		
ՁԱՅՆԱՎ.		Հաղորդավար 1	Հաղորդավար 2	Հաղորդավար 3
Ա	74.1	66.2	74.1	69.4
Օ	76.3	66.4	80.1	70.1
ՈՒ	70.7	66.1	60.7	69.1
Ի	78.2	74.4	70.3	70.1
Է	83.2	76.6	75.4	71.4
Ը	61.7	60.1	55.9	60.3

Համեմատական տվյալները հնարավորություն տվեցին բացահայտելու մի շարք հետաքրքրական եզրահանգումներ.

- Գրական լեզվում ձայնավորների տևողությունը գերազանցում է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների տևողությանը:
- Գրական լեզվում ձայնավորների ուժգնությունը զիջում է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների ուժգնությանը:
- Գրական լեզվում բաղաձայնների տևողությունը հավասար է կամ չնչին չափով է գերազանցում խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների տևողությանը:

- Գրական լեզվում բաղաձայնների ուժգնությունը հիմնականում հավասար է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների ուժգնությանը:

Այսինքն՝ ասված եզրահանգումներից ելնելով, կարող ենք ասել, որ գրական և խոսակցական լեզուներում հիմնական փոփոխությունը կատարվում է ձայնավորների հետ՝ տևողության և ուժգնության տվյալների փոփոխմամբ: Իսկ բաղաձայնները համարյա թե փոփոխության չեն ենթարկվում:

Այսպիսով, կատարված փորձառական հնչյունաբանական վերլուծության տվյալները փաստում են հետևյալը.

Գրական լեզուն, ի համեմատ խոսակցականի, այնքան էլ ինտենսիվ չէ. մարդիկ խոսում են հանգիստ, ոչ-ուժգին ձայնավորների կիրառմամբ, սակայն այդ ձայնավորները արտասանվում են պարզ, ամբողջական և հստակ, որն էլ ապահովում է դրանց տևականությունը:

Խոսակցական լեզուն ավելի ինտենսիվ է ձայնավորների ուժգնության շնորհիվ, սակայն բառերի տևողությունը «տուժում է», քանի որ կրճատվում են ձայնավորների տևողությունները:

Եվ այսպես, մեր փորձարկման բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

Տ գ > Տ խ

Ու գ < Ու խ

որտեղ **Տգ**-ն տևողություն - գրականն է, **Տխ**-ն՝ տևողություն - խոսակցականը, նույն տրամաբանությամբ տրված է նաև ուժգնության համեմատությունը:

Բանաձևից ելնելով՝ կարող ենք ասել, որ գրական խոսքը տևական է, խոսակցական լեզուն՝ ուժգին:

Григорян Гаяне - Сравнительное исследование темпа разговорного и литературного языков. - В докладе рассматривается вопрос темпа разговорного и литературного языков, основываясь на фонетическом анализе экспериментальных данных. Сравниваюся данные длительности и интенсивности разговорного и литературного языков. Для достижения этой цели были записаны диалоги, из которых были отделены слова, которые встречаются также в литературном языке. Во время эксперимента слова были изучены в двух обстоятельствах: в разговорных диалогах и в литературном тексте, которые читали дикторы. Сравнительные данные дали возможность выявить ряд интересных закономерностей и выяснить, какие слова наиболее подвержены изменениям.

Grigoryan Gayane - A Comparative Study of the tempo of colloquial and literary languages. - The report discusses the tempo of colloquial and literary languages, based on the phonetic analysis of experimental data. The values of the duration and intensity of the spoken and literary versions are compared. To achieve this goal sevaral dialogues were recorded, then those words were separated which appear in the literary language too. The words were examined, tested in two respects: in the spoken dialogues and literary text by announcers reading. The comparative data gave a possibility to reveal a number of interesting patterns and to find out which words are most the subject to be changed.

ՀՆՉԵՐԱՆԳԸ*

Գրիգորյան Գայանե

Հնչերանգը (ինտոնացիան) բնորոշ է միայն հնչող խոսքին: Իսկ ե՞րբ են սկսել ուսումնասիրել հնչերանգը՝ որպես գիտական առարկա: Հնչերանգն առաջին հերթին հետաքրքրել է հռետորական արվեստի տեսաբաններին, որոնք ասում էին, որ հռետորը պետք է կարողանա խոսել հստակ և պարզ, որպեսզի ունկնդիրները հասկանան, թե ինչի մասին է խոսքը: Բացի դրանից՝ հռետորը պետք է ներազդի լսարանի ոչ միայն մտքի, այլ նաև զգացմունքների վրա, կարողանա շահել նրանց համակրանքը, գրավել դեպի իր կողմը: Նրան անհրաժեշտ է իմանալ, թե ինչպե՛ս դա անել, հնչող խոսքի ի՛նչ միջոցներ օգտագործել: Ահա թե ինչու հին հույն և հին հռոմեացի ճարտասանները այդքան գրել են հնչերանգի մասին, որը հիմք է հանդիսացել հռետորաբանության ստեղծման համար: Նրանց աշխատություններում նկարագրված է խոսքային մեղեդին, որը տարբերվում է երաժշտական մեղեդուց: Այն ժամանակվա խոսքի վարպետները բնութագրել են խոսքի ռիթմը, տեմպը, դադարները, կարևորել խոսքի շղթան իմաստային մասերի բաժանելու անհրաժեշտությունը:

Հնչերանգի խնդիրը գրավել է միջին դարերի հանրային խոսքի տեսաբաններին նույնպես: Սակայն հռետորաբանության հիմնական տեսական դրույթները ձևավորվել են 18-րդ դարում, որոնք արդիական են նաև մեր ժամանակներում: Այդպիսի տեսաբաններից էր ռուս հանճարեղ գիտնական **Մ.Վ.Լոմոնոսովը**: Նրա «Краткое руководство к риторике» [1] աշխատության մեջ կա մի գլուխ արտասանության մասին՝ «О

---

* «*Հայոց լեզու և գրականություն*» հանդես, #1, Երևան, 2016, էջ 11-16:

[1] **Ломоносов М.В.**, Избранные произведения. В двух томах. История. Филология. Поэзия. Т. 2. — М., Наука. 1986:

произношении», որտեղ նա գրում է, որ արտասանությունը հզոր ուժ ունի, ուստի ով ցանկանում է իսկական ճարտասան դառնալ, պետք է արտասանական վարժություններ կատարի և հետևի արտասանական կանոններին:

Լոմոնոսովի «Российская граматика» աշխատության մեջ (հրատարակված՝ 1755 թվականին) հեղինակը մեծ նշանակություն է տալիս հնչերանգին, մանավանդ որ աշխատության առաջին գլուխը վերնագրված է «О голосе»:[2] **Լոմոնոսովն** այստեղ առաջին հերթին գրում է այն մեծ ունակությունների մասին, որոնցով բնությունը օժտել է մարդուն. դրանք են լսողությունը և ձայնը: **Լոմոնոսովը** զարմանում է այն բանի վրա, թե որքան զանազան «գաղափարներ» են ընկալվում տեսողության միջոցով, նույնքան անսահման հնարավորություններ են ի հայտ գալիս հնչերանգի մեջ: Այնուհետև նա խոսում է հնչերանգի բաղադրիչների մասին: Նա առանձնացնում է տոնը (ձայնի բարձրացումն ու իջեցումը), տեմպը (տևական և կարճատև ընթացքը), ուժգնությունը (բարձր և ցածր լարումը) և այլն: Հետաքրքրական են ձայնի տեմբրի մասին գիտնականի արտահայտած մտքերը. նա այն կարծիքին է, որ տեմբրը կախված չէ ձայնի բարձրացումից, լարումից և ընթացքից: Հեղինակը նշում է ձայների տեսակներ՝ խռպոտ, հնչեղ, խուլ և այլն, ուստի մարդկանց մենք ճանաչում ենք ձայնից՝ առանց նրան տեսնելու:

17-19-րդ դարերում թատերական արվեստի զարգացմանը զուգընթաց առավել կարևորվում է հնչերանգի դերը՝ որպես բեմական խոսքի հիմնական տարրերից մեկը: Դերասանի, ինչպես նաև ճարտասանի համար հնչող խոսքը մտքերի և զգացմունքների փոխանակման, հանդիսատեսի վրա ներազդելու հիմնական միջոցն է, ուստի դերասանը պետք է կարողանա

[2] http://feb-web.ru/feb/lomonos/texts/lo0/lo7/lo7-3892.htm

օգտագործել լեզվի բոլոր միջոցները, իմանա լեզվի բոլոր օրենքները:

Արտահայտիչ ընթերցանության և դերասանական վարպետության մասնագետները, համեմատելով բեմական և առօրյա խոսքը, սահմանեցին հնչերանգի յուրահատկությունները երկու պարագաներում: Գեղարվեստական ստեղծագործության վերլուծության օրինակի վրա նրանք ցույց տվեցին, թե ինչ գործառույթ է կատարում հնչերանգը, որոնք են նրա բաղադրիչները, ինչպիսի հնչերանգով պետք է կարդալ այս կամ այն ստեղծագործությունը:

Հատուկ ուշադրություն էր դարձվում դադարների, տևողության, խոսքային հատվածների սահմանների, տոնայնության բարձրացման կամ իջեցման հարցերին: Դեռևս այն ժամանակ սահմանում էին արտաբերության ուժգնության կախվածությունը տրամաբանական շեշտից, կարևորում էին նախադասության մեջ բառերի կարգի, բառերի՝ խոսքի մասի պատկանելության, նախադասության անդամների իրողությունը և այլն:

Ռուսերենի բեմական խոսքի, հնչերանգի տեսական դրույթների և գործնական խորհուրդների վերաբերյալ շատ արժեքավոր արտահայտություններ է արել ականավոր ռեժիսոր, դերասան, մանկավարժ, թատերական արվեստի տեսաբան **Կոնստանտին Ս. Ստանիսլավսկին** (1863 --1938):

«Работа актера над собой», «Работа актера над ролью», «Моя жизнь в искусстве» շարադրություններում նա բազմիցս անդրադարձել է հնչող խոսքին, որը պետք է լինի կենդանի, գունեղ, գրավիչ:[3]

Փորձարկումներ անցկացնելով սեփական ձայնի նկատմամբ, հատուկ վարժություններ կատարելով և հետևելով փոփոխություններին, ուշադրությամբ լսելով դրամատիկական և օպերային դերասանների հնչերանգները, զրուցելով բեմի

[3] **Станиславский К. С**. Собрание сочинений: В 9 т. М.: Искусство, 1991. Т. 4.

վարպետների հետ նրանց՝ ձայնին վերաբերող աշխատանքների մասին՝ **Ստանիսլավսկին** եկավ այն եզրակացության, որ հնչերանգի բնույթը, ձայնի երանգավորումը կախված են թե՛ ձայնավորների և թե՛ բաղաձայնների հնչողությունից: Նա սիրում էր ասել. «Ձայնավորները գետն են, բաղաձայնները՝ ափերը»: Ոչ հստակ արտաբերված բաղաձայններով եզերողությունը, ըստ **Ստանիսլավսկու** պատկերավոր արտահայտության, նման է առանց ափերի գետի, ճահճի վերածված ջրհեղեղի, որտեղ խրվում և խեղդվում են բառերը:

Զարգացնելով հնչերանգի տեսությունը՝ նա ձգտում էր իմաստավորել խոսքի շղթայում բաղաձայնների դերն ու գործառույթը, դրանց արտաբերական և ձայնաբանական տարբերակիչ հատկությունները:

Համաձայն **Ստանիսլավսկու** խորը համոզման՝ որպեսզի մարդիկ կատարելապես տիրապետեն հնչերանգին, անհրաժեշտ է իմանալ, թե բերանի, շուրթերի և լեզվի ի՛նչ դիրքերում են արտաբերվում հնչյունները, այսինքն՝ լավ իմանալ արտաբերական գործարանների կառուցվածքը: Ավելին, պետք է իմանալ ոչ միայն կառուցվածքը, այլ նաև հստակ պատկերացում կազմել, թե ինչ նրբերանգ է ձեռք բերում հնչյունը բերանի խոռոչում՝ համապատասխան հնչյունական դիրքում: Այն հնչյունը, որը «դրվում է ատամների վրա», ձեռք է բերում մետաղյա ուժ, իսկ այն հնչյունները, որոնք ընկնում են ձայնածերպի կամ քիմքի փափուկ մասերում, ռեզոնանսվում են ինչպես բամբակում:

Ստանիսլավսկին հատուկ ուշադրություն էր դարձնում շրթունքներին: Հնչյունների արտասանության մեջ անչափ կարևոր է շրթունքների դերը, որոնք վարժված արտիստի համար պիտի լինեն հստակ դիրքով, արտաբեության ժամանակ շարժվեն թեթև, արագ և ճշգրիտ: Մեծ արվեստաբանը իր արտասանության վերաբերյալ համեստորեն արտահայտում է այն միտքը, որ իր շրթունքները լավ չեն հպվում միմյանց, դրանք օդ են բաց թողնում, դրանք ցատկոտում են, քանի որ ունեն վատ հղկվածություն,

ուստի բաղաձայնները չեն արտաբերվում անհրաժեշտ հստակությամբ և մաքրությամբ: Ավարտելով իր դատողությունները շրթունքների վերաբերյալ՝ **Ստանիսլավսկին** գրում է. «Երբ ինքներդ կհասկանաք դա, ինչպես ես եմ հասկացել, դուք ինքներդ գիտակցաբար կցանկանաք զբաղվել և զարգացնել շրթնային ապարատի, լեզվի և այլ մասերի արտաբերությունը»:

Ստանիսլավսկին ուներ նաև իր կարծիքը հնչյունների, վանկերի և բառերի ծագման կամ առաջացման մասին: Նա կարծում էր, որ դրանք չեն հորինել մարդիկ, այլ դրանք առաջացել են բնական ճանապարհով, մեր բնազդը և ազդակներն են հուշել. «....подсказаны нашим инстинктом, побуждениями, самой природой, временем и местом, самой жизнью»:[4] Այստեղից հետևում է, որ բոլոր հնչյունները, որոնցից կազմվում է բառը, ունեն իրենց հոգին, բնությունը, բովանդակությունը, որը խոսողը պետք է զգա: Եթե բառը կապված չէ կյանքի հետ և արտասանվում է ձևականորեն, մեխանիկորեն, անհոգի, ծուլորեն, դատարկ, նա նման է դիակի, ում մեջ պուլսը չի խփում: Կենդանի խոսքը ներսից է հագեցած, ունի իր որոշակի դեմքը և պետք է մնա այնպիսին, ինչպիսին նրան ստեղծել է բնությունը: Եվ ահա բառերի այս հոգին, որոնցից կազմվում են դարձվածքները և նախադասությունները, դրանց բովանդակությունը, իմաստը խոսողը պետք է կարողանա բացահայտել, փոխանցել մյուսներին՝ օգտագործելով հնչերանգի ամբողջ հարստությունը, մեղեդին:

Այսուհանդերձ, ամեն մի անձ ունի իրեն հատուկ ձայն՝ որոշակի ձայնածավալով (դիապազոն): Ձայնը կարող է լինել խռպոտ, ռնգային, թույլ, անարտահայտիչ և այլն: Մեծ արվեստագետը զգուշացնում է, որ որոշ թերություններ անուղղելի են, քանի որ այդպիսին են բնությունից կամ արդյունք

---

[4] **Станиславский К. С.,** Работа актера над собой (Часть II), с. 102:

են ձայնի հիվանդության: Սակայն հաճախ ձայնային թերությունները կարելի է վերացնել հնչյունի ճիշտ ձևավորման օգնությամբ կամ հիվանդության պարագայում՝ բուժմամբ: Ամեն դեպքում, պետք է օգտագործել բոլոր միջոցները, որպեսզի միշտ լինել «ձայնի մեջ», այսինքն՝ զգալ, որ «կարող ես ղեկավարել ձայնդ, որ դա ենթարկվում է քեզ, որ նա հնչեղ և ուժեղ փոխանցում է նվազագույն մանրամասերը, ստեղծագործության նրբերանգները»: **Ստանիսլավսկին** նշում էր, որ եթե մարդն ուզում է ծառայել արվեստին, լինել լավ դերասան կամ գիտնական, ինչ մասնագետ էլ որ լինի՝ քաղաքական գործիչ, գործարար, բժիշկ, ուսուցիչ, իրավաբան, քահանա, անհրաժեշտ է ղեկավարել ձայնը:

19-րդ դարի վերջում հնչերանգի ուսումնասիրմամբ սկսեցին զբաղվել լեզվաբանները: Հնչերանգի մասին գրում էին, օրինակ, ուսումնական ձեռնարկներում: Սակայն դրանց մեջ տրվում էր միայն հնչերանգի ընդհանուր բնութագիրը՝ առանց համապատասխան վերլուծության: Հնչերանգի ուսումնասիրման գիտական մոտեցման հիմքերը դրեցին **Վասիլի Ա. Բոգորոդիցկին** (1857--1941), որը Ռուսաստանում հիմնեց առաջին փորձառական հնչյունաբանական լաբորատորիան, **Ալեքսանդր Մ. Պեշկովսկին**(1878--1933), **Լև Վ. Շչերբան** (1880--1944), որը ղեկավարում էր լենինգրադյան հնչույթաբանական դպրոցը: Սկզբնական շրջանում գիտնականներին հնչերանգը հետաքրքրում էր որպես նախադասությունները ձևակերպելու ձայնաբանական միջոց, այսինքն՝ կարևորվում էր նրա շարահյուսական տեսադաշտը: Լեզվաբանները բավականին մանրակրկիտ նկարագրել են հնչերանգը հարցական, բացականչական, հրամայական և պատմողական նախադասություններում, ուսումնասիրել են ու ցույց տվել, թե ինչպես է հնչերանգը ձևավորում արտահայտությունը, օգնում տարբերելու հնչամասերը ըստ նշանակության և իմաստի:

Հայ լեզվաբանության մեջ հնչերանգին անդրադարձել է Հր.Աճառյանը դեռևս 20-րդ դարի սկզբներին: Նրա «Լիակատար

քերականություն հայոց լեզվի» մեծածավալ աշխատության մեջ բավականին հետաքրքրական տեղեկություններ կան հնչերանգի վերաբերյալ: Նա կարևորում է հնչերանգի և նրա բաղադրիչների քննությունը՝ առանձին-առանձին ուսումնասիրելով ձայնի բարձրությունը, ուժգնությունը, տևողությունը, ռիթմը և դադարը:[5]

Հնչերանգի քննության վերաբերյալ իրենց մտքերն են արտահայտել նաև Մ. Աբեղյանն ու Գ. Ջահուկյանը[6]: Ըստ հայ մեծագույն լեզվաբանների՝ հնչերանգը բաղկացած է հիմնական տոնի բարձրությունից, ուժգնությունից և տևողությունից: Ջահուկյանը գտնում է, որ հնչերանգը կարևոր դեր է կատարում հաղորդակցական տիպերի տարբերակման և խոսքի եղանակավորման գործում:

«Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում» [7] ժողովածուն ամփոփում է ժամանակակից գրական հայերենի պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների հնչերանգի և շեշտի փորձառական ուսումնասիրություններ: Ժողովածուի հեղինակները հանգել են ուշագրավ եզրակացությունների խոսքի իմաստային, քերականական և հնչերանգային կողմերի փոխհարաբերության, հնչյունական շղթայում շարույթների հատույթավորման և շեշտի վերաբերյալ:

Հնչերանգի քննության հարցին են առնչվել ՀՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցներն իրենց աշխատություններում: [8]

---

[5] **Հր.Աճառյան**, Լիակատար քերականություն, հ. 6, Երևան, 1971, էջ 283-357:

[6] **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 556, **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 88-92:

[7] Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978:

[8] **Ս. Ղուկասյան**, Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990,

Քանի որ ցանկացած խոսք արտաբերվում է որոշակի ոճի մեջ (պաշտոնական, բիզնեսային, գիտական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական), լեզվաբանները պարզում են, թե ինչպես է փոխվում հնչերանգը համապատասխան ոճի և ժանրի մեջ: Նրանց հետաքրքրում է նաև հնչերանգի դերը գեղարվեստական ստեղծագործությունների մեջ, որտեղ նա ծառայում է որպես պատկերավոր միջոց, օգնում բացահայտելու գործող անձի բնավորությունը:

Ոճաբանական բնույթի աշխատություններում հատուկ ուշադրություն է դարձվում հնչերանգի մտավոր (ինտելեկտուալ) նշանակությանը, քանի որ դա թույլ է տալիս խոսողին առանձնացնելու նա, ինչն առավել կարևոր է խոսելու պահին: Բացի մտավոր նշանակությունից հնչերանգն ունի կամային նշանակություն, երբ արտահայտում է կամային գործողություններ՝ հրաման, արգելք, խնդրանք, նախազգուշացում, զգուշավորություն, սպառնալիք, բողոք, համաձայնություն, առաջարկություն և այլն:

Ներկա ժամանակներում հնչերանգի ուսումնասիրումը կատարվում է բարձր գիտական մակարդակով՝ նորագույն տեխնիկայի մեծ ձեռքբերումների շնորհիվ: Հնչերանգի ուսումնասիրման արդյունքները օգտագործվում են մայրենի և օտար լեզուների ուսուցման ժամանակ, որոշ հիվանդությունների ախտորոշման (դիագնոստիկայի), մարդու ձայնի որոշման (հետախուզական նպատակներով) դեպքերում, այսինքն՝ հնչերանգի միջոցով սահմանվում է անձի ինքնությունը, ինչպես նաև մարդու հուզական վիճակը խոսքի ձայնագրման ժամանակ:

Հնչերանգի ձայնաբանական բաղադրիչների մեջ կարևոր դեր ունի տոնը: **Տոն** եզրույթն առաջացել է հուներեն tonos (բառացի՝ ձգված պարան, ձգում, լարում) բառից: Այս եզրույթը

Ռ. Թոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983:

գործածվում է մի քանի գիտությունների մեջ: Ֆիզիկայում դա նշանակում է ձայն, որն առաջանում է օդի պարբերական տատանումներից, երաժշտության մեջ՝ որոշակի բարձրության երաժշտական հնչյուն, կերպարվեստի մեջ՝գույն կամ երանգ, բժշկության մեջ՝սրտի կամ նրա փականների աշխատանքի ձայնը և այլն: Հնչյունաբանության մեջ տոն ասելով հասկանում են ձայնավորների և ձայնորդների բարձրությունը: Կոկորդով, բերանի և քթի խոռոչով օդի հոսքն անցնելու ժամանակ ձևավորվում է տոնը: Որպես ձայնալարերի տատանման արդյունք՝ ի հայտ է գալիս ձայնի հիմնական տոնը, որը հնչերանգի կարևոր բաղադրիչներից մեկն է: Մասնագետները հաշվարկել են, որ տղամարդիկ խոսում են ձայնի 80-200 հերց հաճախականությամբ, իսկ կանայք՝ 150-350: Հետաքրքրական փաստ է նա, որ սոպրանոների ամենաբարձր նոտայի հնչյունի տատանումների հաճախականությունը հասնում է 1400 հերցի, որը կարելի է համարել ոչ միայն բազմաչարչար աշխատանքի արդյունք, այլ նաև բնության պարգև:

Այս առումով նշենք, որ բնության մեջ կան կենդանիներ, որոնք արձակում են շատ մեծ հաճախականության ձայներ: Չղջիկները, դելֆինները արձակում են ուլտրաձայներ, որոնց հաճախականությունը հասնում է 140 հազար հերցի:

Հարկ է նշել, որ ձայնի տոնի փոփոխումը բոլոր լեզուներում միևնույն նպատակին չի ծառայում: Տոնային լեզուներում, ինչպես օրինակ՝ չինարենում, ձայնի տոնի փոփոխությամբ կարող է փոխվել նաև բառի իմաստը:

Հնչերանգի մեկ այլ բաղադրիչ է հնչման ուժգնությունը: Դա կախված է ձայնալարերի տատանման ամպլիդուդից և լարումից: Որքամ մեծ է տատանման ամպլիտուդը, այնքան ուժգին է ձայնը: Լսողությամբ կարելի է տարբերել ուժգնության աստիճանը: Դա կարող է լինել թույլ, միջին և բարձր: Հնչման ուժի աստիճանը կարող է չփոփոխվել (հանդարտ, հանգիստ ձայն), սակայն առավել հաճախ փոփոխվում են ուժգնության բնույթն ու

ուղղվածությունը. դրանք մեծանում կամ փոքրանում են կամ կտրուկ, կամ սահուն:

Տոնի և ուժգնության փոխազդեցությունը ուժեղացնում է ձայնի բարձրությունը: Կյանքի իրավիճակները, մարդու հոգեկան դրությունը, նրա կրթվածությունը, հարգալից վերաբերմունքը շրջապատող մարդկանց նկատմամբ և այլն կանխորոշում են, թե մարդը ինչ տոնով է վարելու խոսակցությունը, ինչ տոնով է խոսելու: Այսպես, հավաքների, ժողովների, շքերթների ժամանակ մարդը խոսում է բարձր տոնով, որը թույլատրելի է և անհրաժեշտ, իսկ տանը, ընկերական միջավայրում, բժշկին դիմելիս, աշխատավայրում, փոխադրականում (տրանսպորտում), խանութում կամ այլ հասարակական վայրում՝ ցածր. հակառակ պարագայում դա կվկայի անդաստիարակության, նյարդայնացած կամ գրգռված լինելու, ուշադրություն գրավելու և նույնիսկ ծիծաղելի լինելու մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է հնչերանգի ուսումնասիրման պատմության մի քանի դրվագների, որոնք ներառում են հնագույն ժամանակների հռոմեական և հունական ճարտասանների, ռուս գիտնականների և լեզվաբանների արտահայտած հայտնի մտքերը: Խոսվում է այն մասին, թե ինչպես են անցյալի խոսքի վարպետները բնութագրել խոսքի հնչերանգը, ինչպես նաև ռիթմը, տեմպը, դադարները, կարևորել խոսքի շղթան իմաստային մասերի բաժանելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր – հնչերանգ, հնչող խոսք, հռետորական արվեստ, ձայնին, հնչյունին բնորոշ հատկանիշներ՝ ուժգնություն, շեշտ, տեմբր և այլն:

Григорян Гаяне - Интонация. - Данная статья посвящена нескольких эпизодов из истории исследования интонации, которые включают

известные мысли, выраженные древними римскими и греческими ораторами, российскими учеными и лингвистами. Здесь говорится о том, как в прошлом мастера речи описали интонацию, а также ритм, темп, паузы, важность разделения речевой цепи на смысловые части.

Ключевые слова – интонация, звучащая речь, риторическое искусство, характерные черты звука - интенсивность, ударение, тембр и т.д.

Grigoryan Gayane - The Intonation. - This article is devoted to the study of a few episodes of the history of intonation, which includes well known thoughts expressed by ancient Roman and Greek public speakers, Russian scientists and linguists. Here it touches upon how the speech masters previously described the speech intonation as well as the rhythm, tempo, stops, signified the necessity to divide the speech chain into semantic parts.

Key words – intonation, sounding speech, rhetorical art, the characteristic features of a voice, sound: intensity, accent, timbre etc.

ԲԱՌԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՐԿԱՐԺԵՔ, ԵՌԱՐԺԵՔ ԵՎ ՔԱՌԱՐԺԵՔ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ*

Խաչատրյան Օֆելյա

Բանալի բառեր՝ բառաքերականական բազմիմաստություն, ձևաբանական իմաստ, բառի նախնական իմաստ, գոյական, ածական:

Մովսես Խորենացու ստեղծագործական ժառանգությունը միշտ եղել է հայ և օտարերկրյա բանասերների ուշադրության կենտրոնում: Հայ մատենագրության մեջ նա հայտնի է որպես գիտնական, պատմաբան, քննադատ, աղբյուրագետ, հայերենագետ: Նրան անվանել են «տիեզերահռչակյալ քերթող և թարգմանիչ», «պատմահայր», «հայ Հերոդոտոս», իսկ եվրոպացի բանասեր Գուտշմիտը նրա գործը արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությամբ առաջիններից մեկն է համարել Սուրբ գրքից հետո:

Օգտվելով Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեր կազմած համաբարբառի և դրա հիման վրա՝ «Համախականության բառարանի» ընձեռած հնարավորություններից՝ պարզել ենք, որ կան զգալի թվով բառեր, որոնք շարահյուսական մակարդակում դրսևորում են ձևաբանական այլևայլ կիրառություններ, այսինքն՝ հանդես են գալիս խոսքիմասային տարբեր արժեքներով:

Հայտնի է, որ լեզվի զարգացման ընթացքում բառը կարող է փոփոխություններ կրել, այսինքն՝ կարող է իմաստափոխվել, կարող է տեղի ունենալ իմաստի ընդլայնում, նեղացում: Բառը

---

* Միջազգային գիտաժողովի նյութեր՝ վիրված ՀԱԱՀ 85 -ամյակին, Երևան, 2016, էջ 92-98:

կարող է ձեռք բերել նոր իմաստներ, նոր հասկացություն: Նման դեպքերում առաջանում են ձևաբանական տեղաշարժեր: Ընդհանուր առմամբ այս երևույթը տարածված է և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի քերականագիտության մեջ: Կան խոսքիմասային փոխանցումներին նվիրված գիտական ուսումնասիրություններ, որոնք քննում են խոսքի մասերի տարարժեքությունը [**1,2**]:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդիպում ենք բառերի, որոնց ձևաբանական արժեքը տրոհվում է տարբեր խոսքի մասերի միջև: Դա տեղի է ունենում, երբ բառը բնութագրվում է ըստ արտահայտած բառային իմաստի և շարահյուսական կիրառության: Այսպիսի դեպքերում առաջանում են քերականական համանուններ, որոնց շարքի անդամները տարբեր բառեր են՝ տարբեր բառային իմաստներով, բառային մեկ կաղապարում ստացվում է բառային բազմիմաստություն, խոսքիմասային տարարժեքություն: Խոսքիմասային անցումները հիմնականում տեղի են ունենում բառերի շարահյուսական կիրառության հիման վրա. բառն առհասարակ գոյություն ունի խոսքից դուրս, բայց այն լիովին արժևորվում է միայն խոսքի ու նախադասության մեջ գործածության ժամանակ: Բառերը, կրելով իմաստային փոփոխություններ, կիրառվելով խոսքային ոլորտում, մի խոսքի մասից անցում են կատարում այլ խոսքի մասի: Երբ տեղի են ունենում բառերի իմաստային փոփոխություններ, համապատասխան իմաստ ունեցող բառը միայն խոսքային, շարահյուսական որոշակի պայմաններում, որոշակի կիրառության դեպքում վերածվում է մեկ այլ խոսքի մասի և ստանում նոր իմաստ: Լեզվի մեջ տեղի են ունենում երկու տեսակի փոփոխություններ՝ **1.** մասնակի կամ շարահյուսական, **2.** լիակատար կամ ձևաբանական: Առաջին դեպքում դրանք, պահպանելով իրենց բառային իմաստն ու խոսքիմասային պատկանելությունը, ընդունելով նոր բառային իմաստ, ստանում են նաև խոսքիմասային նոր արժեք: Երկրորդ դեպքում բառը

զրկվում է իր հիմնական իմաստից, ձեռք է բերում նոր իմաստ ու արժեք:

Եթե բառույթի ձևաբանական իմաստի ու արժեքի տեղաշարժն ընթացել է խոսքիմասային համակարգի օղակների միջև, ապա գործ ունենք միջխոսքիմասային փոխանցման հետ: Եթե ձևաբանական իմաստի տեղաշարժը կատարվել է միևնույն բառույթի շրջանակներում՝ նույն խոսքի մասի ներսում, ապա գործ ունենք ներխոսքիմասային փոխանցման հետ» [**3**]:

Խոսքամասային տարարժեք բառերի առաջացման ճանապարհը խոսքիմասային տեղաշարժերն են: Խոսքիմասային տարարժեք բառերը մի խոսքի մասի արժեքից փոխանցվում են մեկ այլ խոսքի մասի արժեքի: Լեզվի զարգացման ընթացքում բառույթի բառիմաստը ենթարկվում է զանազան փոփոխությունների: Այն կարող է լայնանալ, նեղանալ, ենթարկվել անցման կամ շրջման, իմաստները կարող են միմյանց հաջորդել, բառիմաստը կարող է ապրել իմաստի բևեռացում և այլն [**4**]:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարում կան տարարժեք բառերի այնպիսի կիրառություններ, երբ բառերը երկփեղկված են և՛ բառային իմաստներով, և՛ խոսքիմասային համապատասխան արժեքներով: Նրանում կան խոսքիմասային երկարժեք, եռարժեք, նույնիսկ քառարժեք բառեր:

Հանդիպում են ածական//գոյական, ածական//մակբայ, մակբայ//գոյական, դերանուն//գոյական, դերանուն//շաղկապ, գոյական//եղանակավորող բառ, գոյական//շաղկապ երկարժեք բառեր, որոնցից գոյականը, ածականը, դերանունը թեքվող, նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր են, մակբայը նյութական իմաստ արտահայտող, բայց չթեքվող խոսքի մաս է, իսկ նախադրությունը, շաղկապը, եղանակավորող բառերը՝ ոչ նյութական իմաստ արտահայտող սպասարկու բառեր: Նախ ներկայացնենք խոսքիմասային երկարժեք բառերի իմաստների իրացումները պատմիչի երկում՝ [**5**] փակագծերում տալով բնագրային օրինակների աշխարհաբարյան տաբերակներն ըստ

Ատ. Մալխասյանցի թարգմանության [6] և համապատասխան էջերի:

Գոյական //ածական տարարժեք խոսքի մասերով՝

Ամուր-ած. Պինդ. «...քանզի ի լինել մարտին նիզակաւ օրինակ իմն որպէս զջուր հերձեալ զերկաթի **ամուր** հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին» [**5,** էջ **82**]: (...կռվի ժամանակ Աժդահակի երկաթե **ամուր** զրահը ինչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է իր նիզակի ընդարձակ տեգին: (Էջ **51**):

Ամուր-գոյ, Ամրոց, «...առնու **զամուրն** Անի...» [**5,** էջ **228**]: (...առնում է Անի **ամրոցը**... էջ **187**): «...ի Մասաղան **յամուրն** թողեալ զընտանիսն՝ ինքն ի Հռոմ փութայր հասանել» [**5,** էջ **135**]: {Ընտանիքը Մասաղան **ամրոցում** թողնելով՝ ինքն շտապեց Հռոմ հասնել: Էջ **86**):

Երկում ամուր գոյականը տասնհինգ տարբեր նախադասություններում հանդես է գալիս պարագայի և խնդրի շարահյուսական կիրառություններով:

Խոր-ած. Խորունկ. «... գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանունս բղխեալ՝ անդ ետեղագրեաց զքաղաքն. զորով շրջափակեալ **խոր** փոսիւ՝ անդնդալիր հաստատեաց զհիմունս պատուարին...» [**5,** էջ **339**]. (...գտավ մի տեղ, որտեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ մաքուր ջրերով և այդտեղ գծեց քաղաքի տեղը: Նրան շրջապատեց **խոր** փոսով, շատ խոր դրեց պատվարի հիմքը... էջ **224**):

Խոր-գոյ. Փոս, վիհ. «...ընդ վայր յածելով երիվարաւն՝ անկանի ի **խոր** իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի» [**5,** էջ **191**]: (...ձիուց վայր է ընկնում մի խոր **փոսի** մեջ և այնտեղ խորասուզվում, անհետանում է: Էջ **191**):

Ծիրանի-ած. Երկնագույն. «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծովն **ծիրանի**...» [**5,** էջ **85**]: (Երկնում էր երկինք, երկնում էր երկիր, երկնում էր և ծովը **ծիրանի**... էջ **54**):

Ծիրանի-գոյ. Հանդերձ. «Եւ հրամայէ գրել զնա Արշակունի և զգեցուցանել **ծիրանիս** և թագ կապել, զի հարսնացի արքայի»

(5, էջ **226]:** (Հրամայում է նրան գրել Արշակունի և **ծիրանիներ** հագցնել և թագ կապել, որպեսզի թագավորին հարսնանա: Էջ **146):**

Երէց-ած. Ավագ, «...յաջորդեաց զաթոռն **երէց** եղբայր նորին Վրթանէս» **[5,** էջ **244]: (...** և աթոռը հաջորդեց նրա **մեծ** եղբայր Վրթանեսը: Էջ **157):**

Երէց-գոյ. Քահանա, «...ժողովեցան Բիտոն և Բիկենդ **երիցունք** ի Հոռմ քաղքէ...» **[5,** էջ **239]:** (...Ժողովեցան Բիտոն և Բիկենդ **երեցները** Հոռմ քաղաքից: Էջ **155):**

Գեղեցիկ-ած. «...**գեղեցիկ** մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն՝ զարդարես զբանն» **[5,** էջ **6]:** (...**գեղեցիկ** մտածութեամբ վառ և բորբոք պահելով քո խոհականության կայծը՝ զարդարում ես բանականությունը: Էջ **5):**

Միայն ածականի խոսքիմասային արժեքով գեղեցիկ բառը երկում գործածվել է երեսուն, իսկ մակբայի արժեքով՝ մեկ անգամ [7]:

Գեղեցիկ-մկբ. «Ո՜վ Սողոն Սողոն, **գեղեցիկս** բարբառեցար, ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան» **[5,** էջ **125]:** (Ո՜վ Սողոն, Սողոն, **գեղեցիկ** խոսեցիր, թե չի կարելի մարդու բարեբախտությանը երանի տալ մինչև նրա մահը: Էջ **81):**

Ինչ-գոյ. «Յաղագս թէ է **ինչ**՝ որ հաւասար, և է **ինչ**՝ որ օտարի Մովսիսէ պատմեն այլքն հնախօսք» **[5,** էջ **27]:** (Այն մասին, թե մյուս հնախոսները որոշ բաներում Մովսես /մարգարեին/ համաձայն են և որոշ բաներում տարբեր: Էջ **3):**

Ինչ- դեր. «Զի ոչ կարգք **ինչ** աստ լեալ յայտնի...» **[5,** էջ **137]:** (Որովհետև այստեղ ոչ հայտնի կարգեր են եղել... էջ **21):**

Այլ-դեր. «Բայց **այլ** ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց...» **[5,** էջ **137]:** (Բայց **ուրիշ** ոչ մի արիության ու քաջության գործ ցույց չտվեց... էջ **88):**

Այլ-շղկպ. «... հանգչին կատարեալքն արդարն ըստ այսմ մարգարէության ոչ ամենեքին, **այլ** յառաքինութեան ոգիք...[**5,** էջ **16]: (...** ըստ այս մարգարեության հիրավի հանգչում են, բայց ոչ

բոլորը, **այլ** առաքինությամբ կատարյալ հոգիները... էջ **13):**

Երկում **այլ** բառով գործածված է **153** դերանուն և **251** շաղկապ [**7,** էջ **103]:**

Անգամ-մկբ. «Զի թէպէտ և եմք ածու փոքր...և ընդ այլով յոլով **անգամ** նուաճեալ թագաւորութեանբ՝ սակայն... բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս...[**5.** էջ **10]:** (Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք /փոքր երկիր' ժողովուրդ/ ... և շատ **անգամ** օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված... էջ **8):**

Անգամ-եղ. բառ. «...աւերեալ գերեաց զաշխարհս մեր, մինչև զոսկերս **անգամ** հարցն բրեաց ի գերեզմանաց» [**5,** էջ **293]:** (...ավերեց մեր աշխարհը, մինչև **անգամ** մեր հայրերի գերեզմանները փորեց, ոսկորները հանեց: Էջ **190):**

Այժմ անդրադառնանք եռարժեք և քառարժեք բառերին:

Գոյական //ածական// մակբայ տարարժեք բառերի կիրառման դեպքում ընդգծվում է ածական խոսքի մասի իմաստի ընդլայնման երևույթը, իսկ երբ հանդես է գալիս ածական //մակբայ// նախադրություն պարունակող բառ, տեղի է ունենում մակբայ խոսքի մասի իմաստի ընդլայնում, որի նյութական իմաստը փոխվում է ոչ նյութական խոսքի մասի' նախադրության: Մ. Խորենացու պատմության մեջ հանդիպում են եռարժեք բառային իմաստ և խոսքիմասային արժեք արտահայտող զգալի թվով օրինակներ:

Ազատ-ած. Ընդարձակ, «....քաջ արանց է յարձակ դաշտի և յ**ազատ** տեղւոջ կռուել... » [**5,** էջ **290]:** (... քաջ տղամարդիկ կռվում են արձակ դաշտում և **ազատ** տեղում...էջ **188):**

Ազատ-գոյ. Ազնվական, «...յօտարութիւն վտարումն **ազատաց** և անթիւ նեղութիւնք ռամկաց» [**5,** էջ **365]:** (...դեպի օտարություն են աքսորվում **ազնվականները**, անթիվ նեղություններ են կրում ռամիկները: էջ **239):**

Ազատ-մկբ. «Բազում զոհութիւն Աստուծոյ մատուցանեմք... այլ **ազատ** ի մեղադրանաց ոչ թողումք... » [**5,** էջ **336]:** (Շատ

գոհություն ենք մատուցում աստծուն... բայց մեղադրանքից **ազատ** չենք թողնում... էջ **220)**:

Կենդանի -ած. «...ոչ արաացեն ձեռք իմ խոյր գազաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ **կենդանւոյ**» **(5.** էջ **294]**: (...իմ ձեռքերը խույր չեն կարի անարժան գազաթի համար, որ չի երկրպագում Քրիստոսին, **կենդանի** աստծուն: Էջ**101)**:

Կենդանի-գոյ. Անասուն.«...ջրոց առաւելուլն անօգուտ և նուազելն անհնարաւոր, երկրի անբերութիւնք պտղոց և անաճելութիւնք **կենդանեաց**, այլ և սասանմունք և դղրդմունք» **(5,** էջ **365]**: (...ջրերի անօգուտ ավելանալը և չափից դուրս պակասելը, երկրի պտղաբերությունը նվազած, **անասունների** աճելությունը պակասած, այլև երկրաշարժեր և սասանում: էջ **238)**:

Կենդանի-մկբ. «Այլ ի տեսչութենէն Աստուծոյ կերակրեալ լինէին ամիսս ութ ի ձկանցն, զոր ծովն ընկենոյր **կենդանիս**» **]5,** էջ **294]**: (Բայց Աստծու խնամքով նրանք ութ ամիս կերակրվեցին այն ձկներով, որ ծովը **կենդանի** ափ էր գցում: Էջ **191)**

Քաջ-ած. «...զի և ազգի ես նախնականի, և **քաջ** և արգասաւոր՝ ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս...» **(5,** էջ **6J:** (…որովհետև նախնական և **քաջ** ազգ ես, արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ էջ **6)**:

Քաջ-մկբ. «...և զմեր հեշտութիւն, որ ի կամակատարութենէ լեալ' **քաջ** գիտեմ խնդութիւն քեզ լեալ...»: **[5,** էջ **30]**: (...հավատացած եմ/**քաջ** գիտեմ, որ մեր բավականությունը, որ կունենանք /քո/ կամքը կատարելով, քեզ ևս ուրախություն կլինի...էջ **21)**:

Քաջ-գոյ. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին **քաջք...» [5, էջ 192]**: (Թե դու հեծնես որսի գնաս Ազատն ի վեր դեպի Մասիս, **քաջքերը** քեզ բռնեն տանեն: **Էջ 124-125)**:

Մօտ-ած., մկբ.. նախադր. խոսքիմասային արժեքներով.

Մօտ-ած. «...և ձեռագործ լիճ կառուցեալ. Յորոց օղն

քաղցրախառնութիւն փչեցեալ որ ի լճէն բերանք արձակին ի ծովն, և որք ի ծովէքն **մօտի** ելոյ որ ելանեն ստէպ ստէպ սղոխք օդոյ...» **[5, էջ 345]:** (...և շինված է արհեստական լիճ, որի պատճառով բարեխառն օդ է շնչում թե այնտեղից, ուր լճի ջրերը դեպի ծովն են հոսում, և թե ծովին **մոտ** տեղերից...էջ **227):**

Մօտ-մկբ. «Եւ **մօտ** անցեալ՝ աջողեցաւ ձգել զուինն...» **[5, էջ 107]:** (Եվ **մոտ** հասնելով՝ հաջողվեց սվինը գցել...էջ **68):**

Մօտ-նախադրութ. «...պատահէ նմա տեղի օթարանին **մօտ** առ դիրս սրբոյ Առաքելոյն» **[5, էջ 212]: (..** նրա գիշերելու տեղը խորանի ներսի դին, պատահեց սուրբ առաքյալի գերեզմանի **մոտ**: էջ **139):**

Կամ. գործածված է զոյական//բայ//շաղկապ խոսքիմասային արժեքներով.**Կամ** զոյ. «...ապա թէ ոչ է հաճոյ քեզ այս, և իւրեանց **կամաւ** դարձցին առ քեզ նախարարքս՝ ոչ արգելում» **[5, էջ 311]:** (Իսկ եթե այս քեզ հաճելի չէ. և նախարարներս իրենց **կամքով** կամենան դառնալ, ես արգելք չեմ լինի...էջ **202):**

Կամ-բայ. «...խորհուրդ ի մտի եդի գիտել, թէ ոյք ոմանք յառաջ քան զիս իցեն տիրեալ աշխարհիս Հայոց և ուստի նախարարութիւնքս որ աստ **կան**» **[5, էջ 30]:** (...միտքս դրի իմանալ, թե ինձանից առաջ ովքեր են տիրել հայոց աշխարհիս և որտեղից են այն նախարարությունները, որ այստեղ **կան**: էջ **21):**

Կամ-շաղկապ. «Իսկ վիշապազն բուսումն, **կամ** կատարելապէս վիշապանալն Բիւրասպեայ, որ ասի, է այս» **[5, էջ 92]:** (Իսկ վիշապներ բուսնելը **կամ** Բյուրասպիի կատարելապես վիշապանալը, որ ասում են, այս է: էջ **60):**

Ուստի բառը երկում օգտագործված է մակբայի, դերանվան և շաղկապի ձևաբանական արժեքներով:

Ուստի-մակբայ. «... և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, **ուստի** եկն» **[5, էջ 26]: (...** և նորից վերադառնում է արևելահարավ, որտեղից որ եկել էր: էջ **19):**

Ուստի-դերանուն. «Յօրինուած թագաւորութեանն, և թէ **ուստի** զնախարարութիւնսն կարգեաց» **[5, էջ 109]:**

(Թագավորության կազմակերպությունը, թե **որտեղից** հիմնեց նախարարությունները: էջ **70):**

Ուստի-շաղկապ. «Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռոմայեցւոց իշխանութեանն արշաւեաց, **ուստի** և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող» [**5,** էջ **197]:** (Պերոզ թագավորն արշավեց հռոմեացիների իշխանության վրա. **որի պատճառով** Պերոզ կոչումն ստացավ, որ նշանակում է հաղթող: էջ **127-128):**

Երկում հանդիպում է նաև մեկ բառ, որի ձևաբանական արժեքը տրոհվում է չորս խոսքի մասերի միջև՝ ըստ բառային իմաստի և շարահյուսական կիրառության, դա **իբրև**-ն է, կիրառվում է շաղկապ//նախադրություն//մակբայ// եղանակավորող բառ խոսքի մասերի արժեքներով:

Իբրև-շաղկապ. «Իսկ **իբրև** նեխեցաւ դի նորա' հրամայէ ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել» [**5,** էջ **50]:** (Բայց **երբ** դիակն սկսեց նեխել, հրամայեց գցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել: էջ **33):**

Իբրև- նախադրություն. «Յառաջեալ զճակատն իւր' **իբրև** զարծուի յերամս կաքաւուց խոյանայր» [**5,** էջ **171]:** (Իր զորքի ճակատը առաջ շարժելով սլանում էր **ինչպես** արծիվը կաքավների երամի վրա: էջ **109):**

Իբրև-մակբայ. «...չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ ... հանդերձ որդւովք իւրովք...արամբք զօրավորօք, թուով **իբրև** երեքհարիւր» [**5,** էջ **33]:** (...չվեց գնաց Արարադի երկիրը...իր որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով **մոտ** երեք հարյուր հոգի...էջ **23):**

Իբրև - եղանակավորող բառ. «Երանի իցէ յայնմ, որ հաւատայ յիս' **իբրև** ոչ իցէ նորա տեսանել զիս» [**5,** էջ **150]:** Երանի նրան, ով ինձ հավատում է, **թեպետ** տեսած չլինի: էջ **96):**

Այսպիսով' քննվող երկը ցույց է տալիս, որ՝

1. հին, նույնիսկ նախագրային շրջանում (մեր նշած բառերի մեծ մասը Մ. Խորենացու պատմության մեջ տեղ է գտել հայ ժողովրդական բանահյուսությունից՝ **ծիրանի, գեղեցիկ, քաջ** և այլն) հայերենում գոյություն է ունեցել բառաքերականական բազմիմաստության

երևույթը, երբ միևնույն բառը հանդես է գալիս երկու և ավելի ձևաբանական արժեքների համատեղումով.

2. կատարվել են խոսքիմասային լիակատար կամ մասնակի փոխանցումներ, եթե բառը, զրկվելով իր նախնական նշանակությունից, վերածվում է այլ խոսքի մասի, ուրեմն փոխանցումը լիակատար է, իսկ եթե այն պահպանում է իր նախկին խոսքիմասային արժեքը, ուրեմն փոխանցումը մասնակի է.

3. խոսքիմասային երկարժեք բառերը համատեղել ենածական//գոյական, ածական//մակբայ, մակբայ//նախադրություն, մակբայ//շաղկապ խոսքի մասերը.

4. եռարժեք բառերը նյութական իմաստ ունեցող խոսքի մասեր են՝ գոյական//ածական//մակբայ, կամ էլ դրանցից մեկն ունի սպասարկու նշանակություն՝ ածական//մակբայ//նախադրություն.

5. նյութական խոսքի մասերից այն միավորները, որոնցում առկա է հարաբերության իմաստ, կարող են դառնալ սպասարկու բառեր՝ նախադրություններ, շաղկապներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Լ.Ա. Խոսքիմասային տարարժեքությունը արդի հայերենի կայուն կապակցություններում. - Եր., 1996:

2. Ղարիբյան Ս. Նյութական խոսքի մասերի փոխանցումը սպասարկու բառերի. - Եր., 2009: -163 էջ:

3. Խաչատրյան Լ. Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր). - Եր., 2003. - էջ 5-6:

4. Աղայան Է. Ընդհանուր և հայկական բառագիտություն. - Եր., 1984. էջ 101:

5. Խորենացի Մ. Հայոց պատմութիւն, Տփղիս, 1913: Այս գրքից մեջբերումների էջը կնշվի շարադրանքում:

6. Խորենացի Մ. Հայոց պատմություն. Թարգման., ներած, և ծանոթ. Ստ. Մալխասյանցի. - Եր., 1940:
7. Խաչատրյան 0. Մ. Խորենացու «Հայոց պատմություն» համախականության բառարան. - Եր., 1986., էջ 122

ВЫРАЖЕНИЕ РАЗЛИЧНЫХ МОРФОЛОГИЧЕСКИХ ЗНАЧЕНИЙ СЛОВА В ЛЕКСИКЕ «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

В дописьменную эпоху армянского языка имело место явление лексикограмматической полисемии, при которой одно слово имело два и более морфологических значений. Происходили полные или частичные лексико-грамматические переходы.

Если слово теряет одно из своих первоначальных значений и переходит в другую часть речи, переход является полным; если же оно сохраняет прежнюю лексико-грамматическую значимость, то переход частичный. Слова, имеющие два лексико-грамматических значения, совмещают признаки прилагательного и существительного, прилагательного и наречия, наречия и предлога. Слова, имеющие три лексико-грамматических значения, совмещают признаки существительного, прилагательного и наречия, либо одно из них имеет вспомогательное значение, например, прилагательного, наречия и предлога.

VARIOUS MORPHOLOGICAL MEANINGS OF WORDS IN THE HISTORY OF ARMENIA BY M. KHORENATSY

Keywords: lexico-grammatical meanings, morphological meaning, initial meaning of the word, noun, adjective

In the Old Armenian language (grabar) some words had two or more morphological meanings. Words which have lost their meaning are used as other parts of speech.

Words which have two lexico-grammatical meanings are used as adjectives and nouns, adjectives and adverbs, adverbs and prepositions.

Words which have three lexico-grammatical meanings are used as nouns, adjectives and adverbs or adjectives, adverbs and prepositions.

ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Հակոբյան Ֆրիդա

Արդի գիտության նորագույն նվաճումներին հաղորդակից լինելը, տեխնիկական համապատասխան միջոցների գործնական կիրառությունը հայ լեզվաբանության մեջ կարող են զարգացման լայն հեռանկարներ բացել ավանդական այնպիսի բնագավառներում, ինչպիսին համաբարբառների կազմությունն է:

Համաբարբառները, ինչպես հայտնի է, բնագրային օրինակներով ներկայացնում են հեղինակի բառապաշարը՝ ըստ այբբենական հաջորդականության, տալիս բառերի գործածության հաճախությունը: Վերջին տասնամյակներում կազմվել և լույս են ընծայվել ինչպես հինգերորդ դարի հայ մատենագրության, այնպես էլ հետագա շրջանի մի շարք հիմնականում գրաբարագիր հեղինակների համբարբառներ:

Իհարկե, մեր նպատակներից դուրս է անդրադառնալ նախորդ շրջանում կազմված համաբարբառներին՝ ըստ ամենայնի արժևորելով դրանք, կամ խոսել դրանցում եղած բացթողումների ու նկատված թերությունների մասին: Պարզապես կարող ենք փաստել, որ, առանց տեխնիկական որևէ օժանդակության, կատարվել է հսկայական աշխատանք, սակայն ժամանակները փոխվել են, և տեխնիկայի աննախադեպ առաջընթացը հասցրել է նրան, որ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու համաբարբառների կազմության նախկինում ընդունված ավանդական եղանակները: Որոնման

---

* Երիտասարդ լեզվաբաններ. գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2016, էջ 57-64:

սահմանափակ հնարավորություններ ունեցող նախկին մեքենագիր համաբարբառներին կարող են փոխարինել համակարգչային զանազան ծրագրերով ստեղծված, որոնողական ճկուն համակարգ ունեցող, համացանցում հասանելի էլեկտրոնային համաբարբառները:

Մեծամասամբ էլեկտրոնային եղանակով կազմվում են օտարալեզու համաբարբառները, որոնք պայմանականորեն կարելի է երկու խմբի բաժանել. համաբարբառներ, որոնք ներկայացնում են որևէ առանձին հեղինակի բառապաշարը (Ուիլյամ Շեքսպիր, Թոմաս Գրեյ, Ջոն Քիթս, Ջերարդ Հոփքինս, Ուիլյամ Բլեյք), և գրականության պատմության որևէ շրջանը ներկայացնող հեղինակների համաբարբառներ («Անգլիական պոեզիայի համաբարբառ»):

Ցավոք սրտի, հայերեն էլեկտրոնային համաբարբառների մասին խոսելը դեռ վաղ է, որովհետև հիմա էլ կազմվելուց հետո դրանք շարունակում են տպագրվել առանձին գրքով, կամ լավագույն դեպքում տպագիր համաբարբառը Microsoft Word փաստաթղթի տեսքով տեղադրվում է որևէ կայքում, օրինակ՝ այսպես է ներկայացվում Կիրակոս Գանձակեցու համաբարբառը լեզվի ինստիտուտի կայքում:

Հայաստանի ամերիկյան համալսարանի թվաշնային գրադարանում էլ փորձ է արվում մեքենական եղանակով կազմել էլեկտրոնային համաբարբառ, սակայն ներկայացված է միայն Եղիշեի պատմությունը, այն էլ ոչ թե համաբարաբառը, այլ երկում գործածված բառերի և բառաձևերի՝ այբբենական հաջորդականությամբ դասավորված ցանկը:

Կարո՞ղ են սրանք էլեկտրոնային համաբարբառներ համարվել և օրինակ ծառայել հետագայում կազմվելիք համաբարբառների համար: Կարծում ենք՝ ո՛չ: Տպագիր համաբարբառի բովանդակության ներկայացման ձևաչափը փոխելը դեռևս չի նշանակում բովանդակության փոփոխություն, իսկ էլեկտրոնային համաբարբառը տպագիրից տարբերվում է հենց բովանդակությամբ:

Էլեկտրոնային համաբարբառների կազմության համար պետք է.

ա. մշակել դրանց կազմության սկզբունքները՝ հաշվի առնելով տպագիր համաբարբառներում եղած սահմանափակումները և նպատակ ունենալով վերացնել դրանք,

բ. արդեն ստեղծված համաբարբառները դարձնել էլեկտրոնային,

գ. ընտրել այն հեղինակներին, որոնց երկերի համաբարբառների կազմությունը մյուսների համեմատությամբ ավելի կարևոր է,

դ. ստեղծել լեզվաբանի աշխատանքը մեծ չափով ավտոմատացնող ծրագրային ապահովման համակարգ:

Նախ տեսնենք, թե ինչ եղանակով և որտեղ կարող ենք ներակայացնել էլեկտրոնային համաբարբառները: Տրամաբանական է, որ ժամանակի ընթացքում առավել մեծ թվով հեղինակների համաբարբառներ են կազմվելու և տվյալների հենքը շարունակ մեծանալու է, ուստի նպատակահարմար է դրանք որևէ կայքում տեղադրելու փոխարեն ստեղծել հատուկ համաբարբառների համար նախատեսված նոր կայք: Այստեղ լրացուցիչ տեղեկություններ կտրվեն արդեն կազմված և մոտ ապագայում նոր կազմվելիք համաբարբառների, դրանց օգտագործման եղանակների և այլնի մասին:

Կայքի գլխավոր բաժիններից առաջինը կլինի գրադարանը, որտեղ թվային տարբերակով կներկայացվեն հեղինակների այն ստեղծագործությունները, որոնց համաբարբառները կազմվել են: Սա ընթերցողին այս կամ այն ստեղծագործությունն առցանց կարդալու հնարավորություն կտա, իսկ լեզվաբանը ազատ կարող է օգտվել այդ տեքստից հետազոտական աշխատանքներ կատարելիս:

Կայքի երկրորդ և կարևորագույն հատվածը կլինի համաբարբառների բաժինը: Սովորաբար տպագիր համաբարբառում բառերը ներկայացվում են այբբենական դասավորվածությամբ, էլեկտրոնայինում կարող ենք օգտվողին

ընտրելու հնարավորություն տալ. բառերը այբբենական հաջորդականությա՞մբ դասավորվեն, թե՞ ըստ գործածության հաճախության: Այնուհետև, նպատակահարմար է ներկայացնել հեղինակի բառապաշարը առանձին ստեղծագործություններում եղած բառերը ընդհուպ բոլոր ստեղծագործություններում եղած ամբողջական բառապաշարը հիպերտեքստային հղումներով, գլխաբառերի տակ թեքվող խոսքի մասերի դեպքում դնել բառաձևերը, իսկ բառաձևերի տակ՝ բնագրային համապատասխան օրինակները: Ներկայումս եղած օտարալեզու էլեկտրոնային համաբարբառների մեծագույն մասում, ըստ այբբենական հաջորդականության, դասավորված են ոչ թե բառերը, այլ բառաձևեր: Պատճառն այն է, որ հեշտությամբ ցանկացած տեքստում գործածված բառերը կարելի է դասավորել այբբենական հաջորդականությամբ, իսկ այդ համաբարբառները կազմվում են մեքենական եղանակով, սակայն սա մեզ համար ընդունելի չէ: Ճիշտ է վերականգնել գլխաբառը և նոր միայն դրա տակ ներկայացնել համապատասխան բառաձևը:

Դրանից բացի՝ օտարալեզու համաբարբառների մեծագույն մասում, հիպերտեքստային հղումներից բացի, չկա բառը որոնելու հնարավորություն: Ենթադրենք՝ որևէ մեկին հետաքրքրում է **անրջել** բայի գործածությունը: Համապատասխան բառացանկերում կարդալու փոխարեն նա կարող է որոնել այդ բառը, ընտրել տեքստերի ծավալը, որոնցում ցանկանում է որոնել և տեսնել դրա գործածության բոլոր օրինակները: Սա ևս անչափ կարևոր նոր հնարավորություն է, որը պետք է ունենան հայերեն էլեկտրոնային համաբարբառները:

Այժմ անդրադառնանք ձևային և բովանդակային այն տարբերություններին, որ հանդես կբերեն էլեկտրոնային համաբարբառները նախորդների համեմատությամբ: Այսպես՝ օգտագործման դյուրության տեսակետից էլեկտրոնայիններն այն առավելությունը կունենան, որ հարկ չի լինի թերթելով գտնել բառը: Ավելին՝ եթե մեզ անհրաժեշտ է ձևաբանական փոփոխության ենթարկված որևէ բառաձև, պետք է վերականգնել

դրա ուղիղ ձևը, ապա նոր միայն գլխաբառը գտնել տպագիր համաբարբառում: Սա բավական լուրջ խնդիր է հատկապես գրաբարի համաբարբառներում բառաձևեր որոնելիս, քանի որ գլխաբառը վերականգնելու համար պետք է շատ լավ իմանալ գրաբարի քերականությունը: Մինչդեռ էլեկտրոնային համաբարբառում կարելի է որոնել ցանկացած բառ ու բառաձև և որոնման արդյունքում գլխաբառն իր բառաձևերով կհայտնվի անմիջապես:

Մեքենագիր համաբարբառներում օրինակները բերվում են կիսատ՝ հիմնականում կարճ բառակապակցություններով: Սրա պատճառով հետազոտողը շատ հաճախ ստիպված է բառը փնտրել բնագրում՝ դրա՝ համատեքստում ունեցած իմաստը ճշտելու համար: Էլեկտրոնային համաբարբառներում այս խնդիրը ևս հեշտությամբ լուծելի է: Իբրև ելակետ՝ բոլոր բառերը կարելի է ներկայացնել նախադասությամբ՝ տալով օգտվողին հնարավորություն ընդլայնելու նախադասությունը. ծավալային որևէ սահմանափակում չկա:

Քանի որ մեքենագիր համաբարբառները կազմվում են մարդկանց կողմից, նույնիսկ մեծագույն ուշադրության դեպքում հնարավոր է՝ դուրս մնան բնագրային որոշ օրինակներ կամ դիտավորյալ չներկայացվեն բառահոդվածի տակ ծավալը չմեծացնելու նպատակով: Էլեկտրոնային համաբարբառը այս խնդիրը ևս չի ունենա. բոլոր օրինակները տվյալների հենքից կընտրվեն մեքենական եղանակով և կպատկերվեն ամբողջական նախադասություններով:

Մեքենագիր համաբարբառները լրջորեն սահմանափակում են հետազոտողի հնարավորությունները լեզվական այս կամ այն երևույթը որևէ ժամանակաշրջանում ուսումնասիրելու առումով: Օրինակ՝ որևէ բառի գործածությունը հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ քննելու համար նա ստիպված է տվյալ բառը փնտրել բոլոր պատմիչների համաբարբառներում, գտնելուց հետո համեմատել դրանք, հաճախության ցանկերից գտնել հաճախության ցուցիչը, կարդալ

օրինակները, երբեմն նաև՝ բնագրերի համապատասխան հատվածները: Այս ամենի փոխարեն էլեկտրոնային համաբարբառում կարելի է ընդամենը որոնել ցանկացած բառը՝ նախապես նշելով այն հեղինակներին, որոնց բնագրային օրինակները ցանկանում ենք տեսնել:

Ըստ էության՝ մեքենագիր համաբարբառները կարևոր են միայն բառագիտական մակարդակում, և դրանք որևէ կերպ հնարավոր չէ օգտագործել քերականական իրողությունների ուսումնասիրության ժամանակ: Ենթադրենք՝ որևէ մեկին հետաքրքրում է անորոշ դերբայի կիրառությունը Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» ժողովածուում: Տպագիր համաբարբառը որևէ կերպ օգտակար լինել չի կարող, իսկ ահա էլեկտրոնային համաբարբառում բավական է որոնել անորոշ դերբայի **–ել, -ալ** վերջավորություններն առանձին և համապատասխան հոլովաձևերով, և դրա գործածության բնագրային բոլոր օրինակները կպատկերվեն անմիջապես: Այսպես կարելի է ուսումնասիրել քերականական շատ իրողություններ. սա մեկն է այն նոր հնարավորություններից, որ կունենան էլեկտրոնային համաբարբառները:

Այսպիսով՝ հայերեն էլեկտրոնային համաբարբառներում, ինչպես տեսանք, բառերը ներկայացվելու են գլխաբառերով, յուրաքանչյուր գլխաբառի տակ տրվելու են համապատասխան բառաձևերը, բառաձևերի տակ՝ բնագրային օրինակները: Գլխաբառերը դասավորվելու են ըստ այբբենական հաջորդականության կամ հաճախության, տրվելու է բառի որոնման հնարավորություն: Ակնհայտ է, որ տպագիրների համեմատությամբ էլեկտրոնային համաբարբառները հանդես կբերեն զգալի տարբերություններ և կունենան մի շարք առավելութուններ:

Նոր համաբարբառներ կազմելուց առաջ նախևառաջ անչափ կարևոր է արդեն եղած տպագիր համաբարբառները (հատկապես մատենագիրների) դարձնել էլեկտրոնային ու տեղադրել այդ կայքում՝ ըստ անհրաժեշտության շտկելով

դրանցում եղած վրիպակները և, որ ամենակարևորն է, ընդլայնելով բնագրային օրինակների ծավալը:

Ցանկացած դեպքում համաբարբառի կազմությունը բարդ է և աշխատատար, ուստի անհրաժեշտ է ճշտել՝ ի՞նչ չափով է կարևոր տվալ համաբարբառի կազմությունը: Այն դեպքում, երբ մենք չունենք Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի, Վ. Տերյանի և հայ պոեզիայի ականավոր մյուս ներկայացուցիչների համաբարբառները, որոնք պարզապես անհրաժեշտություն են այս հեղինակների լեզվի և ոճի ուսումնասիրության, բառագործածության, պատկերավորմանան համակարգի քննության համար, շարունակում են կազմվել գրաբարագիր այնպիսի հեղինակների երկերի համաբարբառներ, որոնք, վերոնշյալների համեմատությամբ, պակաս կարևոր են:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ ստեղծել հայ դասական պոեզիայի կամ արձակի էլեկտրոնային համաբարբառը, որտեղ ներկայացված կլինեն գոնե դասական հեղինակները: Ավելին՝ ընդլայնելով ընդգրկման սահմանը՝ ցանկալի է ներառել նաև ժամանակակից հեղինակներին՝ պատկերացում կազմելու համար արդի հայ պոեզիայի զարգացման միտումների մասին գոնե լեզվագործածության առումով: Այդ կերպ կարելի է տեսնել, թե խոսքի պատկերավորման համար ժամանակակից հեղինակների գործերում առավել հաճախադեպ որ բառերն են, կարելի է նույնիսկ համեմատել նախորդ և ժամանակակից այլ հեղինակների՝ նույն թեմայով գրված ստեղծագործութունների բառապաշարի հետ:

Օրինակ՝ Վիոլետ Գրիգորյանի «Սեր» կոչվող պոեմի ամենահաճախադեպ գոյականները *մարմին (19) սեր (7), պաչիկ, տոտիկ (6), բառերն են, ամենահաճախադեպ բայերը՝ արտաշնչել (5), ճոճել (4), համբուրել (4), ծմլվել (3)* բառերը: Իսկ ահա Վ. Տերյանի բանաստեղծական չորս շարքերում միասին վերցրած («Մթնշաղի անուրջներ», «Փշե պսակ», «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ») մարմին բառը գործածվել է ընդամենը տասը անգամ, իսկ ամենահաճախ գործածական գոյականները *սիրտ, կյանք,*

հոգի բառերն են, բայերից ամենաշատը գործածվում են *կանչել, սիրել, երգել* բառերը: Այսպես կարելի է հակադրել սիրո տերյանական ընկալումը հայ պոեզիայի էրոտիկ թևի ներկայացուցիչ բանաստեղծուհու՝ նյութական իմաստ արտահայտող բառերով սեր զգացմունքի մարմնական դրսևորմանը:

Քանի որ հատկապես արձակագիրների մեծածավալ ստեղծագործությունների համաբարբառների կազմությունը ենթադրում է հսկայական աշխատանք, անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել՝ ուրիշ լեզուների համար արդեն ստեղծված համակարգչային ծրագրերը ի՞նչ չափով օգտակար կլինեն մեզ համար, և ի՞նչ նոր ծրագրեր մենք կարող ենք ստեղծել: Օրինակ՝ կան շատ կայքեր, որոնք հայերեն տեքստը հաջողությամբ վերածում են առանձին բառերի, դասավորում այբբենական հաջորդականությամբ, շատ ծրագրերով էլ կարելի է անմիջապես տեսնել որոնված բառի բնագրային բոլոր օրինակներ: Ինչ խոսք, այս կերպ մեծապես հեշտանում է համաբարբառ կազմող լեզվաբան աշխատանքը:

Անշուշտ, կարելի է հաջողությամբ ստեղծել նաև հատուկ ծրագրեր հենց հայերեն համաբարբառների կազմության համար (լեմատիզացիոն ծրագիր), սակայն քանի որ դրանք համաբարբառների կազմության լեզվաբանական կողմին չեն առնչվում, այժմ դրանց չենք անդրադառնա:

Այնուամենայնիվ, ցանկացած դեպքում հնարավոր չէ ամբողջապես մեքենայացնել համաբարբառների կազմությունը, քանի որ համակարգչային ծրագիրը գործնականում չի կարող անթերի կատարել լեզվաբանի աշխատանքը. որևէ ծրագիր չի կարող առանձնացնել հարադրավոր բայերն ու դարձվածքները: Ուստի բոլոր տեսակի եղած և նորաստեղծ համակարգչային ծրագրերը պետք է ընդամենը հեշտացնեն լեզվաբանի աշխատանքը, իսկ համաբարբառները պետք է շարունակեն կազմվել բացառապես լեզվաբանների կողմից:

Միանշանակ, վաղուց արդեն ժամանակն է, որ մեզանում համաբարբառների կազմությունը թևակոխի որակական զարգացման միանգամայն նոր փուլ. նոր մեթոդներով և տեխնիկական նորագույն միջոցներով ստեղծվեն ձևով և բովանդակությամբ նոր համաբարբառներ, որոնք կապահովեն փաստական հսկայական նյութ լեզվական տարբեր իրողությունների քննության համար:

ԱՅՈ-ՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Ղուկասյան Սնակ

Նոր Կտակարանում Մատթէոսի Ավետարանը առաջինն է և ծավալով ամենամեծը՝ բաղկացած է 28 գլուխներից: Բոլոր չորս Ավետարաններն էլ ունեն իրենց խորհրդանիշը և գույնը: Մատթէոսի Ավետարանի խորհրդանիշը մարդն է, գույնը-սպիտակը:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութը քաղված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից 1994 թվին հրատարակած Աստվածաշնչներից: Արևելահայերեն Աստվածաշնչում կա 136 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում՝ 140:

Մատթէոսի Ավետարանում կան տարատեսակ հարցական նախադասություններ՝ ինչու-որ, այո-ոչ, ընտրանքային, երկկերպ, երկկերպ ընտրանքային և եղանականիշ: Քանակով բոլորից շատը ինչու-որ հարցումներն են: Այո-ոչ հարցումները քանակով երկրորդն են:

Այստեղ որպես ելակետային վերցվում են արևելահայերենի հարցումները, ապա զուգահեռաբար տրվում են նաև արևմտահայերենինը:

Այս Ավետարանում կան մենաբևեռ և երկբևեռ հարցական նախադասություններ:

* «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2016, էջ 213-218:

ՄԵՆԱԲԵՎԵՌ <u>ԱՅՈ-ՈՉ</u> ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Նշված Ավետարաններում կա 27 մենաբևեռ <u>այո-ոչ</u> հարցական նախադասություն, այսինքն՝ մեկ հարցումով նախադաություն: Այստեղ կան տարատեսակ պարզ և բարդ կառուցվածքի ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական հարաբերություններով նախադասություններ: Բարդ ստորադասական նախադասությունները հանդես են գալիս ուղիղ խնդիր, ենթակա և պարագա երկրորդական նախադասություններով: Բոլորից շատ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ հարցումներն են:

Բերենք այդ հարցումները.

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ.

1) Յիսուս իր աշակերտներին ասաց. «Այս բոլորը իմացա՞ք» - Ըսավ անոնց Յիսուս. «Հասկցա՞ք այս ամէն բաները» (13,5):

2) Եւ Յիսուս կանգնեց կուսակալի առաջ. կուսակալը հարցրեց նրան ու ասաց. «Դո՞ւ ես հրեաների թագաւորը» - Յիսուս կուսակալի առջեւ կայնեցաւ եւ կուսակալը հարցուց անոր ու ըսաւ. «Հրեից թագաւորը դո՞ւն ես» (27, 11):

3) Իսկ Յիսուս նրան ասաց. «Ընկե՛ր, սրա՞ համար դու եկար» - Յիսուս ըսաւ անոր - «Ընկեր, ինչո՞ւ համար եկար դուն» (26, 50): Այստեղ արևելահայերենի <u>այո-ոչ</u> հարցման դիմաց արևմտահայերենում ունենք <u>ինչո՞ւ-ող</u> հարցում:

4) Նա եկաւ աշակերտների մօտ եւ նրանց քնի մէջ գտաւ ու Պետրոսին ասաց. «Այդպէս, չկարողացա՞ք մէկ ժամ արթուն մնալ ինձ հետ: ...» - Երբ եկաւ աշակերտներուն, զանոնք քնացած գտաւ եւ ըսաւ Պետրոսին. «Այդպէս մէկ ժա՞մ ալ չկրցաք ինծի հետ արթուն կենալ:...» (26, 40):

5) Երբ նրանք Կափառնայում եկան, երկդրամեան տուրքը պահանջողները մոտեցան Պետրոսին եւ ասացին. «Ձեր վարդապետը երկդրամեանը չի՞ տալիս» – Երբ անոնք Կափառնայում եկան, երկդրամեան տուրքը առնողները Պետրոսին եկան ու ըսին. «Ձեր վարդապետը երկդրամեանը չի՞ հատուցաներ» (17, 23):

6) Յիսուսին հարցրին ու աս ացին. «Շաբաթ օրը թույլատրելի՞ է բժշկել». որպէսզի նրան ամբաստանեն – Հարցուցին անոր. «Շաբաթ բժշկել արժա՞ն է» որպէսզի անոր վրայով ամբաստանութիւն ընեն (12, 10):

7) Այն ժամանակ Յիսուս ամբոխին ասաց. «Սրերով եւ մահակներով իմ դէմ ելել-բռնելու ինձ իբրեւ մի ավազակի՞:...» – Այն ատեն Յիսուս ըսաւ այն բազմութեանը. «Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով զիս բռնելու:...» (26, 55):

Բարդ ստորադասական հարցումներ.

1) Այն ժամանակ Պիղատոսը նրան ասաց. «Չե՞ս լսում, ինչքան դրանք քո դէմ են վկայում» – Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր. «Չե՞ս լսեր թէ ո՞րչափ քեզի դէմ կը վկայեն ատոնք» (27, 13):

2) Յիսուս նրանց ասաց. «Հաւատո՞ւմ էք, որ ես այդ բանը ձեզ կարող եմ անել» – Յիսուս անոնց ըսաւ. «Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել» (9, 28):

3) Եւ փարիսեցիները մոտենալով նրան՝ փորձեցին եւ ասացին. «Օրինաւո՞ր է, մէկն իր կնոջը արձակի ամէն մի յանցանքի պատճառով» – Փարիսեցիները անոր մօտենալով՝ զանիկա փորձեցին ու հարցուցին. «Արժա՞ն է, որ մարդ մը իր կինը արձակէ ամէն պատճառի համար» (19, 3):

4) Երբ քահանայապետներն ու օրէնագետները տեսան այն սքանչելիքները, որ նա արեց, եւ մանուկներին, որ տաճարի մէջ աղաղակում էին ու ասում՝ օրհնութիւն Դաւթի Որդուն,

բարկացան եւ ասացին. «Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում» – Երբ քահանայապետները ու դպիրները տեսան անոր ըրած հրաշքները եւ տղաքը, որոնք տաճարին մէջ ու կ'ըսէին՝ «Ովսա'ննա, Որդի Դաւթին», բարկացան ու ըսին անոր. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ատոնք» (21, 15-16):

5) Յիսուս նրանց ասաց. «Այո', դուք չէ՞ք կարդացել, թէ երեխաների ու ծծկերների բերանով օրհնութիւն կատարեցիր» – Յիսուս ըսաւ անոնց. «Այո, բնաւ չէ՞ք կարդացեր, թէ Մանկաց ու կաթընկեր տղայոց բերնէն գոհութիւն կատարեցիր» (21, 16):

6) Ծառաները նրան ասացին. «Կամենո՞ւմ ես, որ գնանք ու քաղենք հանենք այն» – Ծառաները իրեն ըսին. « Հիմա կ'ուզե՞ս որ երթանք զանոնք քաղենք» (13, 28):

7) Նա պատասխանեց նրանցից մէկին եւ ասաց. «Կամ թէ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ» – Անիկա պատասխան տուաւ անոնցմէ մէկուն ու ըսաւ. «.... . կամ թէ քու աչքդ չա՞ր է, որ ես բարեար եմ» (20, 15):

8) Եւ նա նրանց ասաց. «.... Կամ թէ Օրէնքում չէ՞ք կարդացել, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը եւ անմեղ են: ...» – Ան ալ անոնց ըսաւ. «.... Կամ թէ օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր, որ քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ են:...» (12, 5):

9) Այն ժամանակ նրա աշակերտները մօտեցան եւ ասացին նրան. «Գիտե՞ս, որ փարիսեցիները, երբ այդ խօսքը լսեցին, գայթակղուեցին» – Այն ատէն իր աշակերտները եկան, ըսին իրեն. «Գիտե՞ս թէ փարիսեցիները գայթակղեցան, երբ լսեցին այդ խօսքը» (15, 12):

գ) Բարդ ենթաստորադաս հարցումներ.

1) Այն ժամանակ Յիսուս նրան ասաց. «.... Եւ կամ կարծո՞ւմ ես, թէ չեմ կարող իմ Հօրն աղաչել, որ նա հիմա ինձ համար այստեղ

հացնի հրեշտակների աւելի քան տասներկու գնդեր:...» – Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «.... Կը կարծես թէ չե՞մ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, որ ինծի հացնէ տասներկու գունդէն աւելի հրեշտակներ:...» (26, 53):

2) Իսկ ուրիշներ ասում էին. «Թո'ղ, տեսնենք թէ Եղիան կը գա՞յ, որ դրան փրկի» –Միւսները ըսին. «Թող տուր, տեսնենք թէ Եղիան պիտի գա՞յ ատիկա ազատելու» (27, 49): Այս օրինակում արևմտահայերենը բարդ ստորադասական է:

3) Քահանայապետը խօսեց եւ նրան ասաց. «Երդուեցնում եմ քեզ կենդանի Աստուծով, որ մեզ ասես, թէ դո՞ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին» – Ուստի ելաւ քահանայապետը ու ըսաւ անոր. «Կենդանի Աստուծմով քեզ կ'երդմնցնեմ, որ մեզի ըսես, թէ դո՞ւն ես Քրիստոսը՝ Որդին Աստուծոյ» (26: 63):

դ) Համադասական հարցում, որի առաջին մասը ստորադասական է.

1) Այն ժամանակ Յիսուս Գալիլիայից Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ՝ նրանից մկրտուելու, իսկ Յովհաննէսն ընդդիմացաւ ու ասաց. «Ի'նձ պետք է, որ քեզնից մկրտուեմ, եւ դու ի՞նձ մօտ ես գալիս» – Այն ատեն Յիսուս Գալիլիայէն Յորդանան եկաւ Յովհաննէսին, որպէսզի անկէ մկրտուի: Յովհաննէս կ'արգիլէր զանիկա ու կ'ըսէր – «Ինծի պէտք է որ քեզմէ մկրտուիմ ու դուն ինծի՞ կու գաս» (3, 13-14):

ե) Բազմաբարդ հարցումներ, որոնցում կան տարաբնույթ համադասական և ստորադասական հարաբերություններ

1) Յիսուս նրանց ասաց. «Սուրբ Գրքերում երբևիցէ չէ՞ք կարդացել այն վէմը, որ կառուցողները անարգեցին, նա' է, որ եղաւ անկիւնաքար. Տիրոջից եղաւ այս, եւ մեր աչքին սքանչելի է:...» – Ըսաւ անոնց Յիսուս. «Բնաւ չէ՞ կարդացեր գրքին մէջ, Այն քարը

զոր շինողները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ: Ասիկա Տէրոջմէն եղաւ եւ զարմանալի է մեր աչքերունք» (21, 42):

2) Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ նա, ով սկզբից ստեղծեց, արու և էգ արեց նրանց եւ ասաց. դրա համար տղամարդը պիտի թողնի հօրը եւ մօրը ու պիտի գնայ իր կնոջ ետեւից. եւ երկուսը մէկ մարմին պիտի լինեն:...»– Անիկա ալ անոնց ըսաւ. «Չէ՞ք կարդացեր թէ ան որ սկիզբէն ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց զանոնք», ու աւելցուց. «Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ եւ իր կնոջ պիտի յարի ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան:...» (19, 4-5):

3) Այն ժամանակ տէրը կանչեց նրան եւ ասաց. «Չար ծառայ, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ, իսկ պէտք չէ՞ր, որ դու գթայիր քո ծառայակցին, ինչպէս ես էլ քեզ գթացի» – Այն ատեն անոր տէրը կանչեց զանիկա ու ըսաւ. Չա°ր ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզ շնորհեցի, ինծի աղաչելուդ համար. ուրեմն պէտք չէ՞ր որ դու ալ քու ծառայակիցիդ ողորմէիր, ինչպէս ես քեզի ողորմեցայ (18, 32-33):

4) Եւ նա պատասխանեց ու նրանց ասաց. «Տեսնո՞ւմ էք այդ ամէնը. Ճշմարիտ եմ ասում ձեզ, այդտեղ չպիտի մնայ քար քարի վրայ, որ չքանդուի» – Յիսուս անոնց ըսաւ. «Կը տեսնե՞ք այդ ամէն բաները. ահա կ'ըսեմ ձեզի, Քար քարի վրայ պիտի չմնայ, որ չքակուի» (24, 2):

5) Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Չէք իմանում՝ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ կամ մկրտուել այն մկրտութեամբ, որով ես մկրտուելու եմ» - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ . «Չէք գիտեր, թե ի'նչ կը խնդրէք: Կրնա՞ք խմել այն գաւաթը որ ես պիտի խմեմ, կամ այն մկրտութիւնով մկրտուիլ, որով ես պիտի մկրտուիմ» (20, 22):

6) Յիսուս պատասխանեց նրանց ու ասաց. «.... Բայց մեռելների յարութեան մասին չէ՞ք կարդացել Աստուծոյ ձեզ ասուածը, որ ես

Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը. Եւ Աստուած մեռելների Աստուածը չէ, այլ՝ կենդանիների» – Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ. «.... Բայց մեռելներուն յարութիւն առնելուն համար չէ՞ք կարդացեր Աստուծմէ ձեզի ըսուած խօսքը. ես եմ Աբրահամին Աստուածը եւ Իսահակին Աստուածը ու Յակոբին Աստուածը: Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն» (22, 31-32):

ԵՐԿՈՒ <u>ԱՅՈ-ՈՉ</u>-ՈՎ ԵՐԿԲԵՎԵՌ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Նշված Ավետարաններում երկու <u>այո-ոչ</u>-ով կան 2 հարցական նախադասություններ:

Ահա դրանք.

1) Յիսուս ասաց. «Դեռևս դո՞ւք էք անհասկացող էք. չէ՞ք իմանում, թէ ամէն ինչ, որ բերանն է մտնում, որովայն է գնում եւ դուրս է ելնում:...» – Յիսուս ըսաւ. «Դո՞ւք ալ տակաւին անմիտ էք ու չէ՞ք հասկնար, թէ ամէն ինչ որ բերանը կը մտնէ, փորը կ'երթայ ու արտաքնոցը կը ձգուի:...» (15, 15-17):

2) Եւ գալով իր գաւառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպէս որ նրանք զարմանում ու ասում էին. «... Սա հիւսնի որդին չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչւում. եւ սրա եղբայրները՝ Յակոբոս, Յովսէս, Սիմոն եւ Յուդա:...» – Եւ գնաց իր գաւառը ու անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ. անոնք ալ կը զարմանային ու կ'ըսէին. «.... Ասիկա հիւսնին որդին չէ՞. ասոր մայրը Մարիամ չի՞ կոչուիր: Ասոր եղբայրները՝ Յակոբոս եւ Յովսէս ու Սիմոն եւ Յուդա. ...» (13, 55):

<u>ԻՆՉՈՒ-ՈՐ</u>-ՈՎ ԵՎ <u>ԱՅՈ-ՈՉ</u>-ՈՎ ԵՐԿԲԵՎԵՌ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Այս Ավետարաններում <u>ինչու-որ</u>-ով և <u>այո-ոչ</u>-ով կա 4 երկբևեռ հարցական նախադասություն: Սրանց եզրերից մեկը կազմված է <u>ի՞նչ,</u> <u>որտեղի՞ց</u> և <u>ինչպէ՞ս</u> հարցական դերանուններով:

Ահա այդ հարցումները.

1) Եւ ահա նրանք աղաղակեցին ու ասացին. «Ի՞նչ կա մեր եւ քո միջեւ, Յիսո'ւս, Որդի' Աստծու, մեզ տարաժամ տանջելո՞ւ եկար» – Ահա աղաղակեցին ու ըսին. «Յիսո'ւս, Որդի Աստուծոյ, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, ատենէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար» (8, 29):

2) Եւ քահանայապետը վեր կենալով՝ նրան ասաց. «Պատասխան չե՞ս տալիս, քո մասին ի՞նչ ամբաստանութիւն են անում դրանք» – Քահանայապետը ոտքի ելնելով՝ ըսաւ անոր. «Պատասխան մը չէ՞ս տար. ի՞նչը կը վկայեն ասոնք քեզի դէմ» (26, 62):

3) Եւ գալով իր գաւառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպէս որ նրանք զարմանում ու ասում էին. «.... Եւ սրա քոյրերը բոլորը մեզ մօտ չե՞ն. եւ արդ, որտեղի՞ց է սրան այս բոլորը» – Եւ գնաց իր գաւառը ու անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ, անոնք ալ կը զարմանային ու կ'ըսէին. «.... ու ասոր քոյրերը ամէնքը մեր քով չե՞ն: Ալ ինք ուրկէ՞ ունի այս ամէն բաները» (13, 56):

4) Եւ Յիսուս իր մօտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մէջ ու ասաց. «.... Ձեզ ինչպէ՞ս է թւում. եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, եւ նրանցից մէկը մոլորուի, իննսունինը ոչխարը լերան վրայ չի՞ թողնի ու գնայ որոնելու մոլորուածին: ...» – Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջ տեղը կայնեցուց ու ըսաւ. «.... Ի՞նչպէս կ'երեւնայ ձեզի, եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ եւ անոնցմէ մէկը մոլորի, իննսունինը ոչխարը լեռները չի՞ ձգեր ու երթար մոլորածը փնտռեր:...» (18, 12):

ԻՆՉՈՒ-ՈՐ-ՈՎ ԵՎ ԱՅՈ-ՈՉ-ՈՎ ՔԱՌԱԲԵՎԵՌ ՀԱՐՑՈՒՄ

Այս Ավետարաններում ինչու-որ-ով և այո-ոչ-ով կա մեկ քառաբևեռ հարցում: Այս հարցական նախադասությունը կազմված է երկու այո-ոչ և երկու ինչու-որ հարցումներից:

Սրանում երկու եզրերում հանդես է գալիս <u>քանի՞</u> հարցական դերանունը:

Ահա այն.

1) Յիսուս այդ իմացաւ ու ասաց. «... Դեռեւս չէ՞ք հիմանում եւ չէ՞ք յիշում հինգ նկանակը, որ կերակրեց հինգ հազարին. եւ քանի՞ սակառ վերցրիք ոչ էլ եօթը նկանակը՝ չորս հազարին. եւ քանի՞ սակառ վերցրիք...» - Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով՝ ըսաւ անոնց. «.... Տակաւին չէ՞ք հասկնար եւ չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին ու քանի' կողով վերցուցիք. ոչ ալ եօթը նկանակը՝ չորս հազարրին, ու քանի' զամբիւղ վերցուցիք:...» (16, 9-10):

Гукасян Севак - ***Да-нет*** вопросы в восточноармянской и западноармянской Евангелии от Матфея - В Евангелии от Матфея в восточном варианте армянского языка есть 136 вопросительных предложениий, а в Западном - 140. Здесь существуют различные типы вапросов. Больше всего по количеству – местоименные вопросы . По количеству второе место занимают вопросы <u>да-нет</u>: 27 однополюсные, 2 – двухполюсные. 5 <u>да-нет</u> вапросов выступают с местоименными вопросительными предложениями. В упомянутой в Евангелии существуют простые и сложные структуры. Сложноподчиненные предложения выступают в качестве второстепенных предложениий прямого дополнения, подлежащего и обстоятельства.

Ghukasyan Sevak - ***Yes-no*** questions in Eastern & Western Armenian Gospels of Matthew - In the Gospel of Matthew there are 136 interrogative sentences in the Eastern Armenian language and 140 in the Western Armenian. There exist various types of questions. Most of all - pronominal questions. She second place occupy <u>yes - no</u> questions: 27 single polar and 2 – two polar. 5 <u>yes-no</u> questions appear with the pronominal questions. In the mentioned Gospel there are simple and complex structured questions. Subjunctive sentences act as secondary

sentences of direct object, subject and circumstance. The direct object secondary sentences are the maximum in the Gospel.

2017

ԲԵՐԴԻ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ԵՆԹԱԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՄՊԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ
(փորձառական հետազոտություն)*

Գրիգորյան Գայանե

Սույն փորձառական հետազոտության նպատակն է համեմատել Բերդի և Գյումրու ենթախոսվածքների արտասանության տեմպը, ինչպես նաև գրական արևելահայերենի և նշված բարբառների տևողության տվյալները՝ բառի, նախադասության և տեքստի սահմաններում: Այս պարագայում հնչաբառը, հնչադասությունը և հնչատեքստը դիտարկում ենք որպես տեղեկատվական միավորներ: Այդ նպատակով ընտրել ենք գրական լարևելահայերենով երկու տեքստեր, որոնք վերածել ենք նշված 2 բարբառների: Հաղորդավարները և բարբառախոսները կարդացել են տեքստերը, որոնք ձայնագրվել են: Այնուհետև դրանք մտցվել են «Պռաատ [1] ծրագրի մեջ, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության և համադրության (սինթեզի) համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս

---

* Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Գ. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին, Երևան, ‹‹Աստղիկ›› հրատ., 2017, էջ 73-80:

[1] *Պռաատը (Praat, հոլանդերեն՝ խոսք, խոսել) ծրագիրը մշակվել և շարունակում է զարգանալ Ամստերդամի համալսարանի գիաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:*

հաշվարկելու հնչամիավորների՝ հնչյունների, հնչաբառերի, հնչադասությունների և հնչախոսքի տևողությունը, ուժգնությունը, հիմնական տոնի հաճախականությունը, ֆորմանտները, տեսնել սպեկտրները և կատարում է այլ ֆունկցիաներ: Ի դեպ, մի շարք հարցումներից պարզվել է, որ ամենից շատ այժմ փորձառական հնչյունաբանական լաբորատորիաներում օգտագործում են «Պռաատ» ծրագիրը:

Ձայնագրությունները կատարվել են ոչ մասնագիտական լաբորատորիայում (տնային պայմաններում, գրասենյակում և այլն), նյութը կարդացել են բարձրագույն կրթությամբ, հայերենին և նշված բարբառներին լավ տիրապետող 15 հաղորդավարներ՝ 5 գրական և 5-ական յուրաքանչյուր բարբառից: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել է բառի, նախադասության և տեքստի տևողության հաշվարկներ և տվյալների մշակում:

Վերլուծվել է ավելի քան 945 [(2+13+6)x3x15] միավոր՝ գրական և բարբառային 2 տարբերակների տեքստերը, բառերը և նախադասությունները՝ ընդհանուր 15 հաղորդավարների ընթերցմամբ: Փորձարկման են ենթարկվել 2 տեքստեր, որոնք միասին կազմում են մոտ 200 բառ: Վերլուծվել են 39 բառեր (13-ական 3 տարբերակներում), որոնք նույնն են գրական և բարբառային տեքստերում: Փորձարկման ենթարկված տեքստերից առանձնացվել են 6 նախադասություններ, միասին՝ 18, որոնք բառապաշարային առումով գրեթե նույնն են: Տեքստերից մեկը ժամանակակից գրական արևելահայերենով է, մյուսը՝ Աստվածաշնչից վերցված Աբելի և Կայենի պատմությունը:

Տեքստերը, բառերը և նախադասությունները վերլուծելիս սկսեցինք տեքստերից՝ նպատակ ունենալով պատկերացում կազմել տեղեկատվության տեմպի ընդհանուր վիճակի մասին, այսինքն՝ հաշվարկել, թե որքան է տևում նույն տեղեկատվական միավորը հաղորդելու ժամանակը նշված բարբառներում և արդի գրական արևելահայերենում: Տեքստերի վերլուծությունից հետո

անցանք բառերին: Ենթադրվում էր, որ նույն օրինաչափությունը կգործի նաև բառերի պարագայում: Փորձառական հետազոտության արդյունքները հաստատեցին մեր ենթադրությունները: Բառերից հետո անցանք նախադասությունների տևողության հաշվարկներին և տվյալների մշակմանը: Նույնկերպ, տեղեկատվության ժամանակը գրականում և 2 բարբառներում ընթանում էր նույն օրինաչափությամբ:

Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել տեքստի տևողության փորձառական հնչյունաբանական հաշվարկների միջինացված տվյալները:



Տեքստի տևողության միջինացված տվյալները միլիվայրկյաններով

	Գյումրի	Գրական	Բերդ
Տեքստ 1	30.15	35.17	36.39
Տեքստ 2	42.69	50.59	52.69

Տվյալներից երևում է, որ տեքստի տևողության ամենամեծ ցուցանիշները գրանցվել են Բերդի ենթախոսվածքի համար, որը նշանակում է, որ նրանք խոսում են ամենից դանդաղը՝ համեմատած գրական արևելահայերենի և առավել ևս՝ Գյումրիի ներկայացուցիչների հետ:

Նախադասության տևողության միջինացված տվյալները միլիվայրկյաններով



	Գյումրի	Գրական	Բերդ
Տեքստ 1	7.95	9.32	10.18
Տեքստ 2	5.76	6.77	7.12

Նույն օրինաչափությունը գործում է նաև նախադասության պարագայում: Արագ՝ Գյումրի, միջին՝ գրական, դանդաղ՝ Բերդ:

Բառի տևողության միջինացված տվյալները միլիվայրկյաններով

	Գյումրի	Գրական	Բերդ
Տեքստ 1 և 2	0.41	0.43	0.51

Բառի տևողության տվյալների համեմատությունը գրականի և 2 բարբառների միջև ևս հաստատում է այն փաստը, որ գյումրեցիները բառն արտասանում են ավելի արագ, քան բերդցիները. այս երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրական արևելահայերենը:

Այսպիսով, մեր փորձառական հետազոտությունը հանգեցրեց հետևյալ եզրակացություններին.

1. Քննարկելով գրական արևելահայերենի, ինչպես նաև Բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի

կամ հյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի Շամշադնի խոսվածքի Բերդի ենթախոսվածքի և բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Կարնո բարբառի Շիրակի խոսվածքի Գյումրու ենթախոսվածքի տեմպի հարցը՝ եկանք այն եզրակացության, որ ամենից արագ խոսում են Գյումրու ենթախոսվածքի ներկայացուցիչները, իսկ ամենից դանդաղ՝ Բերդի ենթախոսվածքի կրողները: Այս երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրական արևելահայերենը: Օրինակ, ընդհանուր տեքստի տևողությունը Գյումրու ենթախոսվածքում 30.15 մ/վրկ է, գրականում՝ 35.17, իսկ Բերդի ենթախոսվածքում՝ 35.95 մ/վրկ առաջին տեքստում և համապատասխանաբար՝ 42.69 մ/վրկ, 50.59 մ/վրկ և 52.69 մ/վրկ երկրորդում:



Առաջին տեքստի պատկերը

2. Տրամաբանական էր ընդունել այն փաստը, որ քանի որ տեքստերի տևողություններն ունեն որոշակի օրինաչափություն բարբառների և գրական խոսքի տևողության

պարագայում, ապա նույն բանը պետք է տեղի ունենար նաև նախադասության և բառի տևողությունները համեմատելու պարագայում: Քննարկելով գրական արևելահայերենի և երկու բարբառների ենթախոսվածքների տեմպի հարցը նախադասության սահմանում՝ եկանք այն եզրակացության, որ կրկին ամենից արագ խոսում են Գյումրու ենթախոսվածքի ներկայացուցիչները, իսկ ամենից դանդաղ՝ Բերդի ենթախոսվածքի կրողները: Այս երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրական արևելահայերենը: Օրինակ, նախադասության միջին տևողությունը Գյումրու ենթախոսվածքում 7.95 մ/վրկ է, գրականում՝ 9.32, իսկ Բերդի ենթախոսվածքում՝ 10.18 մ/վրկ առաջին տեքստում և համապատասխանաբար՝ 5.76 մ/վրկ, 6.77 մ/վրկ և 7.12 մ/վրկ երկրորդում:



«Այսօր երեկոյան ինձ զանգահարեց իմ վաղուցվա ընկերը»: նախադասության ձայնապատկերը:

3. Առանձին բառերն ուսումնասիրելիս կրկին առկա է նույն օրինաչափությունը. բերդցիների արտասանած բառերի տևողությունը շիրակցիների համեմատ 0.1 միլիվայրկյանով ավելին է: Երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրականը:



«Յէրկար» բառի ձայնապատկերը:

Grigoryan Gayane – The comparison of tempo of Gyumri and Berd speeches. – The purpose of the article is to compare the tempo of Gyumri and Berd speeches, as well as to collate the data of duration of mentioned dialects in frame of the word, the sentence and the text. The experimental research led to the conclusion that the Gyumri people are the fastest speakers, and Berd's people speak slower. The Eastern Armenian literary language occupies an average position in comparison with these two dialects.

Григорян Гаяне – Сравнение темпа говор Гюмри и Берд . – Цель статьи - сравнить темпы говоров Гюмри и Берда, а также сопоставить длительности диалектов в рамках слова, предложения и текста. Экспериментальные исследования привели к выводу о том, что гюмрийцы - самые быстроговорящие, а люди Берда говорят медленнее. Восточноармянский литературный язык занимает среднюю позицию по сравнению с этими двумя диалектами.

ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ*

Գրիգորյան Գայանե

Ինչպես գիտենք, կրկնակ բաղաձայններն արտասանվում են տևական, իսկ գրության մեջ՝ արտահայտվում կրկնատառ: Սույն փորձառական հետազոտության նպատակն է պարզել, թե կրկնակ բաղաձայնները որքանով են տարբերվում համապատասխան միայնակ բաղաձայններից, մասնավորապես տևողության տեսակետից, քանի անգամ է ավելանում բաղաձայնի տևողությունը տարբեր դիրքերում ու կառույցներում:

Կրկնակ բաղաձայններին անդրադարձել է **Հր. Աճառյանը** «*Լիակատար քերականություն հայոց լեզվի*» աշխատության 6-րդ հատորում[1]՝ ներկայացնելով կրկնակ բաղաձայններով բառերի ցանկը հայերենում՝ 123 բառեր, որոնցից այժմ մեր դիտարկմամբ գործածվում է միայն մոտ 60 տոկոսը, իսկ մնացած 40-ը հնաբանություններ են ու ոչ գործածական բառեր:

Կրկնակ բաղաձայններին անդրադարձել է նաև Թերեզա **Ղարագյոզյանը** իր «*Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը*» աշխատության մեջ: Նա նշում է, որ «Հայերենին առհասարակ հատուկ չէ միատեսակ բաղաձայնների կրկնությունը, այդ պատճառով կրկնակ բաղաձայնները բուն հայկական բառերում հանդիպում են կամ ձայնավորի սղումով կազմված բառերում, ինչպես **բջջահյութ** (**բջիջ** բառից) ... կամ երկու ձևույթների սահմանագծում ... օրինակ՝ **երկկողմ,**

---

* Զահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2017, էջ 68-75:

[1] **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի,* հ, 6, Ե., 1976, էջ 567-568:

աննպաստ»[2] և այլն: Բառավերջում կրկնակ բաղաձայն ունեցող օտարազգի բառերի համար հեղինակն առաջարկում է դրան տառադարձել մեկով, սակայն այս դեպքում առաջանում է արտասանության հեռացում բնօրինակից, մանավանդ հատուկ անունների դեպքում՝ **Կանն, Գրիմմ** և այլն: Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար է դրանք արտասանել կրկնակ բաղաձայններով և տառադարձել կրկնակ գրությամբ, քանի որ հայերենի ճկուն արտասանական հնարավորությունները թույլ են տալիս դա անել:

«*Ժամանակակից հայոց լեզու*» [3] ակադեմիական հրատարակության մեջ տրվում է արտաբերական մակարդակում կրկնակ բաղաձայնների արտասանության նկարագրությունը, որտեղ Ա. Խաչատրյանը մասնավորապես ասում է. «....Հնչյունների արտասանությունը հեշտացնելու համար առաջին հնչյունի երրորդ (ելքի) և երկրորդ հնչյունի առաջին (մուտքի) պահերը սղվում են, իսկ դադարի (կացքի) պահերը՝ միանում են: Այդ երկու հնչյունները միասին ունենում են մեկ մուտք և մեկ ելք, բայց երկու կամ մեկ երկար կացք»[4]: Իհարկե, հնարավոր են անհատական կամ միտումնավոր երկարացումներ, որոնք բաղաձայնը չեն դարձնում կրկնակ. դրանք դիպվածային են:

Կրկնակ բաղաձայնները փորձառական եղանակով ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ համարեցինք դրանք դասակարգել ըստ 4 սկզբունքների՝

1. **Դիրքային:** Կրկնակ բաղաձայններն ուսումնասիրելիս կարևոր է նրանց տեղը բառի մեջ, այսինքն՝ թե բառի որ հատվածում են գտնվում կրկնակ բաղաձայնները՝ բառասկիզբ, բառամեջ թե բառավերջ, ինչպես նաև՝

---

[2] **Թ.Ղարագյուլյան,** *Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը*, Ե.,1974, էջ129:

[3] Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, Ե., 1979:

[4] Նույն տեղում, էջ 115:

որքանով են մոտիկ շեշտին, և հատկապես՝ շեշտակիր վանկի բաղադրիչ են, թե ոչ:

2. **Բառակազմական և բառափոխական:** ա) Բաղադրյալ բառեր, որոնց բաղադրիչներից մեկն ավարտվում է նույն բաղաձայնով, որով սկսվում է հաջորդը, ինչպես՝ *այբբենական, երեսսրբիչ, երկկողմ, երրորդ, չորրորդ* և այլն: բ) Բառակազմության ընթացքում տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով առաջացած բաղաձայնների կրկնություն, ինչպես՝ *արճիճ-արճճե, բջիջ-բջջային, զնին-զննել, ծնունդ-ծննդյան, հովիվ-հովվական, նինջ-ննջել, պտույտ-պտտել, ուղիղ-ուղղակի, փթիթ-փթթել* և այլն: գ) ***Ան***- ածանցի ***ն*** բաղաձայնի և ***ն***-ով սկսվող բառի միացումից առաջացած բառերի խումբը բավական մեծ է, քանի որ ***ան***- նախածանցը շատ բառերի կարող է միանալ: Ուստի այս խումբը ևս առանձին քննարկման առարկա դարձրինք: դ) Ուսումնասիրության առանձին խումբ է բառերի այն հավաքածուն, որտեղ ***ն***-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է -***ներ*** վերջավորությամբ և առաջացնում կրկնակ ***ն*** բաղաձայններ՝ *պատուհան-պատուհաններ, սեղան-սեղաններ, պատճեն-պատճեններ* և այլն:
3. **Շարակարգային:** Որպես տեսակ՝ ուսումնասիրվեցին այն կրկնակները, որոնք առաջանում են ***ն***-ով վերջացող բառի և ***ն*** հոդի ու ձայնավորով սկսվող բառի սերտ արտասանության դեպքում *(սեղանն ուղիղ է, նստարանն առջևում է, Արսենն ու Հակոբը* և այլն): Նշենք, որ չենք նախատեսել քննարկել այն դեպքերը, երբ տարբեր բառերում՝ մեկի բառավերջում, մյուսի՝ բառասկզբում, հանդիպում է նույն բաղաձայնը՝ *շատ տուր, մեծ ծիտ, կանաչ չղջիկ* և այլն: Այս դեպքերում կրկնակ բաղաձայնները չնայած արտասանվում են միասին, սակայն պատկանում են տարբեր բառերի:
4. **Բնաձայնական:** Կրկնակ բաղաձայնների ուսումնասիրման ժամանակ առանձնացրինք բնաձայնական բառերը, որոնք

պարունակում են կրկնակ բաղաձայններ: Այս դեպքում բնաձայնություն լինելու հանգամանքը անպայման իր ազդեցությունն է ունենում բաղաձայնների տնողության վրա՝ *ֆշշալ, խշշալ, բզզալ, ճռռալ, տզզալ* և այլն:

Չենք քննարկել այն դեպքերը, երբ գրությունը չի արտացոլում արտասանությունը.

1. ***Ս, դ, ն*** հնչյուններով ավարտվող բառերին ***ս, դ, ն*** հոդերն ավելացնելիս նույնպես առաջանում են կրկնակ բաղաձայններ, բայց դրանց միջև ***ս*** և ***դ*** հոդերի դեպքում առավելապես հնչում է գաղտնավանկի ***ը*** ձայնավորը՝ *դասըս, ծնունդըդ* և այլն, ուստի սրանք ևս դադարում են կրկնակ լինելուց, չնայած որ գրության մեջ հայտնվում են կողք կողքի:
2. Բառասկզբում իրար հաջորդող կրկնակ բաղաձայնների միջև արտասանվում է գաղտնավանկի ***ը*** ձայնավորը, որը գրվում է տողադարձի կամ վանկատման ժամանակ՝ *գգվել (գըգ-վել), զզվել (զըզ-վել), լլկել (լըլ-կել), խխունջ (խը-խունջ), կկու (կը-կու), շշուկ (շը-շուկ)* և այլն: Այս պարագայում կրկնակ բաղաձայնները, չնայած այն հանգամանքին, որ գրության մեջ կողք կողքի են, արտասանելիս դադարում են լինել կրկնակ, քանի որ դրանց միջև արտասանվում է **ը** ձայնավորը: Ընդ որում, որոշ դեպքերում կրկնակները արտասանվում են որպես գերհնչույթ, օրինակ՝ *գգվել (գքվել), դդում (դթում)* և այլն:

Ի դեպ, հայերենում հանդիպում են նաև եռյակ բաղաձայններ, օրինակ, ինչպես նշում է **Հ. Աճառյանը**[5], երբ ***ան*** ածանցը հանդիպում է ***ննջել*** բառին, ունենում ենք ***աններջելի*** բառը, որտեղ կան 3 ***ն***-եր: Գրաբարում ***ս***-ով վերջացող ***լոյս, բոյս*** և այլն բառերն ունեն մեկ ***ս***, հոգնակի հայցականը կազմելիս

---

[5] **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ, 6, Ե., 1976, էջ 567-568:

ստանում են ևս մեկը, իսկ եթե դրան ավելանում է *ս* դիմորոշ հոդն էլ, ապա ստացվում է 3 **ս**:

Մեր գիտափորձերը կատարվել են «Պռաատ» ծրագրի միջոցով, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության, այդ թվում՝ սպեկտոգրաֆիկ, և խոսքի համադրության (սինթեզի) համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս հաշվարկելու հնչյունների տևողությունը և ուժգնությունը: Մի շարք հարցումներից պարզվել է, որ ամենից շատ այժմ փորձառական հնչյունաբանական լաբորատորիաներում օգտագործում են «Պռաատ» ծրագիրը[6]:

Ձայնագրությունները կատարվել են տնային պայմաններում, նյութը կարդացել են բարձրագույն կրթությամբ, հայերենին լավ տիրապետող երեք կին հաղորդավարներ: Փորձարկման են ենթարկվել 102 բառեր, որտեղ կան կրկնակ բաղաձայններ: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել են կրկնակ բաղաձայնների տևողության տվյալների հաշվարկումներ և վերլուծություններ: Տվյալների մշակումից հետո պարզեցինք մի շարք օրինաչափություններ:

1. Կրկնակ բաղաձայնների տևողությունները բառամիջի և բառավերջի դիրքերում համեմատելիս պարզվեց, որ դրանք բառամիջի դիրքում մոտ 0,03 միլիվայրկյանով ավելի տևական են (բառասկիզբը չենք համեմատում, քանի որ կրկնակների միջև ը է հնչում):
2. Կրկնակ բաղաձայնների տևողությունը առավել մեծ է շեշտին մոտիկ դիրքում, հատկապես, եթե դրանք

---

[6] «Պռաատ» (Praat, հոլանդերեն՝«խոսք, խոսել») ծրագիրը մշակվել և շարունակում է զարգացվել Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:

շեշտակիր վանկի բաղադրիչ են: Այդ տարբերությունը միջինացված կազմում է մոտ 0,1 միլիվայրկյան:

3. Բաղադրյալ բառերը, որոնց բաղադրիչներից մեկն ավարտվում է այն բաղաձայնով, որով սկսվում է հաջորդը, հետաքրքրական են այնքանով, որ որոշ բառերում, օրինակ՝ ***այբբենական, երկկենցաղ, երրորդ, չորրորդ*** և այլն, կրկնակների տևողությունը մոտենում է միայնակ բաղաձայնների տևողությանը, իսկ որոշ բառերում դրանք իսկապես կրկնակ են, ինչպես օրինակ՝ ***երեսսրբիչ, երկկողմ*** և այլն:

   Տևողության հաշվարկներն անելիս նկատեցինք մի երևույթ. եզակի ուղիղ ձևում բաղաձայնը հնչում է կրկնակ, բայց հենց բառը ձևափոխվում է կամ բաղադրվում, հնչում է միայնակ, օրինակ՝ *մասսա* բառում հնչում է երկար *ս*, սակայն *մասսայական* բառում *ս*-ի տևողությունը հավասարվում է միայնակ *ս*-ի տևողությանը, կամ որոշ դեպքերում՝ մոտենում դրան:

4. Բառակազմության ընթացքում տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով առաջացած կրկնակները արտասանվում են երբեմն մեկ ***մուտք-կացքելք***-ով, երբեմն՝ դրանց միջև լսվում, իսկ պատկերի վրա երևում է կարճատև ***ը***, որը նրանց բաժանում է և զրկում կրկնակ լինելուց՝ ***արձձե, բջջային*** և այլն: Կրկնակ *ղղ* բաղաձայնները հաճախ, մանավանդ խոսակցական լեզվում, հնչում են որպես մեկ *ղ*: Սա նույնիսկ լսելի է անզեն ականջով: Ավելին, հաղորդավարների ընթերցմամբ ևս այս երևույթը նկատելի է: *Սնունդ, ծնունդ* բառերից առաջացած *սննդամթերք* և *ծննդատուն* բառերը հետաքրքրական են նրանով, որ կարող են արտաբերվել 2 ձևով՝ կամ թույլ *ը*-ով՝ կրկնակ բաղաձայնների միջև, կամ առանց *ը*-ի: Կրկնակ բաղաձայնների ուսումնասիրման մեջ հատուկ խումբ կազմեցին *նն* կրկնակները մի քանի պարագաներում. ա) ***ն***-ով վերջացող բառի և ***ն*** հոդի ու

ձայնավորով սկսվող բառի սերտ արտասանության դեպքում *(սեղանն ուղիղ է),* բ) ***ան*** ածանցի ***ն*** բաղաձայնի և ***ն***-ով սկսվող բառի միացումից առաջացած բառերում *(աննման),* գ) **ն**-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին կազմելիս *(պատուհան-պատուհաններ):* Նշենք, որ ***նն*** կրկնակները «իսկական» կրկնակներ են այն առումով, որ դրանց տևողությունը ուղիղ 2 անգամ ավելին է միայնակ արտասանվածներից: Օրինակ, կրկնակ ***նն***-ի միջին տևողությունը 0,28 միլիվայրկյան է, իսկ միայնակինը՝ 0,12:

5. Ըստ տևողության չափի առաջին տեղը գրավում են բնաձայնական բառերը, որոնք մոտավորապես 2 կամ 2,5 անգամ երկարատև են միայնակ արտասանված համապատասխան ձայնավորներից: Կրկնակների տևողության միջինը 1,7 միլիվայրկյան է, իսկ համապատասխան միայնակներինը՝ 0,81 մ/վրկ: Ընդ որում՝ բնաձայնություններ կազմում են միայն 4 բաղաձայններ *զզ, ժժ, ռռ, շշ:* Այս շարքում առավել տևական է *շ* բաղաձայնը, իսկ ամենից քիչ տևականը՝ զ-ն: Միջին տեղ են գրավում *ժ*-ն և *ռ*-ն: Բնաձայնական բառերի մեջ կրկնակների տևողությունը գերազանցում է վերը նշված մյուս խմբերի կրկնակների տևողությանը հասկանալի պատճառներով. դրանք հնչյուն լինելուց բացի դառնում են նաև ձայներ:

Վերջում ներկայացնում ենք մի քանի վիճակագրական տվյալներ մեր փորձերի արդյունքներից:

ա) Մեր կազմած բառացանկում (102 բառ) ամենից շատ կրկնակ բաղաձայններ են դառնում ն-ն (23 դեպք), ր-ն (10 դեպք), և լ-ն (9 դեպք), հետո գալիս են բնաձայնական բառերը, իսկ մեկական կիրառություն ունեն **թ, ծ, ճ, ջ, ս, ց,** և **ֆ** բաղաձայնները:

բ) Կրկնակ բաղաձայններ են դառնում հայերենի բաղաձայնների 60%-ը: Կրկնակ չդարձող բաղաձայնների 40%-ի մեջ են մտնում **գ, խ, հ, ձ, յ, չ, պ, փ, ք** բաղաձայնները:

Այսպիսով, բառամիջի կրկնակ բաղաձայնները պայմանականորեն կարող ենք բաժանել 2 խմբի. առաջին խմբի մեջ (75 %) մտնում են այն կրկնակները, որոնք կան **մեկ բառի** սահմանում: Դրանք հանդիպում են՝

- բնաձայնություններում *(բժժալ, թշշալ)*
- օտար բառերում *(Շիլլեր, Աքիլլես, բուդդա, վաննա)*
- հնչյունափոխության հետևանքով առաջացած բառերում *(ուղղակի, արձձե, ծննդյան)*
- նշված խմբերին չպատկանող բառերում *(բերրի, մրրիկ):*

Մնացած 25%-ը կրկնակներ պարունակող այն բաղադրյալ բառերն են, որտեղ կրկնակները իրար կողքի գտնվող **2 տարբեր բաղադրիչներում** են *(երեսսրբիչ, երրորդ, աննման, կանոններ, զրավվել):*

Григорян Гаяне – Экспериментальное исследование длительности редуплицированных согласных. – Целью данного экспериментального исследования является выяснение того, насколько различаются по длительности удвоенные и соответствующие одиночные согласные, насколько увеличивается длительность в разных положениях и структурах. В исследовании принимается во внимание ряд обстоятельств: положение удвоенных согласных в слове, насколько далеко или близко расположены они от ударения, факт образования удвоенных согласных в результате словообразования, удвоение в составе звукоподражательных слов и т.д.

Grigoryan Gayane – Experimental study of durations of double consonants. – The purpose of this experimental study is to determine how different are the durations of double and corresponding

single consonants, how many times the duration increases in different positions and structures. In the study we took into consideration a number of circumstances: the position of double consonants in the word, how far or near they are from the stress, the fact of the formation of double consonants as a result of word formation, being in onomatopoeic words, etc.

ՏԱՐԲԵՐ ԲՆՈՒՅԹԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉԵՐԱՆԳՆԵՐԸ*

Գրիգորյան Գայանե

Հնչերանգը լեզվի այն միջոցներից է, որը մասնակցում է նախադասության ձևավորմանը հնչյունական շղթայում: Դա մեղեդու, տեմբրի, խոսքի արագության, շեշտի արտահայտման միասնությունն է, որը հաղորդակցման գործընթացում ծառայում է տարբեր իմաստներ փոխանցելու համար:.

Ավելի նեղ իմաստով հնչերանգը խոսքի շղթայի ռիթմիկական մեղեդային կառուցվածքն է, որը ձայնի բարձրացումն ու իջեցումն է, և որը տեղի է ունենում շեշտակիր և անշեշտ վանկերի հաջորդական հերթագայությամբ:

Հնչերանգը կատարում է հետևյալ գործառույթները `

- Տարբերակում է արտաբերված խոսքի հաղորդակցական տեսակը՝ հարցում, բացականչություն, հրաման և այլն:
- Տարբերակում է արտահայտության մասերը՝ ըստ իմաստային կարևորության:
- Ամբողջացնում է խոսքը որպես մեկ միավոր՝ միաժամանակ բաժանելով դա ռիթմիկ խմբերի:
- Արտահայտում է որոշակի զգացմունքներ:
- Բացահայտում է արտաբերված խոսքի ենթատեքստը:

Հնչերանգը հատուկ նշանակություն ունի նաև ամբողջական բանավոր խոսքի շրջանակում, քանի որ տարբերակում է տեքստի ժանրային պատկանելությունը: Դա ունկնդրին ազդելու ուժեղ գործոն է՝ հուզական և գեղագիտական առումներով:

---

* Հայոց լեզու և գրականություն հանդես, Երևան, 2017, էջ 23-26:

Շեշտը նախադասության մեջ մեկ կամ մի քանի բառերի առավել ուժգին արտասանությունն է մնացած բառերի համեմատությամբ: Անշեշտ են արտասանվում օժանդակ բայերը, եղանակավորիչները, կապերը, շաղկապները, դերանունները և այլն:

Հնչերանգը հայերենում անգլերենում և ռուսերենում

Հնչերանգը ձայնի տոնի փոփոխությունն է խոսելու կամ կարդալու գործընթացում:

Մեղեդայնությունն ու հնչաղասության շեշտը սերտորեն կապված են, քանի որ ամեն մի հնչաղասություն ձևավորում է ոչ միայն մեղեդային, այլ նաև շեշտա-մեղեդային շարք, որտեղ վանկերը բնութագրվում են ոչ միայն շեշտի առկայությամբ կամ բացակայությամբ, այլ նաև տոնի որոշակի բարձրությամբ ձայնածավալի (դիապազոնի) մեջ:

Փորձառական հնչյունաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ հայերենի հնչերանգը տարբերվում է անգլերենի և ռուսերենի հնչերանգներից:

ա) Անգլերենի խոսքի ձայնածավալն ավելի մեծ է, քան ռուսերենինը, իսկ հայերենինը առավել փոքր, քան ռուսերենինը: Սա նշանակում է, որ նախադասության սկիզբը ավելի բարձր է առաջին հերթին անգլերենում, հետո ռուսերենում, և հետո՝ հայերենում:

բ) Անգլերենում նկատվում է է նույն ձայնավորի ներսում ձայնային տոնի շարժում, որը չկա ոչ' ռուսերենում, ոչ' հայերենում: Դա իրականացվում է ընկալման համար զգալի ժամանակահատվածում. ուստի թվում է, թե անգլիացիները «երգում են» շեշտակիր վանկերը:

գ) Անգլերենում ձայնի անկումը հասնում է ձայնածավալի ամենացածր մակարդակին, իսկ բարձրացումը սկսվում է հենց ամենացածր կետից: Հայերենում և ռուսերենում դա կատարվում ձայնածավալի համարյա միջին մակարդակից:

դ) Անգլերեն խոսքը բնութագրվում է կենտրոնացված շեշտի առկայությամբ, այսինքն՝ բառերից մեկը (միջուկային բառ)

շատ ավելի արտահայտված է, քան մյուս շեշտակիր բառերը: Այդ բառը ամնաուժգինն ու ամենաերկարատևն է խոսքի շղթայում: Ռուսերենում շեշտը ապակենտրոնացված է, այսինքն՝ բոլոր շեշտակիր բառերը ունեն այս կամ այն աստիճանի նման արտահայտվածություն/ցայտունություն: Հայերենում շեշտը նույնպես ապակենտրոնացված է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ խոսողը հատուկ շեշտադրությամբ է արտասանում բառերը:

ե) Շեշտակիր վանկերի ցայտուն արտահայտումը անգլերեն հնչադասության մեջ իրականանում է իջնող տոնի միջոցով, իսկ ռուսերենում՝բարձրացող: Ինչ վերաբերում է հայերենին, ապա գիտափորձերը ցույց տվեցին, որ հայերենում շեշտակիր վանկերի տոնայնությունը բարձրացող-իջնող-բարձրացող իջնող է (պատմողական բնույթի նախադասություններում):

Միջուկային տոներ և դրանց գործածությունը

Միջուկային տոն է կոչվում հնչադասության մեղեդային ավարտը, որը սովորաբար համընկնում է վերջին շեշտակիր վանկի հետ:

Անգլերենում կան մի քանի շեշտակիր տոներ՝

- անկումային (վարընթաց տոն)
- վերելքային (վերընթաց տոն)
- անկումավերելքային

Վարընթաց տոնն արտահայտում է հնչադասության կամ դրա մասի ավարտվածությունը, որոշակիությունը, վստահությունը, վճռականությունը և այլն: Վարընթաց տոնը օգտագործվում է երկու տարբերակներով ՝ ցածր և բարձր: Բարձր տոնը արտահայտությանը տալիս է թեթևություն, աշխուժություն, հետաքրքրվածություն:

Ցածր տոնը արտահայտությանը տալիս է անավարտության, անվստահության, անորոշության, կախվածության երանգներ:

Անկումավերելքային տոնն արտահայտում է անավարտություն՝ լրացուցիչ իմաստներով և նրբերանգներով՝ մերժման, համաձայնության և այլն:

Կան նախամիջուկային տոնի տարբերակներ.

ա) Քայլ առ քայլ, որի ժամանակ յուրաքանչյուր շեշտակիր վանկ արտաասանվում է ավելի ցածր, քան նախորդը: Այս տեսակը չեզոք է և հիմնականում օգտագործվում է պատմողական բնույթի նախադասություններում:

բ) Սահող, որի ժամանակ յուրաքանչյուր շեշտակիր վանկ արտաասանվում է ավելի ցածր, քան նախորդը, սակայն հենց վանկի ներսում տոնի նվազմամբ: Այս տեսակն օգտագործվում է յուրաքանչյուր շեշտակիր վանկը հատուկ ընդգծելու նպատակով: Այսպիսի խոսքն օժտված է մեծ արտահայտչականությամբ:

գ) Ցրված, երբ շեշտված վանկերը արտաբերվում են նվազման հաջորդականությամբ, իսկ դրանցից հետո եկող անշեշտ վանկերը՝ փոքր-ինչ ավելի բարձր: Այս տեսակը խոսքին տալիս է թեթևության, զարմանքի, կոկետության երանգ: Հաճախ հումորային պատմությունների, կատակների, անեկդոտների սկիզբը ձևավորվում է այս տոնայնությամբ:

Իմաստային խումբ

Նախադասությունները սովորաբար կազմվում են բառախմբերից, որտեղ բառերը իմաստային սերտ կապի մեջ են: Նման խմբերը կոչվում են իմաստային խմբեր (սինտագմաներ): Բանավոր խոսքում դրանք իրարից առանձնանում են դադարով կամ մեղեդային փոփոխությամբ:

Հնչաշղթայում իմաստային խմբերի քանակը կախված է խոսողի մտադրությունից, արտահայտության իմաստից, խոսքի տեմպից, իմաստային խմբում բառաքանակից և այլն:

Իմաստային խումբը, որն արտահայտում է համեմատաբար ամբողջական միտք, արտաասանվում է

վարընթաց տոնով, անավարտ մտքերը՝ վերընթաց կամ անկումավերելքային:

Առանձնացնում են հինգ հիմնական **հնչերանգային կառուցվածքներ**:

1) Տոնի իջեցումը կատարվում է արտահայտության կենտրոնական մասում, իսկ կենտրոնից հետո եկող մասի տոնը իջնում է միջինից ցածր: Այս տեսակը սովորաբար հանդիպում է պատմողական բնույթի նախադասություններում:



2) Հնչերանգային կառույցի առաջին մասի հնչյունները արտասանվում են ձայնածավալի սահմաններում, իսկ դրանից հետո նկատվում է տոնի իջեցում միջին մակարդակից էլ ներքև: Այս կառույցը հիմնականում հանդիպում է հարցական (Ո՞ւր է գնում Անին), ինչպես նաև կոչական ունեցող նախադասություններում (Անի', այնտեղ վտանգավոր է):



3) Երրորդ տեսակում միջին հատվածի հնչյուններն արտասանվում են տոնի կտրուկ աճմամբ, որից հետո նկատվում է տոնի իջեցում միջին մակարդակից էլ ցածր: Այս տիպը բնութագրական է անավարտ խոսքին և հանդիպում է հարցական նախադասություններում առանց հարցական դերանվան (Անին հյո՞ւթ է խմում), ինչպես նաև խնդրանք արտահայտող խոսքում (Անի', զանգահարի'ր վաղը):



4) Չորրորդ տեսակում կենտրոնական մասում նկատվում է տոնի իջեցում, որից հետո կատարվում է տոնի բարձրացում՝ միջինից բարձր: Այս տեսակը հանդիպում է հարցական անավարտ նախադասություններում՝ *իսկ* շաղկապով, ինչպես նաև պահանջի երանգով հարցումներում: (Իսկ Անի՞ն: Ձեր անո՞ւնը, հասցե՞ն):



5) Այս տեսակում տեղի է ունենում տոնի կտրուկ բարձրացում, որից հետո արտաբերվող հնչյունների տոնը դեռևս բարձր է միջինից: Այս տեսակը հանդիպում է հիացմունք, զարմանք արտահայտելիս: (Տեսեք թե ո՜նց է երգում...)



ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԸ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ*

Խաչատրյան Օֆելյա

Բանալի բառեր՝ համանուն, նույնարմատ, տարարժեք, բազմիմաստ, քերականական, բառաքերականական, շարահյուսական համանունություն, համագիր, համահունչ:

Հայերենագիտության մեջ համանուններին անդրադարձել են անվանի գիտնականներ Է. Աղայանը, Ն. Պառնասյանը, Ռ. Շալունցը, Ս. Գյոդակյանը, Ս. Աբրահամյանը, Ս. Գալստյանը, Ա. Մուրադյանը, Հ. Պետրոսյանը և այլք: Առանձնացվում են համագիր, համահունչ, տարարմատ համանուններ: Դրանցից համագիրները առնչվում են ուղղագրությանը, համահունչները՝ ուղղախոսությանը, իսկ տարարմատները՝ ծագումնաբանությանը: Առանձնացվում են նաև բառաքերականական և քերականական համանուններ, որոնք առնչվում են բառագիտությանը և տերմինաբանությանը: Գիտական շրջանառության մեջ եղած համանունությունը բնութագրող սահմանումներից համեմատաբար պարզ ու ըմբռնելի է ակադեմիկոս Է. Աղայանի հետևյալ սահմանումը. «Համանուններ են կոչվում ձևով նույնական, իմաստով տարբեր բառերը»:

Համանունները մյուս բառերից տարբերվում են նրանով, որ դրանց կոնկրետ իմաստը հասկանալի է դառնում միայն նախադասության մեջ՝ տվյալ կիրառությամբ: Երբ նախադասությունից դուրս ասվում է **խոր**, պարզ չէ, թե խոսքը փոսի մասին է, թե որևէ առարկայի, երևույթի խորունկ , խրթին, սաստիկ, ծայրագույն լինելու մասին: Պետք է նշել, որ

---

* ՀԱԱՀ տեղեկագիր, Երևան, 2017, էջ 43-47:

համանունությունը ենթադրում է զույգ և ավելի բառերի շարք, որն ընդունված է համարել համանունական փունջ:Համանունական խմբի կազմում կարող է լինել յուրաքանչյուր բառ, անկախ նրանից, թե որ խոսքի մասին է պատկանում: Մ. Խորենացու պատմությունը հարուստ է համանուններով, որոնց, սակայն, մինչև օրս չեն անդրադարձել: Պատմիչի երկի եռահատոր համաբարբառը և դրա հիման վրա կազմված հաճախականության բառարանը մեծապես նպաստում են բառապաշարի ձևաիմաստային կողմերը բացահայտելուն: Մեր նախորդ հոդվածում մենք անդրադարձել ենք երկում տեղ գտած հոմանիշներին, իսկ այստեղ ցանկանում ենք ներկայացնել համանունները, որոնք իրենց ուրույն տեղն ունեն «Հայոց պատմության» բառապաշարում և կազմում են համանունական խմբեր: Համաձայն բառապաշարում առկա միավորների քանակի՝ համանունական խումբը կազմվում է երկու, երեք և չորս բառերից և բառաձևերից : Մ. Խորենացու պատմության համանունները կարելի է բաժանել **երկանդամ, եռանդամ** և **քառանդամ** խմբերի՝ նկատի ունենալով միաժամանակ, թե դրանք որ կիրառության դեպքում որ խոսքի մասին են պատկանում, ինչպիսի անցումներ են տեղի ունենում, լիիմաստ բառեր են, թե թերիմաստ, և այլն: Պատմիչի երկի համանունները խմբավորել ենք հետևյալ տեսակների.

1. Միևնույն խոսքի մասին պատկանող, բայց տարբեր իմաստներ արտահայտող բառական համանուններ.

Հայտնի է, որ բառական համանունների տարբերակման որոշիչ չափանիշ է միևնույն խոսքի մասին պատկանելը, քերականական նույն հատկանիշներն ունենալը, այսպես՝ ալիք-կոհակ, ալիք-մազ, ակն-աչք, ակն-աղբյուր, ակն-թանկագին քար, Աղեքսանդր-անձնանուն, Աղեքսանդր- տեղանուն, հաւ-պապ, հաւ-թռչուն բառերը գոյական անուններ են, ունեն քերականական նույն հատկանիշները և բնագրում՝ տարբեր նախադասություններում, դրսևորում են տարբեր իմաստներ, օրինակ՝

Ալիք, ալեաց - գոյ. կոհակ.«… և ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն **ալեացն**, որ ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս» [4, էջ 115]: (Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած **ալիքները** մնացած նավերը շատ մղոններ առաջ են քշում, էջ 115):

Ալիք - գոյ. մազ. «Յետ այսորիկ երթալով Արտաշիսի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ, իբր թէ դաւել զարքայն խորհիցին՝ յարուցանեն որդիքն արքային ապշոպ, և անդէն իսկ ի հացին քարշեն **զալիսն** Արգամայ» [4, էջ 180]: (Սրանից հետո, երբ Արտաշեսը ճաշի է գնում Արգամի մոտ, ինչ-որ կասկած է ծագում, իբր թե դիտավորություն ունեն թագավորին դավելու, ուստի թագավորի որդիները աղմուկ են բարձրացնում և հենց ճաշի ժամանակ քաշում են Արգամի ալևոր **մազերը**, էջ 117):

Ական, ական - գոյ. աչք. «Թէպէտ և Արշակ կարծեաց զանխուլ գործել զչարիսն՝ այն որ ոչն ծածկի յամենատես **ականէն** Աստուծոյ, յայտնի և աշխարհի...» [4, էջ 285]: (Թեպետ կարծում էր Արշակ, թե այդ չարիքները թաքուն գործեց, բայց ինչ որ չի ծածկվում աստծու ամենատես **աչքից**, հայտնի է դառնում և աշխարհին..., էջ 185):

Ական - գոյ. աղբյուր. «Հասանէ ի միջոց աշխարհիս, վերագոյն քան **զակունս** Մօրին մեծի, յափն Երասխայ...»[4, էջ 106]: (Հասնում է մեր աշխարհի միջավայրը. Մեծամորի **ակունքից** վեր, Երասխի ափը..., էջ 68):

Ական – գոյ. թանկագին քար. «...և առանց ոսկւոյ և **ականց**, զկրտսեր մարգարիտն երեքտակեան վարսակալ ածել՝ յորժամ յարքունիս և ի տան թագաւորին շրջիցի» [4, էջ 110]: (... և մանր մարգարիտից երեք փաթ վարսակալ կրել առանց ոսկու և (թանկագին) **քարերի՝** երբ և թագավորի տանը շրջելիս լինի, էջ 70)՛

Աղեքսանդր - գոյ. անձնանուն. «Այս մատեան հրամանաւ **Աղեքսանդրի** ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյն ...»[4, էջ 31). (Այս մատյանն **Աղեքսանդրի** հրամանով քաղդեերեն լեզվից

թարգմանված է հունարենի , էջ 22)․

Աղեքսանդր – գոյ. տեղանուն. «ժողովեալ սրբոց հարցն յԱսիա ի ծովահայեացն Եփեսոս գրաւորական վերծանութեամբ, Կելեստինոս Հռոմայ, Կիւրոս **Աղեքսանդրի**, Յոբնաղիոս Երուսաղեմի… խոստովանեցին մի որդի Աստուծոյ զտէր մեր Յիսուս Քրիստոս, և աստուածածին զամենասուրբ կոյսն Մարիամ» [4, էջ 342)։ (Ասիայի ծովահայաց Եփեսոս քաղաքում ժողովվեցին գրավոր վավերագիրների ընթերցմամբ սուրբ հայրերը. Կելեստինոսը՝ Հռոմի եպիսկոպոսը,Կյուրեղը՝ **Աղեքսանդրիայի**, Հոբնաղը՝ Երուսաղեմի… մի որդի աստծո դավանեցին մեր տեր Հիսուս Քրիստոսին, և ամենասուրբ Մարիամ կույսին (դավանեցին) աստվածածին, էջ 226)։

2.Եթե տվյալ բառը միևնույն ձևով հավասարապես հանդես է գալիս երկու և ավելի խոսքի մասերի ոլորտում՝ համապատասխանաբար արտահայտելով տարբեր խոսքիմասային իմաստներ, այն բանի հետևանքով , որ տարբեր խոսքի մասերի համար այդ բառը տարբեր ձևեր չունի և չի կարող կազմվել, ապա ունենք համանունություն։

Տարբեր խոսքի մասերին պատկանող և տարբեր իմաստներ արտահայտող համանուններ.

ա.Երբ բնագրային օրինակներից մեկում միևնույն բառը հանդես է գալիս ածականի, մի այլ օրինակում՝ գոյականի արժեքով։ Պատմիչի երկում այդպիսի կիրառություն ունեն **ազատ, ամուր , երէց, խոր, կազուն, հետևակ** բառերը։

Ազատ,ի,աց-ած.«...քաջ արանց է յարձակ դաշտի և **յազատ** տեղւոջ կռուել » [4, էջ 290)։ (Քաջ տղամարդիկ կռվում են արձակ դաշտում և **ազատ** տեղում, էջ 188)։

Ազատ , ի աց - գոյ. «… յօտարութիւն վտարումն **ազատաց** և անթիւ նեղութիւնք ռամկաց» [4, էջ 365)։ (...դեպի օտարություն են աքսորվում **ազնվականները**, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, էջ 239)։ Օրինակներից առաջինում **ազատ** բառը ածական է, իսկ երկրորդում՝ գոյական։

Ամուր-ած. «...յորժամ պարսիկքն զմերն շրջէին՝ նոքա ի

վահանափակ Յունաց իբր **յամուր** քաղաք մտանէին» (4, էջ 303): (...սրանք մտնում էին Յունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իբրև մի **ամուր** քաղաք, էջ 197):

Ամուր, -րի. -րաց, կամ -րո, -ոց - գոյ. «...հրաման տայ Սմբատայ՝ երթալ **յամուրն** Բագարան» [4, էջ 175]: (...հրամայում է Սմբատին գնալ Բագարան **ամրոցը**,էջ111):

Երէց - ած. «Եւ յաջորդեաց զաթոռն **երէց** եղբայր նորին Վրթանէս» [4. էջ 244]: (եվ աթոռը հաջորդեց նրա **մեծ** եղբայրը, Վրթանես, էջ157):

Երէց - գոյ.. .ժողովեցան Բիտոն և Բիկենդ **երիցունք** ի Հռոմ քաղաքէ» [4, էջ 239]! (...ժողովվեցին՝ Բիտոն և Բիկենդ **երեցները**՝ Հռոմ քաղաքից, էջ 155):.

Խոր, -ոյ, -ոց - ած. «...գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանունս բղխեալ՝ անդ ետեղագրեաց զքաղաքն. զորով շրջափակեալ **խոր** փոսիւ՝ անդնդալիր հաստատեաց զհիմունս պատուիրանին» [4, էջ 339]: (...գտավ մի տեղ, որտեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ՝ մաքուր ջրերով և այդտեղ գծեց քաղաքի տեղը: Նրան շրջապատեց **խոր** փոսով, էջ 224):

Խոր - գոյ. «...և աղմկեալ ի ցնորից իմն խելազարանաց, ընդվայր յածելով երիվարաւն՝ անկանի ի **խոր** իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի» [4, էջ 191]: (...հանկարծ ինչ-որ ցնորքից շփոթվում, խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր **փոսի** մեջ և այնտեղ խորասուզվում անհետանում է, էջ 124):

Կանգուն, -ոյ, -ոց կամ -նի, նաւ - ած. «... տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձև բլուր մի... իսկ ի միջօրեայ կողմանէ դէպ ուղիղ առ երկին հայելով՝ քարանձաւ **կանգուն** անշեղ» [4, էջ 51]: (...տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր... իսկ միջօրեական (հարավային)՝ ուղղահայաց դեպի երկինք բարձրացած քարանձավ **կանգուն** անշեղ, էջ 34):

Կանգուն - գոյ. «...այլ նորա հասեալ՝ վազեաց զԵփրատաւ առաւել քան զլակոնացին Քիոնեայ վազսն քան և երկուց կանգնոց չափ» [4, էջ 308]: (... իսկ նա հասնելով, վազելով թռավ Եփրատի վրայով, ավելի քան լակոնացի Քիոնեսի վազքը

քաներկու **կանգունի** չափ, էջ 201):

Հետևակ, ի, աց - ած. «Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ **հետևակ** զորաց. գայ հասանէ ի հիւսիսի» [4, էջ 34]: (Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և **հետևակ** զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, էջ 24):

Հետևակ - գոյ. «Եւ իբրև հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի՝ Արգամայ առեալ զբազմութիւն **հետևակացն**՝ ի կողմն ելանէր» [4, էջ 271]: (Երբ Արտաշեսի նշանները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը **հետևակների** բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց, էջ 109):

Երբ բառերի և բառաձևերի քերականական երկարժեքությունը կամ եռարժեքությունը գիտակցվում է նաև խոսքից դուրս, ապա դրանք քերականակն՝ որակապես տարբեր իմաստներ արտահայտող բառերի կամ բառաձևերի ձևաբանական համանուններ են:

բ. Համանուններ, որոնք, բացի ածական և գոյական խոսքի մասերից, հանդես են գալիս նաև այլ խոսքիմասային արժեքներով:

Համանունական խմբի կազմում կարող է լինել յուրաքանչյուր բառ՝ անկախ նրանից, թե որ խոսքի մասին է պատկանում այն: Համանուն բառերի ուսումնասիրությունը թերի կլինի, եթե սահմանափակվենք լոկ լիիմաստ բառերի քննությամբ: Լիիմաստ բառեր են գոյական, ածական, թվական, բայ, մակբայ խոսքի մասերը: Թերիմաստ բառերը, ի տարբերություն լիիմաստ բառերի, հասկացություն չեն անվանում, այլ արտահայտում են քերականական կապակցական հարաբերություններ: Թերիմաստ բառեր են կապերը, շաղկապները, եղանակավորող բառերը, ձայնարկությունները, նախդիրներն ու նախադրությունները:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ կան դերանուն//շաղկապ, գոյական// եղանակավորող բառ, գոյական//նախդիր, մակբայ//նախդիր, մակբայ//նախադրություն

ձևաբանական արժեքներով համանուններ: Օրինակ'

Այլ - դեր. «Բազում և այլ գործք քաջութեան ի սմանէ գտանին կատարեալ [4, էջ 47]: (Սա **ուրիշ** շատ քաջության գործեր էլ ունի կատարած, էջ 31):

Այլ - **շղկպ**. «… և ոչ յոք ապաւինեցան, **այլ** ամրացան ի մայրիս լերանց իւրեանց» [4, էջ 313]: (...և ոչ ոքի չապավինեցին, **այլ** ամրացան իրենց լեռների անտառներում, էջ 204):

Հանդերձ - **գո**յ. «...թողեալ այնուհետև զպերճագոյն **հանդերձսն**, խարազնազգեստ եղեալ՝ իշով շրջէր մինչև ցօր մահուան իւրոյ» (4, էջ 295]: (Նա հրաժարվեց շքեղ **զգեստներից** և մազեղեն հագնելով՝ իշով էր ման գալիս մինչև իր մահվան օրը, էջ 192):

Հանդերձ - **նախադր.** «...զոր կալեալ Արշակայ՝ տարաւ ի Պարթևս **հանդերձ** երկաթեղէն կապանօք» [4, էջ 103]: (...որին Արշակը բռնելով՝ երկաթե շղթաներով **հանդերձ** տարավ պարթևների աշխարհը, էջ 66):

Կան ձևաբանական տարբեր հատկանիշներով համանուններ, երբ միևնույն բառը հանդես է գալիս երեք և ավելի խոսքիմասային արժեքներով, ինչպես՝

Կամ - **շղկպ** «...հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր. և աղանդոյդ բորբորիտոնաց՝ կամ հաւանեցուցանել, կամ հալածել ի քումմէ վիճակէդ» [4, էջ 336]: (...ինքնակալ Աւգոստոսի հրամանով քեզ իրավունք է տրվում ուսուցանել մեր կողմի (Հայաստանը), իսկ բորբորիտոնների աղանդը **կամ** հավանության բեր **կամ** հալածիր քո վիճակից, էջ 220):

Կամ - **բայ**. «Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել… որ **կայ** հաստատուն...մինչև ցայսօր ժամանակի» (4, էջ 52]: (Եվ հրամայում է՝ նախ գետի ամբարտակը շինել… որ մինչև այժմ… հաստատ **մնում է,** էջ 34):

Կամ - **գոյ**. «...ապա թէ ոչ է հաճոյ քեզ այս, և իւրեանց **կամաւ** դարձցին առ քեզ նախարարքս՝ ոչ արգելում» [4, էջ 311]:

(Իսկ եթե այս քեզ հաճելի չէ, և նախարարներն իրենց **կամքով** կամենան դառնալ, ես արգելք չեմ լինի, էջ 202):

Մօտ-մկբ. «Եւ **մօտ** անցեալ՝ աջողեցաւ ձգել զուլինն [4, էջ 107]: (Եվ **մոտ** հասնելով՝ հաջողվեց սվինը գցել, էջ 68):

Մօտ - ած. «.. .և ձեռագործ լիճ կառուցեալ. յորոց օդոցն քաղցրախառնութիւն փչեցեալ, որ ի լճէն բերանք արձակին ի ծով և որք ի ծովէքն **մօտի** ելոյ» [4, էջ 345]: (...և շինված է արհեստական լիճ, որի պատճառով բարեխառն օդ է շնչում թե այնտեղից, ուր լճի ջրերը դեպի ծովն են հոսում, թե ծովին **մոտ** տեղերից, էջ 227):

Մօտ-նախադր. «...շինէ անդ... երկուս տունս, զմին յարևելս կոյս, **մօտ** յակունս աղբերացն...իսկ միւսն յարևմուտս կոյս» (4, էջ 40]: (...շինում է երկու տուն, մեկը դեպի արևելք, լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների **մոտ**, իսկ մյուսը՝ այդ տնից դեպի արևմուտք», էջ 27):

Առ և ընդ նախդիրները երկում հանդիպում են չորս տարբեր հոլովաձևերով՝ արտահայտելով շարահյուսական տարբեր իմաստներ, օրինակ՝

Առ - նխդր. (տր. հոլ.) «այժմ **առ** մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք» [4, էջ 11] (...այժմ գտնվում են մեզ **մոտ** անթիվ քանակությամբ գրություններ, էջ 8): Այս օրինակում **առ** նախդիրը, կիրառվելով տրական հոլովով, արտահայտում է տեղի պարագայի իմաստ:

Առ - նխդր.(հայց հոլ.) «Արդ վասն այնորիկ գրեցի ես **առ** քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես **առ** իս» [4, էջ 149): (Այս պատճառով քեզ գրեցի աղաչելով, որ նեղություն կրես, գաս ինձ **մոտ**, էջ 96): Այստեղ երկու անգամ կիրառված **առ** նախդիրը նույնպես տեղի պարագա է, ունի ուղևորման հայցականի արժեք.

Առ - նխդր. (**բաց.** և **գործ,** հոլ) «...և զհետ մտանելով զօրացն Պարսից **առ** պատճառէ, որպէս թէ փախստական վարելով զնա ընդ Ասորեստան՝ հանեն **առ** եզերբ սահմանացն Ատրպատակաի ընդ մէջ Կորդուաց» [4, էջ 211): (... նրան ձևի համար հետամուտ են լինում Պարսից զորքերը և իբրև թե փախցնելով քշում են

Ասորեստանով, բերում հանում են Ատրպատականի սահմանների **մոտ** Կորդուքի միջով, էջ 136):

Ընդ - նխդր. (**սեռ.** հոլ.) «...զի ասէ ի բազմաց այլոց նախ յաղագս ծննդեանն Շամիրամայ, և ապա զպատերազմն Շամիրամայ **ընդ** Զրադաշտի և զյաղթելն ասէ Շամիրամայ» [4, էջ 56): (.. .որովհետև նա ուրիշ շատ բաների թվում խոսում է նախ Շամիրամի ծնունդի մասին, հետո դնում է Շամիրամի պատերազմը Զրադաշտի **հետ** և նրան հաղթելը, էջ 37.):

Ընդ- **նխդր**. (տր. հոլ.) «...և ի ժամանակս Խոսրովու հօրն Տրդատայ խնամեցեալ **ընդ** ումեմն քաջի Բասղացն եկեալհատուածի» [4, էջ 187]: (Տրդատի հոր՝ Խոսրովի ժամանակ նրանք խնամիացան բասիլների գաղթականներից մի քաջի **հետ**... էջ 122):

Ընդ - **նխդր.** (հայց, հոլ.) «...սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն **ընդ** արևելս մինչև ցդաշտ մի» [4, էջ41]: (նրա ժառանգության սահման է կտրում ծովից **դեպի** արևելք մինչև մի դաշտ, էջ 28).

Ընդ - **նխդր**. (**գործ**. հոլ.) «ԶԱրշակ մեծ...ապստամբեալ ասեն ի Մակեդոնացւոց և թագաւորեալ ի վերայ ամենայն արևելից և Ասորեստանեայց... հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս **ընդ** իւրով ձեռամբ» [4, էջ 28]: (Պատմում են, թե Արշակ մեծը...ապստամբեց մակեդոնացիների դեմ, թագավորեց բոլոր Արևելքի և Ասորեստանի վրա.. . և բոլոր տիեզերքը հնազանդեցրեց իր ձեռքի **տակ**, էջ 20):

Հանդիպում են համանուններ, որոնք մի դեպքում լիիմաստ բառեր են, մի այլ դեպքում՝ թերիմաստ: Օրինակ՝

Մինչ- նախադր. « Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգքն... ի լեռնէն , որ զհարաւով՝ իջեալ **մինչ** ի դաշտաբերանն մեծ» [4, էջ 108]: (Այստեղ նա կանչեց եկվոր վայրենի ցեղը...որ լեռան հարավային կողմից իջնում են **մինչև** մեծ դաշտի բերանը, էջ 69):

Մինչ - մկբ. «Դարձեալ **մինչ** երբեմն ումն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստ՝ և հարսնդ ոչ

աղտեղացար» [4, էջ 359]: (Մյուս անգամ էլ, երբ մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու, հարսդ, չապականվեցիր, էջ 236):

Մինչ - շղկպ. «**Մինչ** դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ում թագաւորեմ» [4, էջ 192]: (Երբ դու գնացիր, ՈՒ բոլոր երկիրը քեզ հետ տարար, Ես այս ավերակների վրա Ինչպես թագավորեմ, էջ 124):

Հայոց պատմության համանուններից են նաև այն բառերը, որոնք հանդես են գալիս նույն խոսքի մասի տարբեր դրսևորումներով, ինչպես **ո**-ն՝ մի դեպքում՝ որպես հարաբերական, մի այլ դեպքում՝ որպես հարցական դերանուն, կամ **ով որ**, **որչափ, որպէս, ուր** դերանունները, **եմ** բայը' էական և օժանդակ բայերի, **իւր**-ը՝ ստացական և անձնական դերանունների արժեքներով: Օրինակ՝

Ո - հարց. դեր. «...և հաստատեալ զթագաւորութիւն իւր՝ կամ եղև գիտել սորա, թէ **ո՞յք** արդեօք և որպիսի՞ արք տիրեալ իցեն ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ցնա (4, էջ 29]: (.. իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե **ո՞վքեր** արդյոք և ինչպիսի՞ մարդիկ տիրելիս են եղել հայոց աշխարհի վրա իրենից առաջ, էջ 20):

Ո - հարաբ. դեր. «Յորմէ պահեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, և զամենեսեան՝ **ոյք** երկրպագեն նմա ճշմարտութեամբ» [4, էջ 366]: (Որից փրկե Քրիստոս աստված մեզ և բոլորին, **որոնք** ճշմարտությամբ երկրպագում են նրան, էջ 239)

Ո՞վ որ - հարց. դեր. «...**ո՞վ որ** տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց» [4 էջ 248]: (ո՞վ մեզ տուն կամ իջևան պատրաստեց, էջ 160):

Ով որ –հարաբ. դեր. « Եւ քննեալ թէ **ով որ** նա իցէ՝ եղև վերահասու, թէ նա է Արտաւազդ յազգէն Մանդակունեաց» (էջ 4, էջ 217): Եվ քննելով, թե **ով** է այդ մարդը, իմացավ, որ Արտավազդն է. Մանդակունիների ցեղից, էջ 141-142) :

Հոդվածի շրջանակներում բնագրի բոլոր օրինաները հնարավոր չէ ներկայացնել:

Երկում կան մի շարք հասարակ գոյականներ, որոնցից առաջացել են հատուկ անուններ. Դրանք կիրառված են հատուկ և հասարակ անունների նշանակությամբ, ինչպես՝ աստուած//Աստուած, արեգակն//Արեգակն, արձան//Արձան, արմատ//Արմատ, աւետիք//Աւետիք, բազուկ//Բազուկ, բլուր//բլուր, գեղ//Գեղ, գինդ//Գինդ, գիւտ//Գիւտ, երկրորդ//Երկրորդ (Գիրքերկրորդ), լուսաւորիչ//Լուսաւորիչ, կեսար//Կեսար, հեր//Հեր, ձոր//Ձոր, մար//Մար, յոյն//Յոյն, յունական//Յունական, նաւասարդ//Նաւասարդ. Որդի//Որդի, պահլաւիկ//Պահլաւիկ, պէտք//Պէտք (ի հիւսման պատմութենէ Պիտոյից), սուր//Սուր, վահան//Վահան, տուրք//Տուրք, փրկիչ//Փրկիչ: Օրինակ՝ **Աստուած**. «Իսկ իբրև եկն յաղթողն Կոստանդիանոս՝ մատնեաց **Աստուած** ի ձեռս նորա զԼիկիանոս» (4, էջ 237):(Իսկ երբ հաղթող Կոստանդիանոսն եկավ, **Աստված** նրա ձեռքը մատնեց Լիկիանոսին, էջ 153)

Աստուած. «Լիզեալ **աստուածոցն** զԱրայ և կենդանացուցեալ լիցին զփափագ մեր և զհեշտութիւն … » [4, էջ 50]: («աստվածներնԱյին լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափագն ու ցանկությունը կատարեցին», էջ 33):

Աւետիք. «...Վկայէ այսմ բանիս և Յովսեպոս ի ճառին... ասելով, «Պոմպէի հուպ յԵրիքով հասանեն **աւետիք** մահուանն Միհրդատայ» [4, էջ 130]: (Այս բանին վկայում է և Յովսեպոս՝ բալասանին վերաբերող գլխում, ասելով «Երիքովի մոտ Պոմպեոսին հասնում է Միհրդատի մահվան **ավետավոր** լուրը», էջ 84)․

Աւետիք. «Վասն զի Մովսէս բարձեալ լինի, և Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդել յերկիրն **Աւետեաց»** [4 , էջ 360]: (Որովհետև Մովսեսը վերացվում է, բայց Հեսուն չի հաջորդում, որ առաջնորդեր դեպի **Ավետյաց** երկիրը էջ 236) ՛

Արձան. «Զայս **արձան** բազում ժամանակս պատուեցին Պոնտացիք որպէս զառ ի յաստուածոցն գործ» [4, էջ 119]: (Այս **արձանը** պոնտացիները երկար ժամանակ պատվում էին իբրև աստվածների գործ, էջ77):

Արձան. «Ապա ելանեն անդր Յովհան և **Արձան**, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և Մեսրոպայ» [4, էջ 341]: (Ապա նրանց մոտ են գալիս նաև Հովհանն ու **Արձանը**, որոնց Սահակն ու Մեսրոպը դեռ ավելի վաղ էին ուղարկել , էջ 225):

Արեգակն. «...և ինքն շինեաց զբաղանիսն ի տեղւոջ սեանն, որ ունէր ստորագիր խորհրդական անուն **Արեգակն**, ըստ Թրակացւոց բառի Զեւքսիպոն, որոյ կոչմամբ յորջորջեցան և բաղանիքն» [4, էջ 238]: (...և իր կողմից շինեց բաղանիքը այն սյունի տեղում, որի տակ գրված էր խորհրդավոր **Արեգակ** բառը, թրակացոց լեզվով՝ Զևքսիպոն, էջ 154):

Արեգակն. «Երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյսն **արեգական**» [4, էջ 222]: (...հայրս նրան երդվել էր **արեգակի** լույսով, էջ 145):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է.Բ. Լեզվաբանության հիմունքներ. - Եր., 1987:
2. Աղայան Է. Բ. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը / Պատ. խմբ. Ն.Ա. Պառնասյան. - Եր., 1967:
3. Լեզվի և ոճի հարցեր. - Հ. 4. - Եր., 1977:
4. Խորենացի Մ. Պատմութիւն հայոց. - Եր., 1991:
5. Խորենացի Մ. Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմանությունը Ստ. Մալխասյանի). - Եր., 1990:
6. Պետրոսյան Հ.Զ. Հայերենագիտական բառարան. – Եր, 1986:
7. Պառնասյան Ն. Քերականական համանունները ժամանակակից հայերենում. - Եր. - 1979:
8. Աբրահամյան Ս.Գ. Չթեքվող խոսքի մասերը. - Եր. 1965:

ОМОНИМЫ В ЛЕКСИКЕ ((ИСТОРИИ АРМЕНИИ)) МОВСЕСА ХОРЕНАЦИ

Анализ лексики «Истории Армении» Мовсеса Хоренаци показал, что содержащиеся в ней омонимы можно подразделить на три группы: лексические, лексико-грамматические и смешанные. Лексические омонимы совпадают грамматически; лексико-грамматические совпадают значениями, но различаются грамматически; смешанные имеют различия по отдельным грамматическим категориям.

HOMONYMS IN THE VOCABULARY OF “ARMENIAN HISTORY" BY MOUSES KHORENATSY

Keywords: homonym, cognate, polysemantic, grammatical, linguistic, syntactic gychnwed that the homonyms found in the work can be classified.

The analysis of “Armenian History by Movses Khorenatsi homonyms and (3) mixed homonyms. Lexical homonyms into three groups: (1) lexical homonyms, (2) lexico-grammagrammatically; the mixed one have differences in match grammatically; lexico-grammatical match in meaning, but differ grammauca.y, separate grammatical categories.

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ՞, ԹԵ՞ ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ*

Խաչատրյան Օֆելյա

Վարդան պատմիչի՝ 1870թ. Երուսաղեմում լույս տեսած «Պատմութիւն թաթարաց» աշխատության և հեղինակի ով լինելու մասին կան տարակարծություններ: Ոմանց կարծիքով Վարդան պատմիչը Վարդան Արևելցին է, և սույն աշխատությունը պատկանում է վերջինիս գրչին, ոմանք էլ կարծում են , որ այդ երկը և Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը նույնն են, այսինքն կասկածում են, որ Վարդան պատմիչ անունով անձնավորություն է գոյություն ունեցել:

Այժմ ներկայացնում ենք փաստեր՝ ճշմարտությունը բացահայտելու համար.

Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի տիտղոսաթերթի առաջին էջի վրա գրված է. «Նշխարք հայ մատենագրութեան», Պատմութիւն թաթարաց,

յԵրուսաղէմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց»,1870 [1] : Հաջորդ էջում [2] «Պատմութիւն թաթարաց ***Վարդանայ պատմիչի*** հանեալ ի ձեռագիր օրինակաց թանգարանի սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ , ի տպարանի սրբոց Յակովբեանց , 1870»: Նույն գրքի առաջաբանում կարդում ենք. «Առաջին հատոր նշխարացս Հայ մատենագրութեան փութամք 'ի լոյս ընծայել, որ պատմէ **զծագմանէն և զբարոյից և զպատերազմաց Թաթարաց**: Եւ գրեալ է *Վարդանայ պատմչի* յաշակերտացն Վանականայ Վարդապետի 'ի ժգ դարու. 'ի 1247 և ընդօրինակեալ 1272. և օրինակն զոր ունիմք 'ի ձեռս, ձեռագիր է նորին **Գրիգորի երիցու Ականց անապատի 'ի Կիլիկիա:** Օրինակս չունի առանձին յիշատակարան զգրողէն.

---

* Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Գ. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին, Երևան, ‹‹Ասողիկ›› հրատ., 2017, էջ 191-201:

[1] *«Նշխարք հայ մատենագրութեան, Պատմութիւն թաթարաց, յԵրուսաղէմ,ի տպարանի սրբոց Յակովբեանց»*,1870:

[2] Նշվ. աշխ., էջ 2:

սակայն ի լուսանցս օրինակին ուրեք ուրեք տեսանի գրեալ նովին ձեռագրով. «Ողորմեա՛ տէր, Վարդանայ ծառայի քո»: Նա եւս կից է օրինակս Միխայելի Ասորւոյ կաթողիկոսի **ժամանակագրութեանն,** որ յայտնի թարգմանութիւն է ***նորին Վարդանայ*** 'ի յիշատակարանին ծանուցեալ: **Ե՛ւ լեզու , և՛ ընթացք պատմութեանն իսկ վկայեն զաա նորին լինել հեղինակութիւն:** Յորում 'ի պատմութեանս Թաթարաց պատմի և զՀայոց թագաւորութենէ, որով և մասն համարի պատմութեան Հայոց: Զոր 'ի գլուխս գլուխս բաժանեալ ըստ զանազանութեան պարագայիցն 'ի սմա պատմելոց, տամք ի տպագրութիւն»[3] : Փ. Անթապյանը իր՝ Վարդան Արևելցուն նվիրված երկհատոր մենագրության մեջ գրում է, որ Վարդան Արևելցին 1248թ. **Ասորի իշխող քահանայապետի աշխատակցությամբ** է թարգմանել Միխայել Ասորու «**Ժամանակագրությունը**»: Բնականաբար Վարդան պատմիչի մասին գրքում ոչ մի տեղեկություն չկա: Վարդան Արևելցու մասին մեծարանքի խոսքեր են արձանագրված իր ժամանակակիցների՝ Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Ակնեցու և այլոց կողմից:[4] Անթապյանը անդրադառնում է 18-րդ դարի 70-ական թթ. Վ. Արևելցու վերաբերյալ քննական-վերլուծական տարբեր կարծիքներին: Մ. Չամչյանը սխալմամբ նրա ծննդավայրը համարում է Կիլիկիայի Բարձրբերդը և շփոթում Վ. Արևելցուն Վ. Բարձրբերդեցու հետ, նաև նրան է վերագրում Վ. Այգեկցու առակները, իսկ **Դիմանջին հեղինակ է ճանաչում այլ ումն Վարդանի , Վահրամի կամ Վարխանի, որոնք անհիմն են:**[5]

Մեր կարծիքով այդ կասկածները անհիմն չեն: Մ. Չամչյանին հետևել են Մաղաքա Թեոփիլյանցը, Քերովբե Պատկանյանը, Գրիգոր Զարբհանալյանը, Է. Դյուլորիեն, Ժան Սեն Մարտենը և ուրիշներ: Վարդան Բարձրբերդեցու անունով էլ

[3]Նշվ. աշխ., էջ 3:

[4] **Փ. Փ. Անթապյան**, *Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը*, գիրք Ա, Ե., 1987, էջ 5:

[5] Նշվ. աշխ., էջ 11:

լույս են տեսել Վարդան Արևելցու «**Մեկնութիւն սաղմոսաց» և «Հավաքումն պատմութեան»** (**վերջինը տպագրված «Պատմութիւն տիեզերական**»վերնագրով) գործերը: Հետագա հետազոտողներ Ղ. Ալիշանի, Ն. Մառի, Ս. Ամատունու, Ն. Ակինյանի, Հ. Ոսկանյանի, Գ. Հովսեփյանի, Հ. Անասյանի ջանքերով ստեղծվում է որոշ հստակություն, սակայն դեռևս պարզաբանման խնդիրներ կան:

Պատմագիր-աշխարհագրագետ Վարդան Արևելցին իր «**Հավաքումն պատմութեան**» ստեղծագործության նյութերը քաղել է հատկապես 13-րդ դարի կեսերի ձեռագիր ընդօրինակողներից... որոնց քաղագրություն լինելը բացահայտ է[6]: Քանի որ երկու Վարդաններն էլ նույն դարաշրջանի հեղինակներ են, ուստի կատարելով ժամանակագրական, պատմական, լեզվական տարաբնույթ համեմատություններ՝ նկատել ենք հետևյալը.

1. երկու հեղինակների նյութն էլ վերաբերում է մոնղոլ-թաթարների պատմությանը:
2. Ապրել են նույն ժամանակաշրջանում:
3. Երկուսի գործերում էլ կան նույն կամ հնչյունական որոշ տարբերություններով բառեր, սակայն կան և զգալի քանակով անձնանուններ ու տեղանուններ, և դրանցից ոչ մեկը չի կրկնվում մյուսի երկում:
4. Վարդան պատմիչի երկը կազմված է տիտղոսաթերթերից, առաջաբանից և տասնյոթ գլուխներից՝ համապատասխան վերնագրերով, իսկ Արևելցունը՝ ութսունինը անվերնագիր գլուխներից:
5. Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը թաթարների ծագման, բարոյականության և պատերազմների մասին է, գրի է առնվել 1247-ին, իսկ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկը սկսվում է Բաբելոնյան աշտարակաշինությունից, Հայկի ու Բելի կռվից և հասնում մինչև հայոց կաթողիկոս Կ. Բարձրբերդեցու մահը

[6] Նշվ. աշխ., էջ 39:

(1267թ.):

6. Փ. Անթապյանը գրում է, որ **1248թ.** Միխայել Ասորու «**Ժամանակագրութիւնը**» Ասորի Իշխող քահանայապետի աշխատակցությամբ թարգմանել է Վ. Արևելցին, մինչդեռ «Պատմութիւն թաթարաց»-ում ասվում է, որ **1247**-ին վանական վարդապետի աշակերտներից **Վարդան պատմիչի** ձեռքով գրված «Պատմութիւն թաթարաց»-ին կից է Միխայել Ասորի կաթողիկոսի «**Ժամանակագրութունը»,** և հիշատակարանում արձանագրված , որ **այն նույն Վարդանի հայտնի թարգմանությունն է** [7] **Այստեղ ակներև է և՛ հրատարակման տարեթվերի, և՛ թարգմանիչների** տարբերությունը:

7. Փ. Անթապյանի՝ Վ. Արևելցուն նվիրված երկհատոր մենագրության մեջ արձանագրված հեղինակի բազմաբնույթ ու բազմապիսի վերնագրերի կողքին մեզ չի հանդիպում «Պատմութիւն թաթարաց » խորագրով աշխատանք:

8. Համեմատելով երկու հեղինակների գործածած հատուկ անունների ցանկերը՝ պարզել ենք, որ հիսունչորս անձնանուն և երեսունմեկ տեղանուն Վ. Արևելցու ցանկում չկան: Այդպիսի անձնանուններ են՝ Ադամ, Ամիր Քուրդ, Աթաբակ, Այթանա, Այլթանա խաթուն և այլն, տեղանուններ են՝ Աբլաստ (ի մէջ Աբլստին), Աթլ (գետ), Ալտաղ, Ախշարք, Աղի ծով, Անուանք, Արեւելք, Բենալ և այլն: Իսկ Նետողաց ազգ, Յեսաւ, Յիսուս Քրիստոս, Հազար, Կենդուրա, Իմրան, Եղոմայեցիք, Տաթար, Գովգ և այլ հատուկ անունները կան երկու հեղինակների երկերում էլ:[8]

9. Վարդան պատմիչի երկը բաղկացած է 76 էջից, 17 գլուխներից՝ առանձին վերնագրերով, մինչդեռ Վարդան Արևելցունը՝ 184 էջից՝ մեկ ընդհանուր «Հաւաքումն պատմութեան» խորագրով, 18 ենթագլխից՝ առանց վերնագրերի: Որոշակի հատվածներ համադրելու և շարադրանքի

---

[7] *Պատմութիւնթաթարաց,* Երուսաղէմ, 1870, էջ 8:

[8] **Վարդան պատմիչ**, *Համաբարբառ*, Ե., 1979, էջ 553-579:

նմանությունն ու տարբերությունը ճշտելու համար ընտրել ենք հատուկ անուններ և գտել նույն ժամանակաշրջանի և նույն պատմական անձանց նվիրված տողեր, պարզել, որ գործ ունենք միանգամայն այլ բովանդակության ու լեզվական տարբեր շարադրանքների հետ: Օրինակ՝ **Փնտուխտար** անձնանվան դիմաց Վ. Արևելցու երկում կարդում ենք նրա չարագործությունների [9] , իսկ Վ. Պատմիչի երկում՝ նույն անձի բարության մասին [10] : Նույնը կարելի է արձանագրել Սմբատ սպարապետի և 663թ. պատմական դեպքերի մասին , օրինակները շատ են:

Համադրելով երկու հեղինակների շարադրանքները' համոզվում ենք, որ նրանք տարբեր անձինք են:

Ինչ վերաբերում է Հեթում պատմիչին, հայտնի է, որ 1294-1305թթ. եղել է հայոց սպարապետ, 1305-ին մեկնել Կիպրոս, ընդունել լատինադավանություն: 1307-ին

Կղեմոս 5-րդ պապի հանձնարարությամբ գրել է թաթար-մոնղոլների պատմությունը: Թեև նրա երկը նույն խորագիրն ունի, սակայն գրել է միանգամայն այլ հանգամանքներում: 1842թ. վարդապետ Հ. Մկրտիչ Ավգերյանը Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիներենից թարգմանել է գրաբար ՝ նրան կցելով նաև Հեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպական մի շարք պետությունների 1096-1307 թթ. շրջանի պատմությունից[11]:

Անդրադառնալով Վարդան Արևելցու և Վարդան պատմիչի գործերում նկատվող քերականական երևույթներին՝ ասենք, որ .

1. Երկուսի գործերում էլ հոգնակի թվի **ք** հոլովակազմիչով

---

[9] **Վ. Արևելցի**, նշվ. աշխ. , գլուխ 99, էջ 162:

[10] **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ., էջ 62: Վ. Արևելցի, նշվ. աշխ. էջ162:

[11] *Հայկական սովետական հանրագիտարան*, հ.6, Ե., 1980:

ձևերը շատ են **/այք, եայք, իք, ինք, ոյք, ունք**/, բայց **ան, անի, եան, եար, եր, իկ, ական, նեար, որայ, որեայ, տի, ուտի, ուի, արան** հավաքական հոգնակերտներով օրինակներ գրեթե չկան: Կրկնակի **որեայ+ք, եան+ք** հոգնակերտներով մեկ-երկու օրինակ հանդիպում է երկու հեղինակների երկերում էլ: Վարդան պատմիչի երկում գործածվել են

2. Հետգրաբարյան շրջանին բնորոշ **եր** հոգնակերտով ձևեր, իսկ Վարդան Արևելցու երկերում՝ ոչ, օրինակ՝ «Իսկ եթէ զի՛նչ նմանութիւն ունէր առաջին Տաթարն, ասասցուք և զայն ևս: Զի ոչ էին իբրև զմարդ առաջինքն, որ եկին ի վերին երկիրն. այլ էին ահագինք տեսողաց և անպատմելիք. զի զլուխն մեծ էր իբրև զգոմիշու, աչք**եր**ն նեղ՝ **իբրև** զձագու, քիթն կարճ՝ **իբրև** զկատուի. դունչն՝ մռունջ **իբր**և զշան, մէջքն՝ բարակ **զինչ** մրջման. ոտն**եր**ն՝ կարճ **զերթ** խոզի. մորուս բնաւ իսկ չունէին. տաւլաթ (հզորություն) ունէին զառիւծու. ձայնն ճչող **զերդ** արծուի. ուր չպատմէր, անդ գտանէր [12] »: Բերված հատվածը հետաքրքրական է նաև նրանով, որ բացի –**եր** հոգնակերտ մասնիկից՛ հեղինակը զուգահեռաբար գործածել է **իբրև**-ին համարժեք **զերդ, զերթ և զինչ** նախադրությունները, որոնք ոճական արժեք ունեն, **բերդերացն** բառաձևի մեջ առկա են հետգրաբարյան հոգնակերտ **եր** մասնիկը և գրաբարյան **աց** հոլովակազմիչը: **Զինչ**-ն էլ բնորոշ է միջին հայերենին: Ինչպես երևում է , բերված հատվածում նույն բառում առկա են հետգրաբարյան շրջանին բնորոշ հոգնակերտ **եր** մասնիկը և գրաբարյան **աց** հոլովակազմիչը[13] «...և եդեալ ի վերայ բերդ**երաց**ն հիսար (պաշարող) անհամար հեծելովք. և առին զառաջինն զՇամքաւր հուպ առ Գանձակ. որ յառաջ առեալ էին [14]»: **Ղան** հատուկ անվան **եր** հոգնակերտով կիրառությանը զուգահեռ

---

[12]**Վարդան պատմիչ**, նշվ. աշխ, էջ 15, 16:

[13] **Վ. Պատմիչ**, նշվ. աշխ., էջ 16:

[14] **Վ. Պատմիչ**, նշվ. աշխ., ՆՀԲ-ում այս բառը չկա, բայց կա **հիսարել.** «Որ և խսարել. Բառ ռմկ. Որպես Պաշարել պատնշաւ: Ոսկիփոր: «Պատմութիւն թաթարաց », նույն տեղը:

առկա է նաև ** աց** հոլովակազմիչով տարբերակը, օրինակ՝ «մինչ զի վասն կարի քաջութեանն Ղան**եր**ն ոսկի սիւն անուանեցին զնա յետ բազում յաղթութեանց և պատերազմացն [15] »: Մի այլ հատվածում հանդիպում ենք նույն բառի աց-ով տարբերակի՝ «Եւթն որդիք եւթն Ղանաց[16]»:

1. Թեև նշված հեղինակները հանդես են եկել 13-րդ դարում, վերոնշյալ օրինակներից երևում է, որ Վարդան պատմիչի գործում դրսևորվում են նախորդ երկու ենթաշրջանների համեմատ թվի քերականական կարգի բացահայտ տարբերություններ, սակայն այդպիսի կիրառություն չի հանդիպում Վարդան Արևելցու գործերում: «Պատմութիւն թաթարացի» վերոբերյալ հատվածում նկատելի է նաև ոճական կիրառության դրսևորում՝ պեսպիսություն, ուր **իբրև, զինչ, զերդ, զերթ** բառերն ունեն և՛ ձևաբանական, և՛ իմաստային միևնույն արժեքը:

2. «...և տեղի բանակին այլ ոչինչ գտին. բայց միայն **զվրաննին** բազում ռոճկօք լցեալ»: Բերված նախադասության մեջ նշված գոյականը գրաբարին հատուկ չէ, ունի միջինհայերենյան բարբառային կիրառություն: [17]

3. **Դղեակ** գոյականը միևնույն տեքստում նույն թվով ու հոլովով գործածվում է և՛ **դղեակ**, և՛ **դղեկ** ձևերով, այսինքն տեղի է ունենում **եա** երկբարբառի հնչյունափոխություն: [18] Օրինակ՝ «.առին զՍազամ, զՔարհերձ, զՏերեւեն. զմեծ **դղեկն** թագաւորանիստ… Առին և գործով զամուր **դղեակն** զՏաւուշ, որ էր աթոռ Սուլտանի»[19]:

4. Վարդան պատմիչի երկում հանդիպում է **Բանիազնաց** բայը, որ ՆՀԲ-ում արձանագրված չէ, բայց կա

---

[15] Նշվ. Աշխ.31, էջ 34:

[16] Նշվ. աշխ., գլուխ Ժ, էջ 34:

[17] Նշվ. աշխ., գլուխ Զ, էջ 25:

[18] **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ., էջ16:

[19] Նշվ. աշխ. էջ 16:

բանագնաց լինել [20] . «Եւ ապա ելեալ Չաւրմանն վկայիւ **բանիագնաց** առ մեծ գլխաւորն իւրեանց Չանկըզ Ղանն և պատմեաց զամենայն խորհեալսն զիւրն և զերկուց գլխաւորացն.»:[21] Այսպիսի բառերի մի մեծ խումբ (մոտ 100 բառ), որ ՆՀԲ-ում վկայված չէ, հավանաբար հեղինակի անհատական բառակերտումներից է, արձանագրված է «Պատմութիւն թաթարաց» երկում:[22] Այստեղ նկատելի են հնչյունական մի շարք փոփոխություններ, որոնք, ըստ երևույթին, բարբառային-խոսակցական ծագում ունեն, օրինակ՝ ձայնեղների խլացում. բախտաւոր-**պաւխտախաւոր (28)**, Բաղդադ-**Պաղտատ (39)**, Սմբատ- **Սմպատ (27)**, Մահմեդ-**Մահմետ(40)**, շնչեղ խուլերի խլացում՝Թաթար-**Տաթար(26)**, Սուլթան-**Սուլտան(25)**, խուլերի ձայնեղացում՝ խորամնկ-**խորամանգ (26),** երկբարբառի պարզեցում՝ աներկիւղաբար-**աներկեղաբար (21)**, դղեակ-**դղեկ (16)**, վերջինը բարբառային կիրառություն է[23], **ի>ե** փոփոխություն՝ պիղծ-պեղծ **(9,37,69):**

5. Նշյալ աշխատության մեջ **վ** հնչյունը արտահայտված է **ու, ւ, վ** գրանշաններով՝ **պատուական-պատւական (22), թուով-թւով (38)**, մի օրինակում **ու** երկբարբառի հնչյունափոխություն կատարված չէ, օրինակ՝ **Հեթմաւ-Հեթումաւ(31)**, իսկ մի այլ բառում **ի** ձայնավորը ոչ թե հնչյունափոխվել է ւ-ի, այլ սղվել է , ինչպես' **Ասրուց- Ասրոց (44)**: **Կոստանդին** հատուկ անվան դիմաց հանդիպում ենք **ա-ը, ու-ա** ձայնավորների փոխարկման, ինչպես' **Կոստանդին-**

---

[20] Տե՛ս ՆՀԲ, հ. 1 էջ 433, « Բանագնաց լինել. պատգամաւորօք, կամ միջնորդօք խօսել »:

[21] Նշվ. աշխ., էջ 19:

[22] Օրինակ՝ *անասախ, խաղախ, սղամիշ, տզղու* և այլն, Տե՛ս **Ա. Մուրադյան, Օ. Խաչատրյան**, *Վարդան պատմիչի «Պատմութիւնթաթարաց» երկի նորաբանությունները,* միջազգային գիտաժողով նվիրված ՀՀ ԳԱԱ 70 ամյակին, Ե., 2014, էջ 228:

[23] Դղեակ, դղեկի, դղեկաց, գ. գրի և իբր ռմկ. դղեկ. բերդ, ամրոց, ամուր. տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 636:

Կոստընդին (31) և Հուլաւու Ղան-Հալաւու ղան (18) անվան դիմաց:

6. Հեղինակը բերում է մի հատված, որում ներկայացնում է Վրաստանի թագավորի որդուն՝ Դավթին: Ներկայացված հատվածը ոճական առումով ունի գեղարվեստական բարձր արժեք. «Եւ էր Դաւիթ որդի թագաւորին Վրաց երկայն հասակաւ և կորովի, գեղեցիկ պատկերաւ և թուխ մօրուօք. լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն Աստուծոյ: Եւ ապա հանեալ ի բանտէն, ազուցին նմա հանդերձս պատուականս... և առին հրաման ի մեծ Ղանէն, բերին նստուցին զԴաւիթ յաթոռ հօրն իւրոյ ի Տփխիս: Եւ իշխանքն Վրաց յոյժ ուրախացեալ անուանեցին զնա **Վարհամուլ** թագաւոր. այսինքն **Վարհամ էդիր** թագաւոր»: Ինչպես երևում է բնագրից, հեղինակը տալիս է նաև բառի իմաստի բացատրություն (Նշված անձնանունները Վարդան Արևելցու հատուկ անունների ցանկում չկան): Ահա ևս մեկ այլ օրինակ՝ «Եւ երթեալ ըստ յաջողելոյն Աստուծոյն ետես զՍային Ղանն այն յոյժ քրիստոնէասէր և բարեսէր: Վասն այնորիկ ազն իւրեանց անուանեցին զնա Սային Ղան. որ է ըստ լեզուին իւրեանց աղէկ և լաւ Ղան»:

Ոճական առումով բերենք հայ ժողովրդի ողբերգական վիճակը արտահայտող ևս մի հատված. «Եւ արդ՝ զո՛ր աղէտ և զպատահումն ժամանակիս գրեցից. զբաժանու՞մն հարց և մարց ի յորդւոցն, թէ զսիրելեաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն. զիւրեանց սեպհական ընչիցն առնու՞մն, թէ զգեղեցիկ ապարանացն ի հրոյ ծախումն. զմանկտւոյն ի գիրկս մարցն զենու՞մն, թէ զգեղեցիկ և զփափկասնունդ երիտասարդաց և զկուսից բոկ և մերկ գերումն»: Սույն հատվածում հանդիպում ենք ճարտասանական հարցի:

7. Վարդան Արևելցու երկում հաճախ են հանդիպում անցյալ դերբայի կողքին սեռական հոլովով ենթակայի դեպքեր, որը հատուկ է գրաբարին, իսկ Վարդան պատմիչի երկում՝ ոչ: Օրինակ՝ «Յորում աւուրս **նշկահեալ**/մերժել, անարգել,

արհամարհել/ **Արշակայ** զՎաղենտիանոս կայսր, և **նորա բարկացեալ** սպան զՏրդատ զեղբայր Արշակայ, որ կայր ի պատանդի: Եւ **գնացեալ** մեծին **Ներսիսի**, պատուի ի կայսերէ:[24] «Իսկ **Արշակայ սպանեալ** զԳնէլ եղբորորդի իւր, վասն Փառանձեմայ կնոջ նորա ի քուսթենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսէս, և ինքն գնայ ի Յոյնս»[25]:

Այսպիսով, մեր կարծիքով Վարդան Արևելցին ու Վարդան պատմիչը անկասկած երկու տարբեր անհատականություններ են. ունեն միանգամայն տարբեր գործեր՝ պայմանավորված հրատարակման տարեթվերի, երկերի բովանդակության, նրանցում կիրառված նորակազմությունների, անձնանունների ու տեղանունների զգալի մասի տարբերությունների, հնչյունական, ձևաբանական, շարահյուսական և ոճական կիրառությունների անհամատեղելիությամբ:

Kachatryan Ofelya-About Vardan patmich's personality and his «Patmutyun Tatarats» work.

- In the sphere of science are circulating two different mutually exclusive opinin-ons:

Vardan patmich or Vardan Areveltsi? «The Patmutyun Tatarats» of Vardan patmich and the «Havagumn Patmutyun» of Vardan Areveltsi is the same work.The comparative study clarifies that it is wrong to identify Vardan Areveltsi and Vardan patmich or the _Patmutyun T atarats of Hetum patmich with Vardan's same work.

Хачатрян Офелия- О личности Вардана патмича и его «Патмутн татарац» - сравнительное исследование выявляет что «Патмутюн татарац» написал Вардан патмич Вардана патмич и Вардана Ареведци - разные авторы с различными языковыми особенностями «Патмутян татарац» Гетума патмича и «Патмутюн

---

[24] **Վարդան Արևելցի**, *Հաւաքումն պատմութեան,* Վենետիկ, 1862, էջ 47:
[25] Նշվ. Աշխ. էջ 48:

татарац» Вардана патмича однозначно написаны в различных обстоятельствах и отождествление как авторов так и их произведений ошибочно.

ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

Հակոբյան Ֆրիդա

Քսաներորդ դարի երկրորդ կեսին ստեղծված լեզաբանական ուղղությունների թվում առանձնանում է *կորպուսային լեզվաբանությունը*՝ որպես խոսքային օրինակների միջոցով լեզվական իրողությունների ուսումնասիրության հետաքրքիր և ինքնատիպ եղանակ:

Կորպուսային լեզվաբանության բնագավառում ձեռք բերված մեծ հաջողությունները հիմնականում պայմանավորված են լեզվաբանության մեջ տեսական ու կիրառական տարբեր նպատակներով համակարգչային տեխնիկայի լայն գործածությամբ և այնպիսի ծրագրերի ստեղծմաբ, որոնց միջոցով ուսումնասիրվում ու ներկայացվում է լեզուն:

Ընդհանուր առմամբ՝ կորպուսային լեզվաբանությունը զբաղվում է լեզվական կորպուսների՝ մեծ, ներկայացուցչական, սահմանափակ ծավալ ունեցող և էլեկտրոնային եղանակով հասանելի հենքերի կազմությամբ: Լեզվական կորպուսների միջոցով փորձ է արվում ուսումնասիրել լեզուն՝ իր տարբեր դրսևորումներով և բովանդակային հարստությամբ:

Հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն արևելահայերենի ազգային կորպուսի՝ ԱՐԵՎԱԿ-ի [1] ստեղծմամբ, որը բավարար չէ թե՛ որակական առումով, թե՛ ընդգրկման ծավալով:

Քանի որ լեզվական ցանկացած իրողության համաժամանակյա և տարաժամանակյա լիարժեք քննությունը հնարավոր է

---

* «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 170-178:

[1] *http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am:*

կատարել միայն համապատասխան կորպուսի առկայության դեպքում, էապես կարևորվում է հայերենի նոր՝ *ընդհանրական կորպուսի* կազմությունը, որի հիմքում ընկած կլինեն համաշխարհային կորպուսային լեզվաբանության արդի փորձն ու հայերենի լեզվական առանձնահատկությունները: Մեր նպատակներից դուրս համարելով կորպուսի կազմության սկզբունքների լեզվաբանական և ծրագրային կողմի հանգամանալից ներկայացումը՝ կխոսենք միայն դրա կառուցման ուրվագծի մասին՝ առանձնացնելով կիրառության հիմնական ոլորտները:

Եթե լեզվական կորպուս ասելով հասկանում ենք տարբեր բնույթի տեքստերի ամբողջական հավաքածու, ապա պայմանականորեն մեկից ավելի տեքստերի ցանկացած ժողովածու կարող է կորպուս համարվել: Սակայն կան ընդհանրական մի շարք հատկանիշներ, որոնցով բնութագրվում են տեքստային հենքերն ընդհանրապես: Այդ հատկանիշներից ամենահիմնականն ու թերևս գլխավորն այն է, որ տեքստային հենքում եղած տեքստերի միջոցով պետք է ներկայացվի լեզուն: Հետևաբար, կորպուսը պետք է կազմել այնպես, որ, դրանում եղած տեքստերն ուսումնասիրելով, հետազոտողը ստանա լեզվական ցանկացած իրողության ամբողջական պատկերը: Հենքում եղած տեքստերը սկզբունքորեն կարելի է ուսումնասիրել երկու եղանակով: Առաջին դեպքում կարող ենք քննել բոլոր տեքստերը մեկ առ մեկ: Միանգամից նկատենք, որ այս սկզբունքը գործնականում կիրառելի չէ, որովհետև մեծ ցանկության դեպքում անգամ կարելի է միայն մեռած լեզուների տեքստային բոլոր օրինակները քննել, իսկ կենդանի լեզվում տեքստերն անթիվ են: Նաև որևէ կերպ հնարավոր չէ կազմել տեքստային ամբողջական հենք. մի կողմից՝ կարող են դուրս մնալ հազվադեպ գործածվող օրինակները, մյուս կողմից՝ ուշադրությունը բևեռելով միայն սակավ գործածական օրինակների վրա՝ կարող են չընդգրկվել նույնիսկ հաճախադեպ լեզվական օրինակները: Ստացվում է այնպես, որ մենք ամեն դեպքում կարող ենք քննել

միայն սահմանափակ թվով տեքստային օրինակներ, ուստի նոր կորպուսում տեքստերի ընդգրկման տեսակետից պետք է կարևորել ոչ թե դրանց քանակական շատությունը, այլ տարաբնույթ լինելն ու լեզվական հնարավորինս մեծ թվով տարբեր օրինակներ ներկայացնելը: Հետևաբար, ընդհանրական կորպուսի ամենաբնութագրական ու կարևոր հատկանիշը պետք է դարձնել ներկայացուցչականությունը:

Մյուս կարևոր հատկանիշը, որով լեզվական կորպուսը տարբերվում է այլ բնույթի տեքստային հենքերից, պիտակավորումն է, որը էական նշանակություն ունի յուրաքանչյուր կորպուսի օգտակարության հարցում: Այն համապատասխան պիտակների կցումն է բառային յուրաքանչյուր միավորի: Ընդհանրապես լեզվի կառուցվածքային տարբեր միավորների համար, ըստ լեզվական ուսումնասիրությունների նպատակի, կան պիտակավորման տարբեր տեսակներ՝ հնչյունական, բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական): Կարծում ենք՝ հայերենի ընդհանրական կորպուսի պիտակավորման համակարգը լիրաժեք դարձնելու համար նպատակահարմար է օգտագործել ինչպես հնչյունական, բառագիտական, այնպես էլ քերականական պիտակավորումը: ԱՐԵՎԱԿ-ում, օրինակ, կիրառվում են միայն ձևաբանական պիտակներ, որոնք, ըստ կորպուսի հեղինակների, արտահայտում են հայերենի խոսքի մասերի քերականական բոլոր կարգերը: Հարկ է ընդգծել, սակայն, որ առանձնացվող քերականական կարգերը երբեմն չեն համապատասխանում նորմատիվ քերականությանը: Օրինակ՝ առանձին խոսքի մաս է համարվում նախդիրը, առանձնացվում է վեց հոլով. սեռականն ու տրականը համարվում են առանձին հոլովներ, իսկ հայցականը ուղղականից չի առանձնացվում: Ածականի համեմատության աստիճանները համարվում են քերականական կարգ, ընդ որում՝ առանձնացվում է միայն գերադրական աստիճանը, բաղդատականը՝ ոչ: Բայի եղանակներից ներկայացվում են միայն երեքը՝ ըղձական, ենթակայական, հրամայական:

Ենթակայական եղանակն առանձնացնելիս հեղինակները հավանաբար նկատի են ունեցել ենթադրականը: Իբրև քերականական կարգ է առանձնացվել գոյականացումը՝ իր գոյականացված, անորոշ դերբայ, հարաբերական գոյական տեսակներով՝ նկատի ունենալով այլ խոսքի մասերի գոյականաբար գործածությունը[2]:

Ի տարբերություն ԱՐԵՎԱԿ-ի, որն աստիճանաբար պատմական կորպուս է դառնում, քանզի դրանում ներկայացված են XIX դարի երկրորդ կեսից մինչև 2009թ. կազմված տեքստերը, նպատակահարմար է, որ ընդհանրական կորպուսն արտացոլի առավել ընդգրկուն ժամանակաշրջան՝ ներառելով հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններում գրաբարով, միջին հայերենով, ինչպես նաև արևելահայերենով ու արևմտահայերենով ստեղծված տեքստեր: Անշուշտ, սա էլ իր բարդությունները կունենա, քանի որ գործնականում գուցե հնարավոր չլինի այդ ծավալի ծրագրային բազա ստեղծել: Դրա համար կարելի է կորպուսում ներառվելիք տեքստերը կատարել ընտրողաբար՝ ըստ նախօրոք մշակված սկզբունքների՝ տեքստերի բազմաքանակության փոխարեն առավել կարևորելով լեզվական հնարավորինս բազմաբնույթ օրինակներ ներկայացնելը:

Ըստ այդմ՝ այն կբաժանվի ենթակորպուսների՝ ըստ հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններն ընդգրկող տեքստերի: Կունենանք գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի, ինչպես նաև խոսակցական լեզվի ենթակորպուսներ: Տարբերվելով օտարալեզու մյուս կորպուսներից՝ այն իրավամբ կարող է համարվել միաժամանակ թե՛ պատմական և թե՛ զուգադրական կորպուս: Լեզվում կատարվող ամենավերջին փոփոխություններին հաղորդակից դառնալու համար կարևոր է կորպուսի շարունակական

---

[2] *http://www.eanc.net/EANC/search/frame_parts/gramsel.php?interface_language=am&search_language=armenian1&contexts_output_language=armenian1:*

հարստացումը նորանոր տեքստերով՝ հասնելով նրան, որ այն վերածվի այսպես կոչված մոնիտորային կորպուսի, այսինքն՝ մեքենական եղանակով հարստացվի համացանցային զանազան աղբյուրներից: Ի դեպ՝ մոնիտորային կորպուսների ստեղծման նախադեպեր կան: Օրինակ՝ Բիրմինգհեմի համալսարանում Ջոն Սինքլերը ձեռնամուխ է եղել COBUILD կոչվող մոնիտորային կորպուսի ստեղծմանը: Սա, նրա կարծիքով, տեքստերի անվերջ բազմություն է, որովհետև կարելի է շարունակ մեծ թվով տեքստեր ավելացնել՝ մեծացնելով տեքստային հենքի ծավալը:

Հայերենի ընդհանրական կորպուսի կազմությունը բավական բարդ և աշխատատար գործընթաց է, որը պահանջում է լեզվաբանների և ծրագրավորողների սերտ համագործակցություն, սակայն այն ինքնանպատակ չէ, քանի որ կունենա ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական հսկայական նշանակություն՝ փաստական հարուստ նյութ ապահովելով լեզվաբանների համար:

Կորպուսի օգտակարության համար կարևոր է հետազոտողների առաջ բացել այն հեռանկարները, որ կունենա այս կորպուսը, որովհետև նույնիսկ հիմա, երբ տեքստային հենքի և որոնողական ծրագրի միջոցով կարելի է հարյուրավոր օրինակներ գտնել հաշված վայրկյանների ընթացքում, շատ հետազոտողներ չեն հրաժարվում օրինակները քարտագրելուց, համակարգիչ մուտքագրելուց:

Ընդհանրական այսպիսի կորպուսը նախևառաջ հրաշալի հնարավորություն կնձեռի լեզվի պատմության մասնագետներին ***պատմական զարգացման ընթացքում հայերենի կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար:*** **Օրինակ՝** Հելսինիկիի կորպուսում նախդիրների գործածության հաճախականությունը անգլերենի զարգացման տարբեր շրջաններում ուսումնասիրելիս պարզվել է, որ ամենահաճախ գործածվող նախդիրները by-ը և of-ն են, որոնք հավասար գործածություն են ունեցել մինչև տասնհինգերորդ դարը. դրանից հետո by նախդիրը

երեք, իսկ մինչև 1640 թվականը՝ ութ անգամ ավելի հաճախ է գործածվել, քան of-ը[3]:

Կորպուսը օգտակար փաստական նյութ կապահովի նաև գրական արևելահայերենի ու արևմտահայերենի հարցերով հետաքրքրվողների համար: Եթե շարունակաբար հարստացվի նաև արևմտահայերենի ենթակորպուսը, այդ կերպ հնարավոր կլինի կատարել լեզվական երևույթների զուգադրական քննություն տեքստային մեծաթիվ օրինակներով: Զուգադրական այդպիսի կորպուսները հաջողությամբ կիրառվում են, օրինակ, ամերիկյան և բրիտանական անգլերենների ուսումնասիրության ժամանակ: Այսպես՝ օգտագործելով ամերիկյան անգլերենի Brown և բրիտանական անգլերենի LOB տեքստային հենքերը՝ փորձ է արվել ուսումնասիրել արական և իգական սեռերի ներկայացուցիչներին տրվող անուններին փոխարինող դերանունների գործածությունը: Պարզվել է, որ արական սեռի ներկայացուցիչներին անվանող բառերն ավելի հաճախ են գործածվում լեզվում, քան իգական սեռի ներկայացուցիչներին տրվող անունները, ընդ որում՝ իգական սեռի անունները գործածության տեսակետից ավելի հաճախադեպ են բրիտնական, քան ամերիկյան անգլերենում:

Զուգադրական կորպուսներում կատարված ուսումնասիրություններով փորձ է արվել նաև բացահայտել քերականական մի շարք իրողություններ: Օրինակ՝ քանի որ կանայք, տղամարդկանց համեմատությամբ, ավելի շատ հանդես են գալիս որպես գործողության կրող, իսկ տղամարդիկ՝ գործող անձ, արական սեռի ներկայացուցիչների անունները նախադասության մեջ ավելի շատ հանդես են գալիս որպես ենթակա, իգական սեռի ներկայացուցիչներինը՝ որպես ուղիղ խնդիր:

Արևելահայերեն-արևմտահայերեն զուգադրական կորպուսի ստեղծման կարևորությունն ավելի է ընդծվում

[3] *http://www.helsinki.fi/varieng/CoRD/corpora/HelsinkiCorpus/:*

հայերենի այս երկու ճյուղերի մերձեցման ուղիների որոնման համատեքստում:

Պետք է կարևորել նաև խոսակցական ենթակորպուսի ստեղծումն ու այն տեսաձայնագրված հոլովակներով հարստացնելը: Հատկապես հիմա, երբ հնարավոր է տեսահոլովակում հնչած բանավոր խոսքը վերածել տեքստի, հեշտությամբ կարելի է տեսնել, թե ինչ տարբերություններ կան գրական և խոսակցական լեզուների միջև, հասարակության տարբեր անդամները, ըստ իրավիճակի, լեզվական ինչ միջոցներ են ընտրում հաղորդակցվելու համար, և առհասարակ խոսակցական լեզուն զարգացման ինչ միտումներ ունի:

Հայերենի ընդհանրական կորպուսը՝ իր տեքստային սահմանափակ օրինակներով, պետք է ոչ միայն ներկայացնի լեզվական կառուցվածքը, հասանելի լինի էլեկտրոնային եղանակով, այլև ունենա ծրագրային ապահովման ամբողջական համակարգ, քանզի կորպուսի օգտակարությունն առավելապես պայմանավորված է համակազչային համապատասխան ծրագրերի առկայությամբ: Շնորհիվ կորպուսում համակարգչային ծրագրերի կիառության՝ լեզվական այն աշխատանքները, որոնց կատարման համար նախկինում երկար ժամանակ էր պահանջվում, հնարավոր կլինի իրականացնել շատ արագ: Այդ ծրագրերը կկիրառվեն տեքստային հենքում եղած լեզվական օրինակներն ամենայն ճշգրտությամբ և մեծ արագությամբ որոնելու, միմյանց հետ համեմատելու, ըստ տարբեր հատկանիշների՝ դասակարգելու համար:

Ի վերջո, պետք է հասնել տեքստի ավտոմատ մշակմանն էապես նպաստող այնպիսի ծրագրերի ստեղծմանը, որոնց միջոցով կորպուսում եղած յուրաքանչյուր տեքստ կվերածվի նախադասությունների, նախադասությունները՝ բառակապակցությունների, բառակապակցությունները՝ բառաձևերի, բառաձևերը՝ բառերի, վերջիններիս կազմում էլ կառանձնացվեն բառի հիմնական և երկրորդական ձևույթները: Մեքենական եղանակով տեքստի՝ որպես լեզվական խոշոր միավորի աստի-

ճանական տրոհման միջոցով կհանգենք լեզվի իմաստային նվազագույն միավորին՝ ձևույթին: Տեքստի ավտոմատ մշակման այսպիսի համակարգը կարող է հաջողությամբ ծառայել լեզվի մակարդակային բոլոր միավորների քննությանը՝ ավտոմա-տացնելով կիրառական այնպիսի բնագավառներում տարվող աշխատանքներ, ինչպիսիք են բնագրային համաբարբառների կազմումը, բառարանները նոր բառերով համալրելը և այլն:

ԱՐԵՎԱԿ-ի համեմատությամբ ունենալով ձևային և բովանդակային նկատելի տարբերություններ և շահեկանորեն տարբերվելով օտարալեզու հեղինակավոր կորպուսներից՝ հայերենի ընդհանրական կորպուսը որակական նոր մակարդակի կհասցնի հայոց լեզվի լիակատար և առավել ամբողջական ուսումնասիրությունը:

Hakobyan Frida - The principles of creating an Armenian general corpus. - The purpose of the article is to present a brief description of the linguistic and programming aspects of the principles of the Armenian general corpus. Special attention has been paid to features such as representativeness, tagging and software. The spheres where the newly compiled corpus can be successfully applied are also highlighted. It is emphasised that having differences in comparison with EANC and beneficially distinguishing from authoritative foreign-language corpuses the general corpus will lead the new and complete study of Armenian into a qualitatively new level.

Акопян Фрида - Принципы состовления всеобщего корпуса армянского языка. - Цель статьи представить краткое описание языковых и программных аспектов принципов армянского общего корпуса. Особое внимание было уделено таким особенностьи, как репрезентативность, маркировка и программное обеспечение. Также выделены сферы, в которых можно с успехом применить новый корпус. Подчеркивается, что наличие различий по сравнению с ВАНК и отличие от авторитетных иноязычных корпусов общий корпус приведет новое и полное изучение Армении на качественно новый уровень.

ՀԱՅԱՏԱՌ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ*

Հակոբյան Ֆրիդա

Հայերենը համացանցային լեզու դարձնելն ու դրա հաջող գործառությունն ապահովելը ենթադրում են լեզվի հաղորդակցական գործառույթի տեղափոխում վիրտուալ հարթակ: Դա էլ իր հերթին նշանակում է հայախոս հանրության համար հայերենը դարձնել տեղեկատվություն ստանալու և հաղորդելու միջոց:

Նորագույն տեխնոլոգիաների առաջընթացով պայմանավորված՝ ստեղծվում են մարդկանց հաղորդակցումն ապահովող մեծաթիվ տեխնիկական միջոցներ, որոնք մի կողմից դյուրացնում են այդ հաղորդակցումը (լեզվական պատնեշների հաղթահարում), մյուս կողմից՝ բերում են լեզվի աղավաղման: Սակայն դա պայմանական բնույթ է կրում, որովհետև նույն հաջողությամբ կարելի է համացանցն օգտագործել իբրև անաղարտ և օրինակելի հայերեն տարածելու հզոր գործիք: Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ՝ ինչպես է հնարավոր մարդկանց՝ ամենատարբեր բնույթի սխալներով լեզվագործածությունը համացանցում օրինակելի դարձնել, բայց դա հնարավոր է համակարգչային համապատասխան ծրագրերի ստեղծման և նպատակային կիրառության դեպքում:

Տրամաբանական է, որ հայերենը համացանցային լեզու դարձնելու հետ կապված խնդիրները բավական շատ են, առաջարկվող տեխնիկական լուծումները՝ նույնքան տարատեսակ: Այդ խնդիրները բազմազան են՝ հայատառ հայերեն գրելուց մինչև ժանրային տարբեր պատկանելություն ունեցող

* Լեզու և լեզվաբանություն, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2 (17), Երևան, 2017, էջ 61-67:

տեքստերի ավտոմատ սրբագրման և խմբագրման համակարգերի ստեղծում: Սույն հոդվածում անդրադառնում ենք միայն հայատառ հայերեն տեքստեր գրելու խնդրին՝ նկատի ունենալով տեխնիկական հնարավոր լուծումներ գտնելը:

Հայատառ հայերեն գրելը ապացուցման կարիք չունի ճիշտ այնպես, ինչպես բավական բարձրորակ, լեզվական քիչ սխալներ պարունակող տեքստեր կազմելը: Պարզելու համար, թե համացանցում հայերեն տեքստը ինչ տառատեսակներով է գրվում, իբրև քննության նյութ վերցրել ենք ամենատարածված սոցիալական կայքերի (facebook. com, twitter.com, vkontakte.ru, odnoklassniki.ru, my.mail.ru), էլեկտրոնային փոստերի (gmail.com, mail.ru, yahoo.com), հեռահաղորդակցություն ապահովող ծրագրերի (Skype, Viber) և նմանատիպ այլ կայքերի տեքստեր, որոնցով օգտատերերն իրականացնում են իրենց առօրյա հաղորդակցումը: Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ գրում են հիմնականում կամ լատինատառ, սակավ դեպքերում՝ ռուսատառ հայերեն կամ հայատառ հայերեն՝ ուղղագրության և կետադրության ոչ մի կանոնի գրեթե չհետևելով: Հայատառ գրվող տեքստերն էլ իրենց հերթին միատարր չեն. կարելի է հանդիպել արդի գրական լեզվով գրված տեքստերից մինչև դասական ուղղագրությամբ գրվածների. շատ քիչ դեպքերում կան նույնիսկ գրաբարով արված մեկնաբանություններ: Իհարկե, վերջին երկուսը մասնավոր դեպքեր են: Գրվածքի բովանդակային կողմի մասին խոսելիս հարկ է նկատել, որ գրավոր խոսքը նույնչափ անփույթ է և սխալներով լի, որքան բանավորը. գրում են այնպես, ինչպես մտածում են և արտահայտվում: Անշուշտ, կա նաև բավական գրագետ հայատառ հայերեն գրողների մի փոքր հատված:

Որպես կանոն՝ մարդիկ նախընտրում են հայերեն տեքստերը լատիներեն և ռուսերեն այբուբեններով գրել մի քանի հիմնական պատճառներով.

ա) Լատինատառ և ռուսատառ գրելը հայատառի համեմատությամբ ավելի հարմար է, քանի որ, ըստ նրանց,

հայերեն այբուբենում տառերն ավելի շատ են, իսկ լատիներենում և ռուսերենում՝ քիչ: Այս դեպքում լրացուցիչ բարդություն չի առաջացնում այն հանգամանքը, որ հայերեն շնչեղ խուլ բաղաձայնները այլատառ գրելիս ստիպված են ներկայացնել մեկից ավելի տառերի կապակցություններով:

բ) Հայերեն տեքստերը այլատառ գրելը նախընտրելի է, քանզի գրված տեքստը կետադրելու կարիք չկա: Այս խմբի մարդիկ թեպետ տեքստերը հայատառ գրելուն դեմ չեն, բայց ներքին մտավախություն ունեն, որ հայատառ գրելիս ստիպված կլինեն կետադրել տեքստը: Մինչդեռ այլատառ գրելիս ստորակետով և նախադասության վերջում դրվող վերջակետով, հարցական և բացականչական նշաններով կարող են արտահայտել բանավոր խոսքում նախադասության ունեցած հնչերանգը:

գ) Չնայած քանակական շատությանը՝ հայատառ ստեղնաշարերը տեխնիկապես շատ թերի են: Դրանց մեծագույն մասը ներառում է միայն հայերեն և լատիներեն այբուբեններ, հետևաբար ռուսերեն կամ ֆրանսերեն տեքստ գրելու համար հարկավոր է նոր ստեղնաշար ներբեռնել: Բացի այդ՝ փոքրաթիվ են այն հայատառ ստեղնաշարերը, որոնցում կարելի է գտնել հայերենի բոլոր կետադրական նշանները (բացականչական նշանը, ապաթարցը բացակայում են գրեթե բոլոր ստեղնաշարերում): Կարծում ենք՝ հայատառ ստեղնաշարերի տեխնիկական ոչ բավարար մակարդակը առավելագույն չափով նպաստում է այլատառ հայերենով գրելուն: Հայերեն տեքստերում եղած լեզվական սխալները ևս էապես պայմանավորված են վերոնշյալ հանգամանքով:

Մեր նպատակներից դուրս է էլեկտրոնային հաղորդակցության մեջ հայերեն տեքստերի համակողմանի քննությունը, որովհետև կան համացանցային զանազան աղբյուրներում հասարակության տարբեր անդամների գրավոր խոսքի քննությանը նվիրված սեմինար-քննարկումներ, հոդվածներ, նաև ամբողջական ուսումնասիրություն:

Մեր խորին համոզմամբ՝ համացանցում որևէ լեզու այնքան չի աղավաղվում, որքան անգլերենը՝ այն երկրի պետական լեզուն, որտեղ նախագծվում և ստեղծվում են տեխնիկական բոլոր նորագույն միջոցները: Հետևաբար տրամաբանական չէ հայերենի աղավաղումները կամ «ճնշված» լինելը բացատրել համացանցի՝ Հայաստանում ստեղծված չլինելու հանգամանքով: Դրանից բացի՝ այլատառ գրելը սկիզբ է առել համացանցի ստեղծումից շատ առաջ. մարդիկ սկսեցին լատինատառ և ռուսատառ գրել խիստ սահմանափակ հնարավորություններ ունեցող հեռախոսներով նամակներ գրելիս: Այդ ժամանակ լատինատառ և ռուսատառ գրելը այլընտրանք չուներ, որովհետև այդ հեռախոսների ստեղնաշարերում հայերեն տառեր չկային: Հետագայում, երբ հեռախոսներն ավելի կատարելագործվեցին, իսկ համակարգիչներից սկսեցին օգտվել անհամեմատ մեծ թվով մարդիկ, կրթվածության աստիճանով պայմանավորված՝ շատերն արդեն սկսեցին գրել հայատառ: Չենք կարծում, որ եթե համակարգիչները, հեռախոսները կամ սոցիալական կայքերը ստեղծվեին Հայաստանում, մարդիկ ավելի շատ հայատառ կգրեին, որովհետև համակարգչի ստեղնաշարը կարելի է հեշտությամբ փոխել հայատառի, վաճառքում կան հայկական արտադրության ArmPhone սմարթֆոնները, կային հայկական սոցիալական կայքեր (Hayland.am, Yeresbook.am), բայց հայ օգտատերերը շարունակում են գրել լատինատառ:

Բնավ արդարացված չէ նաև մտածել, թե հնարավոր է որևէ կերպ արգելքներ մտցնել էլեկտրոնային լեզվում: Համացանցի միաժամանակ դրական և բացասական հատկանիշներից մեկը անվերահսկելիությունն է. նույնիսկ տեսականորեն հնարավոր չէ պատկերացնել, թե ում կողմից և ինչ միջոցներով է հնարավոր արգելել օգտատերերին գրավոր խոսքում սխալներ թույլ չտալ, իսկ սխալվողներին՝ պատժել: Սա այն դեպքում, երբ նույնիսկ պետական վերահսկողության տակ գտնվող հեռուստաալիքներում քիչ չեն լեզվական սխալները:

Այս համատեքստում տրամաբանական չէ ակնկալել, թե մարդկանց ինքնագիտակցությունը երբևէ կարող է այն աստիճան բարձրանալ, որ նրանք գիտակցաբար հրաժարվեն հայերեն տեքստերը այլատառ գրելուց: Հետևաբար այս խնդրի համար պետք է տեխնիկական որևէ լուծում գտնել:

Ինչպես հայտնի է, մարդիկ բանավոր և գրավոր կերպով հաղորդակցվում են առավելապես նորագույն սերնդի իրենց բջջային հեռախոսներով, որոնք ունեն բազմագործառույթ ստեղնաշարեր: Կան գրեթե բոլոր լեզուների համար ստեղծված տարբեր այբուբեններ ներառող մեծաթիվ ստեղնաշարեր: Եղածից բացի՝ հեշտությամբ կարելի է ներբեռնել նաև նորերը, որոնցով, ըստ օգտվողի, տեքստ հավաքելն ավելի հեշտ է: Քիչ չեն նաև հայատառ ստեղնաշարերը: Օրինակ՝ Android օպերացիոն համակարգով աշխատող հեռախոսների համար ստեղծվել են մեկ տասնյակից ավելի հայատառ ստեղնաշարեր: Չնայած քանակական շատությանը՝ դրանք հիմնականում կատարում են նույն գործառույթները: Բոլորն էլ առավելապես բաղկացած են հայերեն, անգլերեն և ռուսերեն այբուբեններից և ունեն շատ օգտակար հնարավորություն: Ցանկացած դեպքում հայատառ, ռուսատառ կամ լատինատառ հայերենով մի քանի տառ հավաքելիս ստեղնաշարի վերնամասում հայտնվում են ամբողջական բառի հնարավոր մի քանի տարբերակները: Սա զգալիորեն հեշտացնում է տեքստ գրելը, որովհետև դրանով կարելի է ժամանակ խնայել և չգրել բառի մնացած մասը: Այսպես՝ եթե ստեղնաշարով գրենք *աշխ* տառերը, կհայտնվեն *աշխ* տառակապակցությամբ սկսվող մեծաթիվ բառեր, ինչպես՝ *աշխետ, աշխարհ, աշխատել, աշխատող, աշխատանք, աշխարհիկ* և տասնյակ այլ բառեր:

Կարծում ենք՝ հարկավոր է մեկ քայլ առաջ գնալ՝ փոխելով հայատառ ստեղնաշարերը և օժտելով դրանց նոր գործառույթներով: Այդ փոփոխությունների մի եղանակն էլ կարող է լինել այն, որ ամեն անգամ լատինատառ ցանկացած բառի առաջին մի քանի տառը հավաքելիս ստեղնաշարի

վերնամասում հայտնվի դրա հայատառ տարբերակը՝ ճիշտ ուղղագրությամբ: Այս կերպ լատինատառ «chishta», «asuma», «uzuma», «xosuma» բառերը հավաքելիս կպատկերվեն «Ճիշտ է», «Ասում է», «Ուզում է», «Խոսում է» տարբերակները: Մի քանի տառ հավաքելիս կարելի է գտնել ցանկացած բառի հայերեն ճիշտ ուղղագրությամբ տարբերակը և դա ուղարկել:

Առհասարակ լեզվական ցանկացած խնդրի տեխնիկական լուծումը գտնելու համար ամենից առաջ պետք է հստակ գիտակցել, թե ինչ չափով է հնարավոր դա իրագործել: Այս դեպքում էլ գուցե առաջին հայացքից կասկածելի թվա նման բազմագործառույթ ստեղնաշար ստեղծելու հնարավորությունը, սակայն պետք է նշել, որ դա ոչ միայն հնարավոր է անել, այլև արդեն իսկ լուրջ քայլեր են ձեռնարկվում նման ստեղնաշարի ստեղծման ուղղությամբ: Վերջերս «Մոբոս» ընկերության կողմից ներկայացվեց հայկական արտադրության «KitKeys Armenian» ստեղնաշարը: Այն բազմալեզու ստեղնաշար է, որով տրանսլիտի օգնությամբ լատիներեն և ռուսերեն տառերով տեքստը փոխարկվում է հայատառի: Հավելվածը մտապահում է օգտագործված բառապաշարը, վերարտադրում՝ կախված բովանդակությունից, նաև առաջարկում է բառեր՝ կանխագուշակելով առավել հավանական հաջորդ բառը և դրանք ցուցադրում ստեղնաշարի վերնամասում [1]: Նախապես հեղինակները հայատառ հավելված ստեղծելու նպատակ են ունեցել, սակայն հստակ գիտակցելով, որ հայախոս հանրության զգալի մասը, միևնույն է, շարունակելու է գրել լատինատառ կամ ռուսատառ, ստեղծել են այնպիսի ստեղնաշար, որը տեքստն ինքնուրույն դարձնում է հայատառ: Չնայած ունեցած մեծ հաջողությանը (ներբեռնվել է ավելի քան հինգ հազար անգամ)՝ հավելվածը հասանելի է միայն iOS (iPHONE, iPAD) օպերացիոն համակարգով աշխատող սարքերի համար: Առաջիկայում

---

[1] Տե՛ս www.hetq.am:

նախատեսվում է հավելվածը հասանելի դարձնել նաև Google Play-ի, MAC-ի և Windows-ի համար[2]:

Գնահատելի է, իհարկե, որ ծրագրավորողները ևս այսչափ հետքրքրված են հայատառ հայերեն գրելու խնդրի լուծմամբ, սակայն կարծում ենք, որ այսպիսի ստեղնաշարերի լեզվական ռեսուրսների ապահովումը հնարավոր է միայն լեզվաբանների համագործակցությամբ: Ակնհայտ է, որ այս ստեղնաշարերի միջոցով կարելի է միանգամից լուծել մի քանի հարց: Մի կողմից՝ համացանցում հայատառը կփոխարինի այլատառ հայերենին, մյուս կողմից՝ զգալիորեն կբարձրանա էլեկտրոնային տեքստերի լեզվական որակը, հատկապես եթե այդ ստեղնաշարերի հիմքում ընկած լինեն առավել բարդ այնպիսի համակարգեր, որոնք մեքենական եղանակով կառաջարկեն ուղղագրական և քերականական սխալների ճիշտ տարբերակները:

Հայտնի ճշմարտություն է, որ խոսակցական լեզվի թելադրանքով է փոխվում գրական լեզուն, իսկ այս դեպքում գրական լեզուն կնպաստի խոսակցական լեզվի՝ հնարավորինս գրականին մերձենալուն: Ի վերջո, անկախ իրենց գիտելիքներից և լեզվական պատրաստվածության աստիճանից, բոլորն էլ ցանկանում են, որ իրենց գրավոր խոսքը հնարավորինս անսխալ և գրագետ լինի: Այս ստեղնաշարերը այդ հնարավորությունը կընձեռեն յուրաքանչյուրին: Ավելին՝ փոխարկվող այդ ստեղնաշարերը կարող են առավել հաջողությամբ ծառայել նաև հեռահար այնպիսի ծրագրերի իրականացմանը, ինչպիսիք են արևելահայերեն ուղղագրությամբ գրված բառերի մեքենական փոխարկումը դասական ուղղագրությամբ գրված տարբերակների և հակառակը:

Տեքստի լեզվաբանության ներկայացուցիչների խորագույն համոզմամբ էլեկտրոնային տեքստերը պետք է լինեն ոչ թե համակարգչային լեզվաբանության, այլ տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկա: Այդ ընթացքում

[2] Տե՛ս www.hetq.am:

համակարգչային լեզվաբանության մասնագետները նոր ծրագրեր են ստեղծել ինչպես տեքստերի համակողմանի քննության, անպես էլ տեքստերի հետ կապված տեսական խնդիրներին կիրառական լուծումներ տալու համար:

Համակարգչային լեզվաբանության մեջ կիրառվող հետազոտական մեթոդները կարող են զարգացման լայն հեռանկարներ բացել արդի հայ լեզվաբանության առաջ, իսկ դրա առաջարկած կիրառական-տեխնիկական լուծումները կօգնեն հայագիտության արդի մարտահրավերներին դիմակայելու հարցում:

F. A. Hakobyan - Armenian-letter communication problems on the Internet. - The article is dedicated to making Armenian a language of web communication. The current state of the Armenian language usage is examined on the Internet, a special attention is paid to the reason why Armenian texts are written in Latin and Russian letters. It's concluded that Armenian keyboards are incomplete as they contain a limited number of alphabets. Not all punctuation marks are included in those keyboards as well. It is suggested to create a more complete and convertible keyboard which will not only include all the letters of the Armenian alphabet and punctuation marks but also is supposed to convert automatically the Armenian text with Latin and Russian letters to Armenian-latter text.

Ф. А. Акопян - Проблемы армянской коммуникации в Интернете. - Статья посвящена превращению армянского языка в веб-общение. Текущее состояние использования армянского языка рассматривается в Интернете, особое внимание уделяется тому, почему армянские тексты написаны на латинском и русском алфавите. Сделан вывод о том, что армянские клавиатуры неполны, так как содержат ограниченное количество алфавитов. Не все знаки препинания также включены в эти клавиатуры. Предлагается создать более полную и конвертируемую клавиатуру, которая будет включать не только все буквы армянского алфавита и знаки препинания, но также должна автоматически конвертировать армянский текст с латинскими и русскими буквами на армянский текст.

ՀԱՅԵՐԵՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Հակոբյան Ֆրիդա

Էլեկտրոնային եղանակով տեքստերի կազմումը և դրանց հրապարակումն ու տարածումը համացանցի միջոցով գրեթե լիովին փոխարինել են ձեռագիր տեքստերին՝ աստիճանաբար կարևորելով տեքստի լեզվական որակի բարձրացման խնդիրը: Հետևաբար համակարգչային ծրագրերի՝ լեզվաբանության մեջ տեսական և գործնական տարբեր նպատակներով կիրառություններից ամենահիմնականը կարելի է համարել համակարգչային լեզվաբանների կողմից տեքստի ավտոմատ սրբագրման և խմբագրման համակարգերի ստեղծումը, որոնք ունեն ընդհանրական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ուղղագրական, քերականական, քիչ դեպքերում նաև՝ կետադրական սխալների ուղղումը: Կատարելով գրեթե նույն գործառույթը՝ սրբագրման բոլոր համակարգերի ու ծրագրերի տարբերակիչ ամենահիմնական հատկանիշն այն է, որ դրանք տեքստում եղած սխալներն ուղղումն են տարբեր կերպ և ոչ ամբողջությամբ՝ պայմանավորված համակարգի զարգացվածության աստիճանով: Օգտատերերի շրջանում առավել մեծ հեղինակություն են վայելում Grammarly(https://www.grammarly.com/),Ginger(http://www.gingersoftware.com/grammarcheck), Spell Check PlusPro (https://pro.spellcheckplus.com/), CorrectEnglish Complete (http://www.correctenglish.com/), WhiteSmoke (http://www.whitesmoke.com/) օտարալեզու սրբագրման համակարգերը:

---

* Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 3 (24), Երևան, 2017, էջ 52-57:

Հայերեն տեքստերի էլեկտրոնային սրբագրման փոքրաթիվ ծրագրեր են ստեղծվել են: Դրանցից իրենց տարածվածությամբ և համեմատաբար լայն կիրառությամբ առանձնանում են Armenian PowerSpell (http://www.powerspell.am/) և HySpell.com կայքում գործող HySpell համակարգչային ծրագրերը: Սրանց միջոցով հնարավոր է կատարել տեքստում եղած սխալների ոչ բավարար մակարդակով ուղղում, ուստի կարող ենք ասել, որ հայերեն տեքստերի սրբագրման համակարգերը որակական առումով շատ թերի են: Դա վերաբերում է ինչպես բառապաշարի ընդգրկման ծավալին, այնպես էլ քերականությանը, քանի որ քերականական ոչ բոլոր տեսակի սխալներն է հնարավոր ուղղել դրանց միջոցով:

Այս համատեքստում մեծապես կարևորում ենք էլեկտրոնային սրբագրման նոր՝ առավել լիակատար և ամբողջական համակարգի ստեղծման խնդիրը, ուստի սույն հոդվածում կանդրադառնանք հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգի կազմության՝ մեր կողմից մշակված սկզբունքներին, որոնք վերաբերում են համակարգի ստեղծման նպատակին ու խնդիրներին, կառուցվածքին ու ընդգրկման ծավալին:

Հայալեզու սրբագրման նոր՝ առավել լիակատար համակարգի ստեղծման կարևորությունը պայմանավորված է հայերեն տեքստերի լեզվական որակի բարձրացման անհրաժեշտությամբ: Ընդունված է ասել, որ գրավոր խոսքը բանավորի համեմատությամբ առավել կանոնարկված է, սակայն դա ամենևին էլ չի բացառում ամենատարբեր սխալների առկայությունը, շատ դեպքերում նաև՝ առատությունը տեքստում: Ուստի, ստեղծվելիք էլեկտրոնային սրբագրման համակարգի խնդիրը տեքստում եղած սխալների առավելագույն չափով ուղղումն է և,

որպես արդյունք, հնարավորինս քիչ սխալներ պարունակող տեքստեր ներկայացնելը:

Ամենից առաջ հարկ է ընդգծել, որ նման բազմագործառույթ համակարգի ստեղծումը բարդ և ժամանակատար խնդիր է, որը պահանջում է համակարգչային ծրագրերի համար կիրառելի դարձնելու նպատակով լեզվի բառապաշարի, ինչպես նաև քերականական համակարգի մշակման, ձևայնացման ուղղությամբ լեզվաբանների և ծրագրավորողների համակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, նմանատիպ գործառույթ իրականացնելու նպատակով ստեղծված այլ ծրագրերի համեմատությամբ այն կունենա մի շարք ընդգծված տարբերություններ, որոնք վերաբե-րում են ինչպես էլեկտրոնային համակարգի ձևային, այնպես էլ բովանդակային կողմին:

Քանի որ դրա ստեղծման առաջնային նպատակը հայախոս հանրության շրջանում գրավոր խոսքը որակական զարգացման նոր մակարդակի հասցնելն է, նպատակահարմար է՝ այն գործի համացանցային ինքնուրույն կայքում լիովին անվճար և առանց որևէ ծրագրի ներբեռնման անհրաժեշտության: Մինչդեռ հայերեն տեքստերի սրբագրման առկա ծրագրերի օգտագործման հնարավորությունները շատ սահմանափակ են: Օրինակ՝ PowerSpell համակարգչային ծրագրից օգտվելու համար հարկ է գնել դրա ամբողջական փաթեթը, ավելացնել Microsoft Word, Excel, PowerPoint տեքստային խմբագրիչներում և օգտագործել համակարգչում: Սա ենթադրում է, որ ոչ միայն սահմանափակ թվով մարդիկ միայն կարող են օգտվել դրանցից, այլև ծրագրի ստեղծողներն անգամ չեն կարող այն հաճախակի փոփոխել, համալրել կամ ուղղել ի հայտ եկած սխալները, քանի որ դա անելու միակ եղանակը ծրագրի նոր՝ լրամշակված տարբերակի թողարկումն է: Առանձին կայքում գործելու շնորհիվ՝ էլեկտրոնային սրբագրման նոր համակարգը կայքի

հեղինակներին այն մշտապես թարմացնելու, փոփոխելու, նկատված սխալները կամ ծրագրային թերացումները անհապաղ շտկելու, առավել զարգացնելու ու լիակատար դարձնելու հնարավորություն կտա:

Հայերեն տեքստերի սրբագրման համեմատաբար հաջող ծրագրերից երկրորդը HySpell.com կայքում գործող HySpell համակարգչային ծրագիրն է և համապատասխան ծրագրային հավելվածը: Որպես սրբագրման ծրագիր՝ այն ունի համակարգչային նախորդ ծրագրին բնորոշ բոլոր թերությունները: HySpell ծրագրային հավելվածի հասանելիությունը ևս սահմանափակվում է մի շարք պատճառներով: Այսպես՝ դրա օգնությամբ կարելի է ուղղել միայն համացանցի միջոցով հրապարակվող կամ ուղարկվող տեքստերը (էլեկտրոնային նամակներ, հաղորդագրություններ, սոցիալական կայքերում արված հրապարակումներ): Դրանից բացի՝ ծրագիրը կիրառելի է միայն Firefox դիտարկիչի համար, մինչդեռ համացանցից օգտվողների ճնշող մեծամասնությունն օգտագործում է Google և Yandex որոնողական համակարգերը: Դա նշանակում է, որ նրանք պարզապես չեն կարող օգտվել տեքստի սրբագրման այս հավելվածից: Էլեկտրոնային սրբագրման նոր ստեղծվելիք համակարգը հնարավոր կլինի օգտագործել բոլոր դիտարկիչներով և որոնողական համակարգերով:

Հայերեն տեքստերի սրբագրման համակարգի ստեղծման համար նախևառաջ պետք է հստակորեն որոշել դրանում ընդգրկվելիք բառապաշարի ծավալը՝ նպատակ ունենալով հայերենի բառապաշարի համաժամանակյա վիճակն արտացոլելը: Որքան մեծաքանակ լինի բառապաշարը, այնքան ամբողջական և լիակատար կլինի տեքստային սխալների ուղղումը: Կարծում ենք՝ նոր ստեղծվելիք համակարգի բառային հենքը պետք է կազմեն հայերենի առավել տարածված և ուղենշային

համարվող բառարանները: Տեքստի սրբագրման մյուս ծրագրերի հեղինակները ևս կարևորում են այս հանգամանքը, սակայն իրականում նրանց ընդգրկած բառապաշարը փոքրաթիվ է: Օրինակ՝ Armenian PowerSpell-ի հեղինակների կարծիքով իրենց համակարգը բավական հարուստ է, քանի որ բաղկացած է *1,400,000* բառից: Հայերենի հարուստ բառագանձը չի հատում կես միլիոն բառի սահմանը, ուստի այս դեպքում, հասկանալի է, որ *1,400,000*-ը ոչ թե բառերի, այլ բառաձևերի քանակն է: Եթե այդ թվից դուրս գան թեքվող խոսքի մասերի դեպքում հարցուցային շարքի մյուս անդամները, կստացվի, որ այս բառաքանակը կրճատվում է մի քանի անգամ:

Համակարգչային ծրագրերի կողմից բնական լեզվի արդյունավետ մշակումն ամենից առաջ պայմանավորված է ոչ միայն մեծածավալ բառապաշարի առկայությամբ, այլև լեզվի մակարդակային բոլոր միավորների առավել ամբողջական ու լիակատար ձևային նկարագրությամբ: Սա նշանակում է, որ լեզվի բառապաշարի, ինչպես նաև քերականության ձևայնացումը առաջին և կարևորագույն նախապայմանն է սրբագրման նոր համակարգի հաջողվածության հարցում: Ներկայացման ձևաչափի և ընդգրկելիք բառապաշարի տեսանկյունից շահեկանորեն տարբերվելով հայալեզու սրբագրման մյուս ծրագրերից՝ լեզվական սխալների ուղղման անհամեմատ բարձր մակարդակն է, որով էլեկտրոնային նոր համակարգը կտարբերվի ներկայումս գործածվող ծրագրերից:

Համակարգի առաջնային նպատակը լեզվի մակարդակային տարբեր միավորներում եղած լեզվագործածության տարատեսակ սխալների ուղղումն է:

ա) **Ուղղագրական սխալների ուղղում:** Ընդհանուր առմամբ՝ ցանկացած սրբագրման ծրագրի առաջնային խնդիրը ուղղագրական սխալների ուղղումն է: Գրավոր խոսքում ուղղագրական սխալները բազմաթիվ են, որոնք ընդհանրացնելով

կարելի է բաժանել հետևյալ տեսակների. ա) վրիպակներ, բ) բառի ճիշտ գրության չիմացությամբ պայմանավորված սխալներ, գ) բառի ճիշտ գրության՝ բոլորի կողմից ընդունելի տարբերակի բացակայություն: Հայերենի ուղղագրական սխալների ուղղման հետ կապված խնդիրներն առավելապես պայմանավորված են վերջին հանգամանքով, քանի որ շատ դեպքերում բառերի միասին, անջատ կամ գծիկով գրության, հատուկ անունների դեպքում՝ բաղադրիչների մեծատառով կամ փոքրատառով գրության առնչությամբ լեզվաբանների շրջանում չկա բոլորի կողմից ընդունելի մեկ միասնական մոտեցում:

բ) **Քերականական սխալների ուղղում:** Սրբագրման համակարգի լիարժեքության մյուս նախապայմանը տեքստում եղած քերականական սխալների ուղղումն է, որը շատ դեպքերում բավական բարդ կլինի համակարգի համար: Այդ բարդություններն ամենից առաջ պայմանավորված են համակարգչային ծրագրերի՝ բնական լեզուն ոչ լիարժեք կերպով մշակելու կարողությամբ և հայերենի լիակատար ձևային նկարագրության բացակայությամբ, որի հիմնական պատճառներից են քերականական կարգերի առատությունն ու դրանց արտահայտման ձևերի բազմազանությունները: Դրանից բացի՝ քերականական սխալ կառույցների բացահայտման ժամանակ լրացուցիչ դժվարություն կառաջացնի այն հանգամանքը, որ շատ դեպքերում բնական լեզվում քերականական միևնույն իմաստը կարող է արտահայտվել մեկից ավելի զուգահեռ ձևերով, իսկ ծրագրավորման լեզվով ոչ միշտ է հնարավոր դա տարբերակել:

գ) **Կետադրական սխալների ուղղում:** Տեքստի լեզվական որակը մեծ չափով պայմանավորված է ոչ միայն բառերի ճիշտ ուղղագրությամբ, քերականական համապատասխան կառույցների ընտրությամբ, այլև կետադրությամբ: Տեքստերում եղած կետադրական սխալները բազմաթիվ են, որոնց պատ-

ճառով որոշ դեպքերում նույնիսկ հնարավոր է ոչ ճիշտ ընկալել նախադասության կամ պարբերության իմաստը: Այս է պատճառը, որ սրբագրման համակարգում մեծապես կարևորում ենք կետադրական սխալների ուղղման հնարավորությունը:

դ) **Ոճական սխալների ուղղում:** Էլեկտրոնային սրբագրման համակարգի հետագա զարգացման տեսանկյունից առավել հեռահար նպատակ ենք համարում մեքենական եղանակով տեքստի ոճական սխալների ուղղումը, առօրյախոսակցական, բարբառային բառերի ու արտահայտությունների փոխարինումը գրական տարբերակներով և այլն:

Էլեկտրոնային սրբագրման համակարգում էապես կարևորում ենք տեքստում լեզվական սխալների ուղղման եղանակը, որը կարելի է անել երկու միջոցով.

ա) համակարգն ավտոմատ կերպով կուղղի տեքստը, այնուհետև այլ ձևաչափով կամ գունավորմամբ կներկայացվեն ուղղված սխալները,

բ) տեքստի մուտքագրումից հետո համակարգը կընդգծի բոլոր սխալները՝ օգտվողին առաջարկելով ուղղման չորս-հինգ ամենահավանական տարբերակները, որից հետո օգտվողը կընտրի համապատասխան ճիշտ ձևը:

Կարծում ենք՝ երկրորդ միջոցի կիրառությունն առավել նպատակահարմար է, քանի որ քիչ չեն լինի դեպքերը, երբ բառի գործածության համատեքստը օբյեկտիվորեն չհասկանալու կամ բառիմաստը չընկալելու պատճառով համակարգը սխալ կուղղի բառը: Այսպես՝ համանունները, որոնք բնական լեզվում ունեն տարբեր իմաստներ, բայց չունեն ձևային տարբերակվածություն, համակարգչային ծրագիրը որևէ կերպ միմյանցից չի կարող տարբերակել: Ավելին՝ երբեմն բառիմաստային տարբերություններով պայմանավորված՝դրանք ձևաբանական փոփոխությունների են ենթարկվում տարբեր եղանակով: Օրինակ՝ **սեր** գոյականը զգացմունք իմաստն արտահայտելիս այլ ձևով է

հոլովվում, կաթի **սերը**՝ այլ: Այս դեպքում համակարգը չի կարող ինքնուրույն ընտրել համապատասխան բառաձևը և ուղղել՝ համանուններն ըստ իմաստի տարբերակել չկարողանալու պատճառով:

Էլեկտրոնային սրբագրման համակարգի ստեղծման լեզվաբանական և ծրագրային կողմին առնչվող խնդիրները բազմազան են, դրանց լուծման եղանակները՝ ևս: Համեմատաբար ավարտունության ցանկացած փուլում էլ այն հսկայական նշանակություն կունենա հայախոս հանրության երկու հատվածների համար հավասարապես: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել համակարգի կարևորությունը ամենից առաջ արևելահայերենով գրված ամենատարբեր բնույթի տեքստերը կանոնարկելու, դրանցում եղած լեզվական տարաբնույթ սխալներն ուղղելու համար: Պակաս կարևոր չի լինի դրա նշանակությունը նաև արևմտահայերի համար, որոնք հատկապես ուղղագրական համակարգերի տարբերություններով պայմանավորված, ոչ միշտ են կարողանում ինչպես ճիշտ ուղղագրությամբ արևելահայերեն տեքստեր գրել, այնպես էլ առհասարակ կիրառել հայերենի քերականական կանոնները: Կարելի է փաստել, որ սրբագրման համակարգից օգտվողների թիվը տեսականորեն որևէ սահմանափակում չի ունենա, քանի որ դա կսպասարկի ողջ հայախոս հանրությանը, և ավելին՝ այն օտարերկրացիներին, որոնք բավարար լեզվական գիտելիքներ չունենալու պատճառով չեն կարող կառուցել իրենց գրավոր խոսքը պատշաճ մակարդակով:

Տեքստի ավտոմատ սրբագրման համակարգի ստեղծումը էապես կնպաստի ինչպես լեզվաբանական հետազոտությունների բնագավառում համակարգչային տեխնիկայի կիրառությանը, համակարգչային ծրագրերի միջոցով տեքստերում եղած լեզվական սխալների վերացմանը,

այնպես էլ լայն առումով հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառությանը:

Բանալի բառեր- հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ, բազմագործառույթ համակարգ, էլեկտրոնային համակարգ, սրբագրման ծրագիր, համակարգչային ծրագիր, տեքստային խմբագրիչ, սրբագրման հավելված

ФРИДА АКОПЯН – Цель и задачи программы Армянской электронной корректуры.– Цель статьи представить принципы создания Армянской программы электронного корректуры. Подчеркнута необходимость новой программы корректуры, потому что, несмотря на наличие нескольких контрольных и грамматических программ, они неполны, поскольку они не исправляют все типы ошибок. Для создания новой программы корректуры подчеркивается важность включения богатого словарного запаса и формального описания языка. Предполагается, что новая программа исправит орфографию, грамматику, пунктуацию и стилистические ошибки. Программа Армянской электронной корректуры будет в значительной степени способствовать использованию компьютерных технологий в области лингвистических исследований, устранению языковых ошибок в текстах с помощью компьютерных программ, а также успешному функционированию армянского языка в качестве веб-языка.

Ключевые слова - армянская электронная коррекционная система, многофункциональная система, электронная система, программное обеспечение для корректуры, программное обеспечение, текстовый редактор, расширение корректуры

FRIDA HAKOBYAN– The purpose and objectives of the Armenian Electronic Proofreading System. – The purpose of the article is to present the principles of creating the Armenian Electronic Proofreading System. The necessity of a new Proofreading program is underlined, because even though there are a few spell and grammar checkers, they are

incomplete, as they do not correct all types of mistakes. For the creation of a new Proofreading program, the importance of including rich vocabulary and formal description of the language are highlighted. The newly-created program is supposed to correct spelling, grammar, punctuation and stylistic errors. The Armenian Electronic Proofreading program will highly contribute to the use of computer technology in the field of linguistic research, elimination of errors in texts through computer programs, as well as to the successful use of the Armenian language as a web language.

Key words - Armenian electronic proofreading system, multi-functional system, electronic system, proofreading software, software, text editor, proofreading extension

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ*

Հովսեփյան Լիանա

Առկայացման քերականական կարգը գրաբարում (ինչպես և առհասարակ հայերենում) կապվում է **ս, դ, ն** դերանվանական հոդերի հետ, որոնք կցվում են բառինվերջից՝ հաջորդելով հոլովաթվանիշ ձևույթներին: Առկայացման կարգի արտահայտության դիտվածքի (պլանի) հստակ կառուցվածքին բովանդակության դիտվածքում հանդիպադրվում է տարբեր իմաստների բարդ համակցությունը, ընդ որում այդ իմաստների և այս կամ հոդի միջև չկա միարժեք համապատասխանություն: Այս առումով անվան քերականական կարգերի մեջ առկայացման կարգն աչքի է ընկնում նրանով, որ ընդգծված իրադրական բնույթ ունի, ու թեև մյուս՝ թվի և հատկապես հոլովի կարգերն էլ ծավալում են ստանում ստորոգական (շարահյուսական) մակարդակում, առավելապես այդ հատկությունը վերաբերում է առկայացման կարգին, քանի որ նրա ցուցիչների՝ հոդերի բազմիմաստությունը իր լուծումն է գտնում համապատասխան խոսքաշարում, և միայն այնտեղ կարելի է պարզել տվյալ հոդի կոնկրետ գործառույթը: Առկայացման կարգի իրադրական բնույթը պայմանավորված է նաև նրանով, որ այն անմիջականորեն կապվում է հաղորդակցման հետ և բնութագրում է ինչպես հաղորդակցման մասնակիցներին, այնպես էլ նրանց հարաբերակցվող առարկաները:

Ս, դ, ն հոդերը ձևով և ծագումով կապված լինելով

* «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 211-221:

դերանուններին՝ կարող են ստանալ անձնական, ցուցական, ստացական դերանունների իմաստ և գործածվել կա՛մ փոխարինելով համապատասխան դերանուններին, կա՛մ վերջիններիս հետ զուգահեռաբար: Այդ պատճառով էլ նշված մասնիկների համար ՝որոշիչ հոդեր՝ տերմինի հետ համարժեքորեն գրաբարի քերականություններում գործածվում եննաև «դիմորոշ», «ստացական» և «ցուցական» հոդերը տերմինները:

Այս բոլոր իմաստային տարբերակումները կարող էին թերևս առանձնացվել որպես ինքնուրույն քերականական կարգեր (հատկապես դեմքի կարգը), եթե արտահայտության և բովանդակության դիտվածքների միջև գոյություն ունենար միարժեք-միանշանակ հարաբերակցություն, և եթե այդ իմաստները հաճախ հանդես չգային որպես միաձույլ ամբողջություն, որի տարրալուծումը խիստ պայմանական բնույթ կունենար: Ճիշտ այդ պատճառով էլ խոսքաշարից դուրս **ս, դ, ն** հոդերը հարացուցային հստակ հակադրություններ չեն ստեղծում և կարող են առաջացնել միայն դիմային աղոտ պատկերացումներ՝ **ս** – առաջին դեմք, **դ**– երկրորդ դեմք և **ն** – երրորդ դեմք: Այդ հոդերից յուրաքանչյուրը, կցվելով խոսքից դուրս վերցված բառին, կարող է միաժամանակ մի քանի իմաստ արտահայտել. Այսպես՝ *վարդապետաց<u>ս</u>* կարող է նշանակել և՛ «մեզ՝ վարդապետներիս» (դեմք), և՛ «մեր վարդապետներին» (ստացականություն), և՛ «այս» կամ «այստեղ գտնվող վարդապետներին» (ցուցականություն), և պարզապես որոշակի, հայտնի վարդապետներին (որոշյալություն): Երբեմն նույնիսկ միևնույն խոսքաշարում հոդի իմաստը կարող է տարբեր մեկնաբանություններ ստանալ, այսպես՝ *...որք եկեալ՝ մերում անմտութեան<u>ս</u> զիւրեանց քաջութեան ... զհանդեսն ցուցին* *օրինակում մերում անմտութեան<u>ս</u>* արտահայտության մեջ, եթե այն ընկալվի որպես վերացականը թանձրացականի փոխարեն, հոդը կունենա դիմորոշ նշանակություն՝ «մեզ՝ անմիտների», իսկ

ուղղակի իմաստով՝ ստացական՝ «մեր անմտությանը»։

Այսպիսով, կարող ենք ասել, որ առկայացման կարգը գրաբարում հանդես է գալիս որպես համաձույլ (սինկրետիկ) քերականական կարգ և ներառում է միաժամանակ չորս ենթակարգ՝ դեմքի (դիմորոշության), ստացականության (պատկանելության), ցուցականության և որոշյալության։

Նշված բոլոր երեք հոդերն էլ կարող են արտահայտել այս ենթակարգերի իմաստները, թեև տարբեր համամասնությամբ՝ **ս** և **դ** հոդերը համապատասխանում են առավելապես առաջին երեք իմաստներին, **ն** հոդը հիմնականում«մասնագիտացած է» որոշյալության արտահայտման համար, թեև որոշյալության իմաստույթը զգալի չափով միշտ էլ առկա է դեմքի, ստացականության և ցուցականության ենթակարգերի մեջ, իսկ **ն** հոդի մեջ էլ գրեթե միշտ գիտակցվում է երրորդ դեմքի իմաստը։

Դեմքի, ցուցականության և ստացականության ենթակարգերում **ս, դ, ն** հոդերը (ինչպես և համապատասխան հիմքերով դերանունները) ստեղծում են հակադրության երեք եզր՝ առաջին, երկրորդ և երրորդ դեմքեր։ Դեմքի ենթակարգում համեմատաբար ավելի գործուն է խոսակցին մատնանշող երկրորդ դեմքի ցուցիչը, որ ըստ երևույթին պայմանավորված է հաղորդակցման ընթացքում խոսակցին դիմելու անհրաժեշտությամբ։ Հաղորդակցումը կարող է լինել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր։ Վերջին դեպքում դիմելաձևերը կայուն (ստանդարտ) բանաձևերի արժեք են ստանում, ինչպես՝ *...ընկալար զհրամանս*[1] (ցուցական) *բոյոյ թագաւորութեանդ* (դիմորոշ՝ վերացականը թանձրացականի փխ.), *քաջդ* (դիմորոշ) *արանց Տրդատ* [Ագաթ.][2], *աղաչեմ զքո տէրութիւնդ*

---

[1] Կարող է ընկալվել նաև որպես հոգնակի հայցական՝ ՛հրամանները՚։

[2] Հինգերորդ դարի հեղինակների երկերից վերցված օրինակների հղումները տրվում են ըստ համապատասխան համաբարբառների՝ առանց էջանշման։

(դիմորոշ) *հրամայել բանալ զղիւանդ* (ստացական) *արքունի ընդդէմ առնդ* (ցուցական) *եկելոյ առաջի քոյոյ հզաւր տէրութեանդ* (դիմորոշ՝ վերաց. թանձր. փխ.) [Խոր.], *ողջ լեր, երնելիդ* (դիմորոշ) *բնակութեամբ ի մէջ դից* [Խոր.], *աղաւթից ձերոց և սրբութեանդ* (դիմորոշ) *Ղևոնդիոս արքեպիսկոպոս Կեսարու* [Ագաթ.], *...զանեալքդ և խրատեալքդ, հարուածեալքդ և ողոքեալքդ, տանջեալքդ և նուաճեալքդ, կորուսեալքդ և գտեալքդ, մոլորեալքդ և դարձուցեալքդ, յակն առեալքդ և սիրեցեալքդ* (դիմորոշ) *տեառն՝ Տրդատեսս թագաւոր Հայոց մեծաց ... ի տէր խնդալ* [Ագաթ.], *արդ դու, որ մարզպանդ* (դիմորոշ) *ես աշխարհի<u>ս</u>* (ցուցական) [Եղիշէ], *Մարիամ, աւրհնեալդ* (դիմորոշ) *ի կանայս* և այլն:

Առաջին դեմքի դիմորոշ հոդի գործածությունը նվազ հաճախական է, երբ խոսողն անհրաժեշտություն է զգում մատնանշելու իրեն, օր.՝ *եկ հաւանեաց բանից աչագեղոյ դստեր<u>ս</u>* (դիմորոշ) *ալանաց...* [Խոր.], *...ընդ քաջազգւոյ կոյս օրիորդի<u>ս</u> ալանաց* [ն. տ.], *այլ զի և մեզ՝ անմտացս* (դիմորոշ) *ուսուսցէ զիմաստութիւն* [Ագաթ.], *յո զխաշնդ* (ցուցական) *տանիք, և զհովի<u>ւս</u>* (դիմորոշ) *տարայք* [Բուզ.], *սատակեաց զնա Տէր Աստուած ի ձեռն կնոջ<u>ս</u>* (դիմորոշ) [Յուդ.] և այլն: Հետաքրքրական օրինակ է երկրորդ դեմքի կրկնակի արտահայտությունը դու անձնական դերանվան և **դ** հոդի միաժամանակյա գործածությամբ՝ *...իմ է այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ* [Բուզ.]:

Երրորդ դեմքի **ն** հոդի դիմորոշ նշանակությունը բավական մթագնած է: Այն հանդես է գալիս յուրահատուկ շարահյուսական կառույցներում, որտեղ երկրորդական նախադասության մեջ **որ** հարաբերականին հաջորդող բառը

Աստվածաշնչից վերցված օրինակները՝ ըստ Ս. գրքի գլուխների՝ դարձյալ առանց էջանշման:

ստանում է **ն** հոդը։ Ենթադրվում է, որ այն առաջացել է հարակրկնական **նա** դերանունից, որը սերտաճել է **որ** հարաբերականին հաջորդող բառի հետ՝ անկախ սրա խոսքիմասային պատկանելությունից (բայ, դերանուն և այլն), *ինչպես՝ զի որ շարժի<u>ն</u> և փոփոխի՝ չէ էական* [Եզն.], *այն, յորում է<u>ն</u>, քան զայն, որ ի նմա է<u>ն</u>, մեծ գտանի* [Եզն.]։ Նշված հոդը գոյականներին է կցվում այն դեպքերում, երբ դրանք հանդես են գալիս անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում որպես վերադիր, օրինակ՝ *ո՞րչափ ևս այն՝ որ նոցա զյորդութիւնն բխմանց յաւրինեաց, որ աղբիւր<u>ն</u> է բարութեան [Եզն.], նիւթ ինչ, զոր հիւղ<u>ն</u> անուանեն* [Եզն.]։ Այս առումով **ն** հոդը թեև նշված կառույցներում առկայացնող և դիմորոշ արժեք ունի, սակայն անվանական քերականական կարգի արտահայտություն չէ, այլ ավելի շատ շարահյուսական հարակրկնության դեր է կատարում՝ նախընթաց անդամի հավելուրդային կրկնությամբ։ Ուստի ավելի հավանական է այն կապել **նա** անձնական (դիմորոշ) դերանվան հետ, որ հաստատվում է նույն դիրքում հանդես եկող առաջին և երկրորդ դեմքերի **ս, դ** ցուցիչներով, որոնք մատնանշում են երկրորդական նախադասության ենթական՝ (տվյալ դեպքում՝ դու և **մեք** դերանունները) *զոր ասեսդ* (որ դու ես ասում), *զայս բան կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմքս* (որ մենք ենք ասում)։ Վերը բերված *զի որ շարժի<u>ն</u> և փոփոխի* օրինակում նույնպես այն մեկնաբանելի է որպես նա դերանվան հավելուրդային կրկնության մնացուկ՝ «որշարժվում է ***նա** և փոփոխվում»։ Նման կառույցներում **ն** հոդի գործածությունը շարահյուսական հավելադրություն է համարում նաև Ֆ.Ֆեյդին. «...հոդ դարձած օժանդակ դերանունը կը կցվի <u>**որ**</u> հարաբերական դերանունին հետևող առաջին շեշտակիր բառին վերջավորության, ինչ որ ըլլայ այս բառին բնույթը և նշանակությունը, նույնիսկ եթե այս տարօրինակ գործածությունը կրնա բային եզակի երրորդ դեմքին՝ հոգնակիի

կերպարանք տալ՝ <u>որ շարժին և փոփոխի</u>…»[3]:

Առկայացման կարգի ցուցականության (դեյքսիսի) ենթակարգը հայերենում մատնանշում է առարկայի դիրքը տարածության մեջ ըստ դիմային մերձավորության. **ս**՝ առարկայի գտնվելը առաջին դեմքին կամ խոսողին մոտ, **դ**՝ առարկայի գտնվելը երկրորդ դեմքին կամ խոսակցին մոտ, **ն**՝ առարկայի գտնվելը երրորդ դեմքին մոտ կամ հեռավորությունը առաջին և երկրորդ դեմքերից: Այսպես՝ *տարակուսանք**<u>ս</u>**,* (ցուցական) *որ աստ կան* [Խոր.], *կարգեցից քեզ ի գիրս**<u>ս</u>** յայսոսիկ* («այս՝ մեզ մոտ եղած»), *ի պատմութեան**<u>ս</u>** յայսմիկ* («այս՝ մեզ մոտ եղած պատմության մեջ») [Խոր.], *որ աստ յայսմ աշխարհի**<u>ս</u>*** (ցուցական*) գործեցաւ ընդ մեզ* [Ագաթ.]. *և փրկեաց զմեզ ի հնոցէ**<u>ս</u>**, և ի միջի բորբոքեալ բոցոյ**<u>ս</u>**, և ի միջի հրոյ**<u>ս</u>** փրկեաց զմեզ* (բոլորը ցուցական) [Դան.], *եկ, հաւանեաց բանից աչագեղոյ դստեր**<u>ս</u>*** (դիմորոշ) *ալանաց տալ զպատանի**<u>դ</u>*** (ցուցական)՝ «այդ պատանին, որը քեզ մոտ է» [Խոր.], *Եւ տուաք մեք ածել առ ձեզ զսուրբ խոստովանող**<u>դ</u>*** (ցուցական) *Քրիստոսի զԳրիգորիս* [Ագաթ.], *մեզ զԳրիգորդ* (ցուցական) *տեսուչ և վարդապետ … կացուցիք* [Ն. տ.], *մի անփոյթ առնէր զշնորհաց**<u>դ</u>**, որ ի քեզ են* («այդ շնորհները, որ քո մեջ կան») [Ն. տ.]:

Երրորդ դեմքի **ն** հոդով ցուցականությունն արտահայտվում է ավելի սակավ դեպքերում, երբ լայն խոսքաշարից կարելի է պարզել, որ տվյալ դեպքում այն որոշիչ հոդ չէ, օր.՝ *և այսուհիկ հալածէր զզաւրս խաւարին, և ի վերայ ամենայնի վերնոյ<u>ն</u>* («այն վերինի» այսինքն՝ Աստծո – Լ.Հ.) *զաւրութեամբ զեր ի վերոյ լինէր* [Ագաթ.], *բայց հրաման տայ*

[3] Ֆ.Ֆեյդի, Հարաբերական նախադասությունը հայերեն գրաբար լեզվին մեջ, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Զեկուցումներ, Ե., 1984, էջ 589-590:

բնակչաց աշխարհի<u>ն</u> («այն՝ [նոր նվաճված] աշխարհի» – Լ.Հ.) *ուսանել զխաւսս և զլեզու հայկական* [Խոր.]: Երբեմն ցուցականություն արտահայտող **ն** հոդին զուգահեռ կիրառվում է և **այն** ցուցական դերանունը՝ սաստկացնող երանգով՝ *վաւաշ<u>ն</u> <u>այն</u> և բորբորիտո<u>ն</u>ն Շամիրամ*:

Ստացականության ենթակարգը առաջացել է ցուցականության զարգացումից, քանի որ մատնանշելով այս կամ այն առարկայի դիրքը ըստ դիմային մերձավորության՝ հոդը կարող էր աստիճանաբար սկսել ցույց տալ ոչ միայն տվյալ դեմքին մոտ գտնվելը, այլև նրան պատկանելը, ինչպես վերը նշված՝ *մի անփոյթ առնէր զշնորհացդ, որ ի քեզ են* օրինակում *շնորհացդ* կարող է նշանակել և «<u>քո</u> շնորհքը» և «<u>այդ</u> շնորհքը [որ քո մեջ է]»:

Շատ դեպքերում ցուցականության իմաստը կարող է հանդես գալ ստացականության իմաստի հետ սերտորեն կապված, օր.՝ *զազգի<u>ս</u> մերոյ աւագանոյն արս և նախնիս* [Խոր.] կարող է նշանակել «այս՝ մեր ազգի» (ցուցական և ստացական):

Ստացականության ենթակարգում նույնպես առավել գործուն են առաջին և երկրորդ դեմքի հոդերը, իսկ **ն** հոդը համեմատաբար սակավ գործածություն ունի: Ստացականության իմաստը սաստկանում է նաև համապատասխան դեմքի ստացական դերանունների զուգահեռ գործածությամբ, որը երրորդ դեմքի դեպքում հոդի գործառույթը որոշելու համար կարևոր դեր է խաղում:

Ստորև բերվում են մի շարք բնորոշ օրինակներ.

ս հոդով՝ *իշխանս պատուական աշխարհի<u>ս</u> <u>մերոյ</u> մեծի* [Ագաթ.], *արար ... մեզ սաստիկ պատիժս պատուհասից՝ մինչև թագաւորի<u>ս</u> <u>մերում</u> լինել խոզ* [Ագաթ.], *եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանց<u>ս</u>* («մեր երկու կողմերի միջև» [Ագաթ.], *յայսմ ժամանակի Մար Աբաս Կատինայ <u>զմերոյ</u> ազգի<u>ս</u>*

միայն հանեալ զպատմութիւն... [Խոր.], *ձգելով <u>զմեր</u> բնիկ նախարարութիւն<u>ս</u>* [Ն. տ.],

դ հոդով՝ *Տէր Աստուած մեր, որ առաքեցէր զմիածին որդիդ <u>քո</u>* [Ագաթ.], *երկրորդեմք այժմ <u>քում</u> հարցասիրութեանդ* [Խոր.], *հաճոյ թուեցաւ մեզ զաշխատութիւնն, որ ի վերայ <u>քոյ</u> հրամանիդ* [Ն. տ.], *զգոյշ լինիջիր անձինդ և վարդապետութեանդ, և ի դմին յամեսջիր* [Ագաթ.],

ն հոդով՝ *ի ձեռինն <u>իւրում</u> ունի մի մեծ ուկի [*Ագաթ.], *սիրեցին զտէրն <u>իւրեանց</u>* [Ն. տ.], *զմեզ արժանիս արասցէ Աստուած <u>իւրոյ</u> ողորմութեանն* և այլն:

Երբեմն, սակայն, ստացական դերանունների առկայությունը չի նշանակում, որ **ս** կամ **դ** հոդերը նույնպես ստացականության արժեք ունեն. Նրանք պահպանում են իրենց նախնական՝ ցուցականության իմաստը, որն առաջնային է ստացականության համեմատությամբ. Այսպես՝ *«իմ ուրա-խութիւնս այս լցեալ և կատարեալ է»* օրինակում **ս** հոդը կապվում է այս ցուցականի և ոչ թե **իմ** ստացականի հետ: Սա ավելի ցայտուն է երևում այն դեպքերում, երբ ստացական դերանունն այլ դեմք է արտահայտում, քան հոդը՝ *զալ ի վերայ քո ազգականիս*՝ նշանակում է «այս քո ազգականի, որնայստեղ՝ ինձ մոտ է», *ձերոց առաքելոցս*՝ նշանակում է «ձեր առաքյալների, որոնք այստեղ, մեզ մոտ են», *բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ* օրինակում տեղիդ մեր կապակցությունը նշանակում է «այդ տեղը, որ մերն է»:

Որոշյալության ենթակարգում, ի տարբերություն նախորդների, առկա է ոչ թե եռանդամ, այլ երկանդամ հակադրություն՝ որոշյալություն/անորոշություն, ըստ որում՝ անորոշությունն արտահայտվում է զրո ձևույթով, իսկ որոշյալության արտահայտմանն են ծառայում հոդերը առանց դիմայինտարբերակման (թեև առավել գործածական է երրորդ դեմքի հոդը). օր.՝ *զսուտ աստուածոցն զբագինսն կործանեսցեն*

[Ագաթ.], *զպատուիրանսն աւրինացն գիտես* [Եզն.], *զուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի հաւրէ, որ յերկինսն է* [Մտթ. Զ, 8], *ընկեսցի ի հնոցն հրոյն բորբոքելոյ* [Դան. Գ, 6]: Խիստ սակավդեպքերում **ս** և **դ** հոդերը նույնպես կարող են որոշյալության արժեք ունենալ, օր.՝ *կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ* [Դան. Գ, 17]:

Գրաբարում առկայացուցչների դերում հանդես եկող հոդերը դիրքային սահմանափակություն չունեն և կարող են կցվել եզակի և հոգնակի թվերի բոլոր հոլովաձևերին: Հայցական հոլովի դեպքում, ընդհակառակն, առկա է որոշյալության լրացուցիչ նշույթ՝ **զ** նախդիրը, որը կարող է զուգակցվել կամ չզուգակցվել հոդերին. օր.՝ *և թող մեզ զպարտիս մեր. զաւրացուցանէ զանզաւրս մեծազաւր զաւրութեամբ* [Եզն.], *հրամայել բանալ զդիւանդ արքունի* [Խոր.], *հաճոյ թուեցաւ մեզ զաշխատութիւնն … համարել հեշտութիւն* [Խոր.], *զմահուն դեղն տալով ընդ աւրէնսն* [Բուզ.] և այլն: Հետաքրքրական օրինակ է **զ** նախդրի հավելուրդային կրկնությունը որոշյալի և նրա բազմակի որոշիչների հետ՝ *զիւր սուրբ զաւրեղի զվկայսս իւր յայս կողմանս առաքեալ* [Ագաթ.]:

Հոդի դիրքային սահմանափակություն կարելի է ընդունել թերևս միայն Աստուած բառի համար (որպես միակ և միշտ որոշյալ էության), օր.՝ *զԱստուած դնեն պատճառ չարեաց* [Եզն.], *ոչ միայն երկու սկզբնակից գտանին, այլ երեք. Աստուած*(Ø), *և հիւղն և անջրպետն* [Եզն.]: Աստուած բառը հոդ կարող է ստանալ եզակի դեպքերում, և այն էլ ավելի շատ ցուցականության, քան որոշյալության իմաստով՝ *ընդէ՞ր չարիքն ոչ լինին աստուածք, որ Աստուծոյն յաղթել կարէին* [Եզն.]:

Մեծ մասամբ առանց հոդի են գործածվում և անձի հատուկ անունները, կամ, ավելի ճիշտ, հոդը հաճախ փոխանցվում է տվյալ անվան որոշիչ հանդիսացող ածականին, դերբային կամ գոյականին՝ *յաղագս մեծին Տիգրանայ* [Խոր.], *առեալ անձնազեղոյն և քաջաղեղանն արին Վաղարշակայ* [Խոր.], *ծնունդ է մեծին արին Արամազդայ* [Ագաթ.], *զկին սպանելոյն Գնելոյ*

առնոյր իւր կին Արշակ թագաւորն [Բուզ.], *թագաւորէն պարսից ի Շապհոյ* [Բուզ.], *ածել զառաջեաւ իւր զՎասակ Մամիկոնեան՝ զզաւրավարն սպարապետն Հայոց մեծաց* [Բուզ.], *ի բերանոյ շորիկն, շոգմոգն, տիրանենկն և տիրադրուժն, տիրասպանուն, տիրամատնիչն Փիսակայ* [Բուզ.]: Հատուկ անվան վրա դրված որոշիչ հոդ հանդիպում է ավելի սակավ դեպքերում՝ *արքայն հայոց Արշակն* [Բուզ.]. *Սիմն ասացեալ լեառն* [Խոր.], *յորոց զմինն … այս ինքն է Սանասարն* [Խոր.] և այլն:

Անորոշության եզրը գրաբարում, ինչպես նշվեց, հանդես է գալիս զրո ցուցիչով՝ հոդերի բացակայությամբ: Որոշ դեպքերում այն ունի վերլուծական ձևական արտահայտություն՝ կա՛մ **մի** թվականի կիրառությամբ, օր.՝ *մեծութեամբ իբրև մեծ **մի** բլուր, և ի վերայ նորա սիւն **մի** հրեղէն բարձր ինչն յոյժ, և ի վերայ նորա թակաղաղ **մի** ամպեայ, և խաչն լուսոյ ի վերայ նորա* [Ագաթ.], երբեմն թեք հոլովաձևերով՝ *առն **միոջ** էին երկու որդիք, յաւուր **միում,*** կա՛մ ***ոմն, որ, իմն,ինչ*** անորոշ դերանունների հետ՝ *քահանա **ոմն,** Կուռդ **ոմն** Արամազդ, **ոմն** աւրինական, մարգարէ **որ**, բան **ինչ**, յետ աւուրց **ինչ**, իբրև զտղա **իմն** անկատար,* նաև տարբեր հոլովաձևերով՝ *առանց **իրիք** յանցանաց, կանայք **ոմանք**, առն **ուրումն** մեծատան* և այլն: Սակայն այս ձևերը ավելի շատ անորոշության **հասկացական** և ոչ **քերականական** կարգի արտահայտություն են: **Մի** թվականի կիրառությունը անորոշ հոդի դերում կանոնավոր և համապարփակ բնույթ չի ունեցել և կարելի է ասել, որ այն հայերենի ողջ զարգացման ընթացքում այնպես էլ լիակատար քերականացման չի ենթարկվել:

Hovsepyan Liana – Category of Actualisation in Old Armenian. – The report analyses the semantic and functional peculiarities of Old Armenian pronominal particles s, d, n, as special actualisators. These particles are characterized by formal and semantic syncretism as they can, according with the context, express the meanings of personal, demonstrative, and possessive pronouns and can be used either instead of corresponding

pronouns or parallelly with them. Therefore, in grammatical works on Old Armenian these particles are named also as “personal”, “demonstrative”, and “possessive” articles. It is also mentioned that in contrast to them the use of the indefinite particle-numeral mi is limited and it had not been grammaticalized during the whole historical development of the Armenian language.

Овсепян Лиана - Категория актуализации в древнеармянском языке. - В статье рассматриваются семантико-функциональные особенности древнеармянских артиклей-частичек местоименного происхождения s, d, n, выступающих в роли своеобразных актуализаторов. Подчеркивается формально-семантический синкретизм этой грамматической категории, так как в зависимости от контекста эти частички могут выражать 221 значения личных, указательных, притяжательных местоимений и употребляться либо заменяя соответствующие местоимения, либо параллельно с ними. Вследствие этого в грамматических трудах по древнеармянскому языку наряду с термином “определенные артикли” они обозначаются также как “личные, указательные и притяжательные артикли”. Отмечается что в отличие от этих слитных артиклей-частичек употребление частички числительного mi в роли дистантного неопределенного артикля ограничено и в течение всего исторического развития армянского языка не достигло полной грамматикализации.

ԻՆՉՈՒ-ՈՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԿՈՍԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Ղուկասյան Սնակ

Նոր Կտակարանում չորս Ավետարաններից Մարկոսի Ավետարանը երկրորդն է և ծավալով՝ ամենափոքրը՝բաղկացած է 16 գլուխներից: Մարկոսի Ավետարանի խորհրդանիշը առյուծն է, գույնը՝ ծիրանագույնը:

Մարկոսի արևելահայերեն Ավետարանում կա 100 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում՝ 121: Այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ Մարկոսի արևելահայերեն Ավետարանում մի շարք պատմողական նախադասություններ արևմտահայերենում արտահայտված են հարցականով, մյուս կողմից էլ զգալի դեպքերում արևելահայերեն մեկ հարցական նախադասությունը արևմտահայերենում հանդես է գալիս երկու հարցումների տեսքով:

Մարկոսի Ավետարանում նույնպես հիմնականում սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, և նոր չակերտների մեջ բերվում է համապատասխան հարցումը: Այդ խոսքը այստեղ նույնպես հանդես է գալիս կարճ՝ բաղկացած երկու-երեք բառերից, ինչպես՝ «Եւ նրանց ասաց-Ապա ըսաւ անոնց» (4,21), «Եւ նրան հարցրեց – Յիսուս անոր հարցուց» (5,9), «Ասաց նրանց-Ըսաւ անոնց» (6, 38) և շատ ավելի երկար՝ անգամ բաղկացած երկու և երեք նախադասություններից, ինչպես՝ «Իսկ

---

* «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 222-233:

օրէնսգէտերն ու փարիսեցիները երբ տեսան, որ նա մաքսաւորների մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին- դպիրներն ու փարիսեցիները, երբ տեսան թէ անիկա մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն» (2, 16), «Եւ նա իր մօտ կանչելով նրանց՝ առակներով էր խօսում նրանց հետ – Հիսուս զանոնք կանչելով՝ առակներով ըսաւ անոնց» (3, 23):

Մարկոսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում հարցումներ են կազմված համարյա բոլոր հարցական դերանուններով՝ *ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, քանի՞, ո՞ւր, ո՞ւմ, ո՞ր, ո՞ւմ, ո՞ր, որտեղի՞ց, ինչքա՞ն, ինչո՞վ* և *ինչի՞ մասին:* Նշենք, որ արևելահայերեն ո՞ւմ հարցական դերանվանը արևմտահայերենում համապատասխանում է *որո՞ւ* ձևը, իսկ *որտեղի՞ց*-ին՝ *ուրկէ՞* ձևը:

Ինչպես Մատթէոսի, այնպես էլ Մարկոսի Ավետարանում հանդես են գալիս տարբեր տեսակի հարցական նախադասություններ: *Ինչու-որ* հարցումները քանակով բոլորից շատ են: Միայն մեկ հարցում պարունակող կամ մենաբեվեռ *ինչու-որ* հարցումները 53 հատ են, 10-ը բաղկացած են երկու *ինչու-որ* հարցումներից, իսկ 7-ը մի կողմից *ինչու-որ* հարցումներից, մյուս կողմից էլ *այս-ոչ* և ընտրանքային հարցումներից և մեկն էլ հանդես է գալիս *արդեօք*-ով կազմված եղանականիշ հարցման մեջ: Այսպիսով, ընդհանուր առմամբ Մարկոսի Ավետարանում կա 80 *ինչու-որ* հարցում: Մենաբևեռների մեջ բոլորից շատ հանդիպում են *ի՞նչ-ով* կազմվածները՝ 15 անգամ, *ի՞նչու-ով* կազմվածները՝ 14 անգամ, հետո *ո՞վ-ով* կազմվածները՝ 7 անգամ, հետո *ինչպե՞ս-ով* կազմվածները՝ 5 անգամ, ապա մյուսներով՝ 1-3 անգամներ:

Այժմ ներկայացնենք մենաբևեռ *ինչու-որ* հարցական նախադասությունները՝ ըստ հարցական դերանվան քանակի

շատության՝ նշելով երկբևեռ և եռաբևեռ հարցումների միայն համարները:

«Ինչ» հարցական դերանունով հարցումներ

Ինչպես վերը նշեցինք, ի՞նչ հարցական դերանունով մենաբևեռ հարցական նախադասությունները Մարկոսի Ավետարանում բոլորից շատ են՝ 15-ը, իսկ 12-ն էլ պարունակվում են մեկից ավելի հարցումներում: Այս 12-ից տասի դեպքում *ի՞նչ*-ը հանդես է գալիս *ո՞վ* (2, 6, 7: 8, 27: 8, 27: 8, 29: 11, 27-28), *ի՞նչ* (9, 34, 36-37), *ինչո՞ւ* (11, 5), *ե՞րբ* (13. 34), *ինչի՞* (4, 30-32), *որտեղի՞ց* (6, 2) հարցական դերանուններով կազմված հարցումների հետ, մեկի դեպքում՝ *այս-ոչ* հարցման հետ (1, 23-24) և մեկի դեպքում էլ ընտրանքայինի հետ (3, 4): Փաստորեն, ինչպես արդեն ասել ենք *ի՞նչ*-ով կազմված հարցումների քանակը Մարկոսի Ավետարանում բոլորից շատ է՝ ընդհանուր հաշվով 28-ը:

Այժմ դիտարկենք *ի՞նչ* հարցական դերանունով կազմված մենաբևեռ հարցական նախադասությունները, որոնք ինչպես պարզ կառուցվածքի են, այնպես էլ բարդ՝ արտահայտելով տարբեր ստորադասական և համադասական հարաբերություններ:

ա) պարզ կառուցվածքի հարցումներ.

1) Եւ նրան հարցրեց. «Անունդ ի՞նչ է»- Յիսուս անոր հարցուց. «Անունդ ի՞նչ է» (5, 9):

2) Աղջիկը դուրս գնալով իր մորն ասաց՝ ի՞նչ ուզեմ- Աղջիկը դուրս ելլելով՝ իր մօրը հարցուց. «Ի՞նչ ուզեմ» (6, 24):

3) Նա պատասխան տուեց նրանց եւ ասաց. «Մովսէսը ձեզ ի՞նչ պատուիրեց»- Անիկա պատասխան տուաւ անոնց եւ ըսաւ. Մովսէսը ձեզի ի՞նչ պատուիրեց» (10, 3):

4) Եւ քահանայապետը իսկոյն պատռեց իր պատմուճանը եւ ասաց. «Եւ ի՞նչ պետք են մեզ վկաներ...» - Քահանայապետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ. «Ալ ի՞նչ պետք են մեզի վկաներ...» (14, 63):

5) Պիղատոսը նրանց ասաց. « Ի՞նչ չար բան է արել նա» - Պիղատոս ըսաւ անոնց. «Բայց ի՞նչ չար գործ ըրած է ատիկա» (15, 14):

բ) Ետադաս կոչականով հարցում.

1) Երբ նա Յիսուսին հեռուից տեսաւ, առաջ վազեց երկրպագեց նրան – բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսուս բարձրեալ Աստծու Որդի:...»- Երբ հեռուէն Յիսուսը տեսաւ, վազեց ու երկրպագութիւն ըրաւ անոր Եւ մեծ ձայնով մը աղաղակեց ու ըսաւ. «Դու ինծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսո՛ւս, Որդի Բարձրեալ Աստուծոյ, ...» (5, 6-7):

գ) բարդ ստորադասական հարցումներ, որոնցից վերջինը առաջադաս կոչականով է.

1) Եւ նա նրանց ասաց. «Ի՞նչ էք կամենում ինձնից, որ անեմ ձեզ համար» - Ան ալ ըսաւ անոնց. «Ի՞նչ կ'ուզէք , որ ընեմ ձեզի» (10, 36):

2) Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ» - Եւ Յիսուս ըսաւ անոր. «Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ» (10, 51):

3) Պիղատոսը դարձյալ խօսք առաւ եւ ասաց նրանց. «Իսկ ի՞նչ էք ուզում, որ անեմ հրեաների արքային» - Նորեն Պիղատոս հարցուց ու ըսաւ անոնց. «Հապա Հրէից թագաւորը ի՞նչ կ'ուզէք որ ընեմ» (15, 12):

4) Երբ նա այնտեղից ճանապարհ ընկաւ, ահա մեծահարուստ մէկը առաջ վազելով ծնկի իջաւ, հարցրեց նրան ու ասաց. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ» - Երբ անիկա դուրս ելաւ ճամբան մէջ, ահա մարդ մը վազեց ու անոր առջեւ ծունկի գալով՝ հարցուց անոր ու

ըսաւ. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ» (10, 17):

դ) Ենթաստորադաս հարցական նախադասություն.

1) Ապա հարցրին նրան ու ասացին. «Այն ի՞նչ է, որ օրէնսգէտներն ասում են, թէ նախ Եղիան պէտք է գա» - Իրեն հարցուցին ու ըսին. «Այն ի՞նչ է որ դպիրները կ'սեն թէ պէտք է որ առաջ Եղիան գայ» (9, 10):

ե) Ստորադասական և համադասական հարաբերությամբ բարդ հարցական նախադասության:

1) Եւ ամէնքը զարմացան, այնպէս որ հարցնում էին իրար եւ ասում». «Այն ի՞նչ նոր վարդապետութիւն է, որ իշխանութեամբ պիղծ ոգիներին էլ է սաստում, եւ նրանք հնազանդւում են նրան» - Ամէնքը զարմացան, այնպէս որ իրարու հարցափորձ կ'ընէին ու կ'ըսէին. «Այս ի՞նչ է, ի՞նչ նոր վարդապետութիւն է այս, որ իշխանութիւնով պիղծ ոգիներուն ալ կը հրամայէ ու իրեն կը հնազանդին» (1, 27):

զ) Համադասական հարաբերությամբ հարցական նախադասություններ, որոնցից երկրորդը ունի առաջադաս կոչական.

1) Մինչ Յիսուս այս բանն էր խօսում, ժողովրդապետի տնից ոմանք եկան եւ ասացին. «Քո դուստրը մեռաւ, էլ ի՞նչ ես նեղութիւն տալիս Վարդապետին» - Երբ ինքը դեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն ոմանք եկան ու ըսին. «Աղջիկդ մեռաւ, ալ ի՞նչու վարդապետը կը յոգնեցնես (5, 35):

2) Նա պատասխանեց եւ ասաց նրան. «Վարդապե՛տ, այդ բոլորը իմ մանուկութիւնից ի վեր արել եմ. Արդ, ի՞նչ եմ պակաս թողել» (10, 20):

է) Երբ հարցումը և նրան տրող պատասխանը բերվում է միասնաբար.

1) Եւ սկսեց նրանց հետ առակներով խօսել ու ասել. «.... Արդ, այգու տէրը ի՞նչ կ'անի. Կը գայ եւ կը սպանի մշակներին ու

այգին ուրիշների ձեռքը կը յանձնի: ...» - Ապա շարունակեց առակներով խօսիլ անոնց հետ ու ըսիլ. «Ուստի այգիին տէրիին պիտի ընէ: Պիտի գայ ու կորսնցնէ մշակները եւ այգին ուրիշներու պիտ տայ: ...» (12,1, 9):

Ի՞նչու հարցական դերանունով հարցումներ

Ինչպես ասացինք, Մարկոսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում *ի՞նչու*-ով կա 14 մենաբևեռ հարցական նախադասություն՝ չորսն էլ հանդես են գալիս այլ տիպի հարցումների հետ՝ մեկը՝ մեկ *այո-ոչ* հարցման հետ (4, 40), մեկը երեք *այո-ոչ* հարցման հետ (8, 17), մեկը *ի՞նչու-որ*-ի հետ և մեկն էլ՝ ընտրանքայինի հետ (2, 8-9): Այս հարցումները կառուցվածքով լինում են ինչպես պարզ, այնպես էլ բարդ: Պարզերը հանդես են գալիս առաձին և առաջադաս կոչականով:

Այժմ բերենք *ի՞նչու*-ով կազմված մենաբևեռ հարցական նախադասությունները.

ա) Պարզ հարցումներ, որոնցից վերջինը առաջադաս կոչականով է.

1) Եւ երբ Յիսուս տուն մտաւ, աշակերտները, առանձին, հարցրին նրան. «Ի՞նչու մենք չկարողացանք հանել դրան» - ու երբ ինք տուն մտաւ, իր աշակերտները առանձինն հարցուցին իրեն՝ ըսելով. «Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա» (9, 27):

2) Իսկ օրէնսգէտներն ու փարիսեցիները, որ նա մաքսաւորների եւ մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին. «Ինչո՞ւ էք մեղաւորների հետ ուտում եւ խմում» - դպիրներն ու փարիսեցիները, երբ տեսան թէ անիկա մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն. «Ի՞նչու համար մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ կ'ուտէ եւ կը խմէ» (2, 16):

3) Եւ ժամը երեքին Յիսուս բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «.... Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ: ...» - Իններորդ ժամուն՝ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ. «....Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ինչո՞ւ զիս թողեցիր» (15, 34):

բ) Բարդ համադասական հարցումներ.

1) Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ էին պահում. Եկան ու նրան ասացին. «Ի՞նչու Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում» - Յովհաննէսին ու փարիսեցիներու աշակերտները ծոմ կը պահէին: Եկան ու ըսին անոր. «Ի՞նչու Յովհաննէսին ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահեն, բայց քու աշակերտներդ ծոմ չեն պահեր» (2, 18):

2) Ապա ներս մտնելով նրանց ասաց. «Ի՞նչու խռովուած ու լաց էք լինում. մանուկը մեռած չէ, այլ ննջում է» - Ներս մտնելով՝ ըսաւ անոնց. «Ի՞նչու խռովեր էք ու կու լաք. մանուկը մեռած չէ, հապա կը քնանայ» (5, 39):

3) Ահա ինչու փարիսեցիները եւ օրէնսգէտները հարց տուեցին նրան. «Ի՞նչու քո աշակերտները նախնիների աւանդութեան համաձայնն չեն շարժւում, այլ անմաքուր ձեռքերով են հաց ուտում» - Այն ատեն փարիսեցիներն ու դպիրները հարցուցին անոր. «Ի՞նչու քո աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս չեն շարժիր ու անլուայ ձեռքերով հաց կ'ուտեն» (7, 5):

4) Աշակերտները զայրացան եւ ասացին. «Այդ իւղը ի՞նչու այսպէս պիտի կորչէր – կարել էր այդ անուշահոտ իւղը վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի եւ տալ աղքատներին» - Կային ոմանք, որ կը նեղուէին ու կ’ըսէին. «Ինչո՞ւ համար եղաւ այդ իւղին կորուստը. Քանզի այդ [իւղը] երեք հարիւր դահեկանէն աւելի կրնար ծախուիլ ու աղքատներուն տրուիլ» (14, 4):

գ) Համադասական և ստորադասական հարաբերություն արտահայտող հարցումներ.

1) Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Եղիան նախ պիտի գայ եւ ամէն բան կարգի պիտի դնի. Իսկ ի՞նչու մարդու Որդու մասին գրուած է, որ շատ չարչարանքներ պիտի կրի ու անրգուի»- «Ճիրաւի առաջ Եղիան պիտի գայ եւ ամէն բան կարգի դնէ, ինչպէս գրուած Որդին մարդոյ համար, ու շատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի» (9, 11)։

2) Նրանք իրար միջեւ խորհում էին ու ասում. «Եթէ ասենք՝ երկնքից, մեզ կ'ասի՝ իսկ ի՞նչու նրան չհաւատացիք. Իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից ենք վախենում», որովհետև բոլորը գիտէին, թէ Յովհաննէսը մարգարէ էր» - Անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին. «Եթէ ըսենք՝ Երկնքէն, պիտի ըսէ, Հապա ի՞նչու չհաւատացիք անոր. Իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը վախնէին, վասն զի ամէնքը գիտէին թէ Յովհաննէսը ճշմարտապէս մարգարէ էր» (11, 31-32)։

3) Յիսուս իմացաւ նրանց կեղծաւորութիւնը եւ ասաց. «Ինչո՞ւ էք ինձ փորձում, կեղծաւորներ. Ինձ մի դահեկան բերէք, որ տեսնեմ»- Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ զիս կը փորձէք։ Բերէ՛ք ինծի դահեկան մը որ տեսնեմ» (12, 15)։

4) Եւ Յիսուս նրանց ասաց. «Թո՛յլ տուէք դրան. ինչո՞ւ էք նեղութիւն տալիս, որովհետեւ ինձ համար մի բարի գործ արեց…»- բայց Յիսուս ըսաւ. «Թող տուէք անոր, ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք, ատիկա բարի գործ մը գործեց ինծի։...» (14, 6)։

Դ) Երբ հարցումը և նրան տրվող պատասխանը բերվում է միասնաբար։

1) Եւ նա իր հոգում զայրացաւ եւ ասաց. «Ինչո՞ւ է այս սերունդը նշան ուզում. Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերնդին նշան չի տրուի»- Անիկա իր հոգիին մէջ հառաչելով՝ ըսաւ. «Ինչո՞ւ այս ազգը նշան կ'ուզէ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս ազգին նշան պիտի չտրուի» (8, 12)։

2) Եւ Յիսուս նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. Բարի չէ ոչ ոք, այլ միան Աստուած: ...» - Յիսուս ըսաւ անոր. «Ինչո՞ւ զիս բարի կ’անուանես: Մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած:...» (10,18):

3) Եւ եթէ ձեզ ասի. «Այդ աւանակը ինչո՞ւ էք արձակում», կ’ասէք. «Տիրոջը պէիք է». Եւ նա իսկոյն դրան այստեղ կ’ուղարկի» - Եթէ մէկը ըսէ ձեզի ‘Այդ ի՞նչ կ’նէք’, ըսէք. ‘Տէրոջը պէտք է’. եւ շուտ մը հոս պիտի դրկէ զանիկս» (11, 3):

Ո՞վ հարցական դերանունով հարցումներ

Մարկոսի Ավետարանում *ո՞վ* հարցական դերանունով կա 7 մենաբնեռ հարցական նախադասություն, չորս էլ հանդես են գալիս *ինչու-որ* հարցումների հետ մեկտեղ (2, 6-7:8, 27: 8, 29: 11, 27-28): Այս Ավետարանում *ո՞վ* հարցական դերանունով կան պարզ և բարդ հարցական նախադասություններ:

Բերենք այդ հարցական նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ.

1) Եւ Յիսուս իսկոյն ինքն իր մէջ իմանալով իրենից դուրս ելած զօրութիւնը, դարձաւ դէպի ամբոխը եւ ասաց. «Ո՞վ դիպաւ իմ զգեստներին» - Եւ Յիսուս գիտցաւ թէ զօրութիւն մը իր մէ ելաւ, դարձաւ բազմութեան ու ըսաւ. «Ո՞վ դիպաւ իմ հանդերձներուս» (5, 30):

2) Եւ աշակերտները առաւել եւս էին զարմանում ու միմեանց ասում. «Ապա ուրեմն ո՞վ կարող է փրկուել»- Անոնք խիստ շատ զարմացան ու ըսին իրարու. «Ալ ո՞վ կրնայ փրկուիլ» (10, 26):

3) Եւ ասում էին միմեանց. «Քարը գերեզմանի դռնից մեզ համար ո՞վ պիտի գլորի»- ու իրարու կ’ըսէին. «Քարը ո՞վ պիտի գլորէ մեզի գերզմանին դռնէն» (16, 3):

4) Եւ երբ ասացին նրան ահաւասիկ քո մայրն ու քո եղբայրները դրսում են եւ քեզ են ուզում, նրանց պատասխանեց եւ ասաց. «Ո՞վ է իմ մայրը կամ իմ եղբայրները» - Ժողովուրդը, որ անոր բոլորտիքը նստեր էր, իրեն ըսին. «Ահա քու մայրդ ու եղբայներդ դուրսը կայներ են եւ քեզ կ'ուզեն»: Անիկա պատասխան տուաւ անոնց ու ըսաւ. «Ո՞վ է իմ մայրս կամ որո՞նք են եղբայրներս» (3, 33):

բ) Ենթաստորադաս հարցում.

1) Եւ ոմանք սկսեցին թքել նրա երեսին, շորով գլուխը ծածկել, բռունցքով խփել ու ասել. «Մարգարէացիր մեզ, Քրիստոսդ, այն ո՞վ է, որ քեզ խփեց»:

Ոմանք սկսան թքնել ու անոր երեսը ծածկել և բռունցքով ծեծել ու ըսել. «Մարգարէացի՛ր» (14, 65):

գ) Երկու ստորադաս նախադասություններ, որոնք իրար նկատմամբ գտնվում են համադասական հարաբերության մեջ.

1) Եւ աշակերտները նրան ասացին. «Տեսնում ես, որ ամբոխը նեղում է քեզ, եւ ասում ես, թէ՝ ո՞վ դիպաւ իմ զգեստներին»- Աշակերտները ըսին իրեն. «Կը տեսնես թէ բազմութիւնը քեզ կը նեղէ ու կ'սես թէ՝ 'Ո՞վ ինծի դպաւ'» (5, 31):

«Ինչպէ՞ս» հարցական դերանունով հարցումներ

Մարկոսի Ավետարանում *ինչպե՞ս* հարցական դերանունով կա 5 մենաբևեռ հարցական նախադասություն, մեկն էլ հանդես է գալիս *այո-ոչ* հարցման հետ (4, 13), այսինքն ընդհանուր առմամբ 6 հարցում:

Նշված Ավետարանում *ինչպե՞ս* հարցական դերանունով կան պարզ և բարդ հարցական նախադասություններ:

Բերենք այդ նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածքի հացրցումներ.

1) Եւ նա նրանց ասաց. «Ապա ինչպե՞ս չէք հասկանում»- ու ըսաւ անոնց. «Յապա ինչպէ՞ս չէք հասկնար» (8, 21):

2) Եւ նա իր մօտ կանչելով նրանց՝ առակներով էր խօսում նրանց հետ. «Ինչպէ՞ս կարող է սատանան սատանային դուրս հանել:...»- Յիսուս զանոնք կանչելով՝ առակներով ըսաւ անոնց. «Ինչպէ՞ս կրնայ Սատանան Սատանայ հանել:...» (3, 23):

բ) Բարդ ստորադասական հարցում.

1) Մինչ Յիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տուեց ժողովրդին ու ասաց. «.... Արդ, եթէ Դաւիթն ինքն իսկ նրան Տէր է կոչում, ինչպէ՞ս նրա Որդին կը լինի»- Երբ Յիսուս տաճարին մէջ կը սորվեցնէր՝ ըսաւ. «.... Ուրեմն Դաւիթ ինք որ զանիկա Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անիկա անոր որդին կ'ըլլայ» (12, 37):

գ) Բարդ համադասական հարցում.

1) Եւ քահանայապետը իսկոյն պատռեց իր պատմուճանը եւ ասաց. «.... Ահա ամէնքդ դրա բերանից լսեցիք հայհոյութիւնը. ձեզ ինչպէ՞ս է թւում:...»- Քահայանապետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ. «Ալ ի՞նչ պետք են մեզի վկաներ: Անոր հայհոյութիւնը լսեցիք. ձեզի ինչպէ՞ս կ'երեւնայ» (14, 64):

Դ) Տարակառուցվածք հարցական նախադասություն.

1) Մինչ Յիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տուեց ժողովրդին ու ասաց. «Ինչպէ՞ս են ասում օրէնսգէտները, թէ Քրիստոս Դաւիթ որդի է, մինչ Դաւիթն ինքն Սուրբ Հոգով ասում է՝ Տէրն իմ Տիրոջն ասաց. նստի՛ր իմ աջում, մինչեւ որ քո թշնամիներին քո ոտքերի համար պատուանդան դնեմ:...»- Երբ Յիսուս տաճարին մէջ կը սորվեցնէր՝ ըսաւ. «Դպիրները ինչպէ՞ս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթին որդին է: Ինք՝ Դաւիթ Սուրբ Հոգիով կ'սէ. 'Տէրը իմ Տիրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս. Մինչեւ քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ':...» (12, 35-36):

«Քանի՞» հարցական դերանունով հարցումներ

Դիտարկվող Ավետարանում *քանի՞* հարցական դերանունով կա 3 մենաբևեռ հարցական նախադասություն, իսկ մեկն էլ հանդես է գալիս չորս *այո-ոչ* հարցում պարունակող հնգաբևեռ հարցման մեջ (8, 17, 18-19)։ *Քանի՞*-ով կազմված 3 հարցումներից մեկը պարզ կառուցվածքի է, երկուսը՝ բարդ։

Բերենք այդ նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածքի հարցում.

1) Եւ նա հարցրեց նրանց. «Քանի՞ նկանակ ունեք» - Յիսուս հարցուց անոնց. «Քանի՞ նկանակ ունիք» (8, 5)։

բ) Բարդ ստորադասական հարցումներ.

1) Յիսուս իմացաւ նրանց խորհուրդը եւ նրանց ասաց. «.... Եւ երբ եօթը նկանակը չորս հազար հոգու բաժանեցի, կտորտանքների քանի՞ զամբիւղ լիքը վերցրիք» - Յիսուս անոնց խորհուրդը իմանալով ըսաւ անոնց. «.... ու երբ Եօթը նկանակը չորս հազարին կտրեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կտորուանք վերցուցիք» (8, 17, 20)։

2) Ասաց նրանց. «Քանի՞ նկանակ ունէք, գնացէք, տեսէք» - Ըսաւ անոնց. «Քանի՞ նկանակ ունիք, գնացէք նայեցէ՛ք» (6, 38)։

«Ո՞ւր» և «ո՞ւմ» հարցական դերանուններով հարցումներ

Մարկոսի Ավետարանում նշված հարցական դերանուններից յուրաքանչյուրով կան երկուական հարցական նախադասություն։ Արևելահայերենի ո՞ւր հարցական դերանվանը արևմտահայերենում դարձյալ համապատասխանում է *ո՞ւր*-ը, իսկ *ո՞ւմ*-ին՝ *ուրո՞ւ* ձևը։ *Ո՞ւր*-ով հարցումները բարդ ստորադասական են, իսկ ո՞ւմ-ովներից մեկը պարզ է, մյուսը՝ բարդ ստորադասական։

Բերենք այդ նախադասությունները.

ա) «Ո՞ւր»-ով բարդ ստորադասական հարցումներ, որոնցից երկրորդը ենթաստորադաս է.

1) Եւ բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ զատկի զառն էին մորթում աշակերտները նրան ասացին. «Ո՞ւր ես ուզում գնանք պատրաստենք, որ զատկական ընթրիքն ուտես» - բաղարջակերաց առաջին օրը, երբ զատիկը կը մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն. «Ո՞ւր կ'ուզես որ երթանք պատրաստենք՝ որպէս զի զատիկը ուտես» (14, 12):

2) Եւ նա ո՛ր տունը որ մտնի, տանտիրոջը կ'ասէք. «Վարդապետն ասում է՝ ո՞ւր է այն իջեւանը, ուր իմ աշակերտների հետ զատկական ընթրիքը պիտ ուտեմ»- ուր որ մտնէ, տան տիրոջը ըսէք. 'Վարդապետը կ'ըսէ, ո՞ւր է օթեւանը, ուր աշակերտներուս հետ մէկտեղ կարենամ զատիկը ուտել' (14, 14):

բ) «ո՞ւմ»-ով պարզ հարցում.

1) Եւ նրանց ասաց. «Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը»- Ըսաւ անոնց. «Որո՞ւնն է այս պատկերը ու պատկերը ու գիրը» (12, 16):

գ) «Ո՞ւմ»-ով բարդ ստորադասական հարցում.

1) Նրա մօտ եկան սադուկեցիները, որոնք ասում են, թէ յարութիւն չկայ. հարց էին տալիս եւ ասում. «.... Արդ, յարութեան ժամանակ, երբ յարութիւն առնեն, նրանցից ո՞ւմ կինը կը լինի. Քանի որ եօթն էլ նրան կին առան»- Անոր քով եկան սադուկեցիներ, որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ եւ անոր հարցուցին՝ ըսելով. «.... Ուրեմն յարութեան ատեն, երբ յարութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ. Վասն զի եօթն ալ զանիկա կին ունեցան» (12, 18, 23):

«Ո՞ր», «ինչքա՞ն» և «որտեղի՞ց» հարցական դերանուններով հարցումներ

Դիտարկվող Ավետարանում նշված հարցական դերանուններից յուրաքանչյուրով կա մեկական մենաբևեռ հարցական նախադասություն. Միայն *ո՞ր*-ը հանդես է գալիս

ընտրանքային հարցման հետ (2, 8-9), իսկ *որտեղի՞ց*-ը *ի՞նչ*-ով կազմված հարցման հետ (6, 2):

Արևելահայերեն *ո՞ր* հարցական դերանունը արևմտահայերենում արտահայտված է հենց *ո՞ր*-ով, *ինչքա՞ն*-ը՝ *որչա՞փ*-ով, *որտեղի՞*ց-ը, ուրկէ՞-ով: Դրանցից երկուսը պարզ կառուցվածքի են, մեկը՝ բարդ:

Բերենք այդ նախադասությունները.

1) Օրէնսգէտներից մէկը, մօտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին. Երբ նա տեսաւ, թէ Յիսուս նրանց պատասխանը լավ տուեց, հարցրեց նրան եւ ասաց. «Ո՞ր պատուիրանն է առաջինը»- դպիրներեն մէկը եկաւ ու մտիկ կ'ընէր անոնց՝ երբ վիճաբանութիւն կ'ընէին ու երբ տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց, հարցուց անոր ու ըսաւ. «Ո՞րն է բոլոր պատուիրանքներուն առաջինը» (12, 28):

2) Յիսուս հարցրեց նրա հօրը եւ ասաց. «Ինչքա՞ն ժամանակ է անցել այն օրուանից, ինչ այդ նրան պատահել է» - Յիսուս հարցուց անոր հօրը ու ըսաւ. «Ո՞րչափ ատեն է որ այդ բանը ատոր եղաւ» (9, 20):

3) Աշակերտները նրան պատասխանեցին եւ ասացին. «Որտեղի՞ց կարող ես նրանց հացով կշտացնել այս ամայի վայրում» - Իր աշակերտները պատասխան տուին իրեն. «Այս անապատին մէջ ուրկէ՞ կրնայ մէկը հացով կշտացնել ատոնք» (8, 4):

«Ինչո՞վ» և «ինչի՞ մասին» կապակցությամբ հարցումներ

Մարկոսի Ավետարանում «ինչո՞վ» հարցական դերանունով կամ միայն մեկ հարցում, իսկ «ինչի՞ մասին» կապակցությամբ՝ երկու: *Ինչո՞վ* հարցական դերանունը արևմտահայերենում արտահայտված է դարձյալ *ինչո՞վ,* իսկ *ինչի՞ մասին* կապակցությունը՝ *ի՞նչ* հարցական դերանունով:

«Ինչի՞ մասին» կապակցությամբ հարցումները պարզ կառուցվածքի են, իսկ *ինչո՞վ* հարցական դերանունովը՝ բարդ:

Բերենք այդ հարցական նախադասությունները.

1) Յիսուս աշակերտներին հարցրեց. «Ինչի՞ մասին էիք վիճում նրանց հետ»- Յիսուս հարցուց դպիրներուն «Ի՞նչ վիճաբանութիւն կ'նէիք անոնց հետ» (9, 15):

2) Եկաւ Կափառնայում եւ, երբ տուն մտաւ, աշակերտներին հարցրեց. «Ճանապարհին իրար հետ ինչի՞ մասին էիք վիճում» - Եկաւ Կափառնայում ու երբ տուն մտաւ՝ հարցուց անոնց. «Ի՞նչ վիճաբանութիւն կ'ընէիք ճամբան իրարու հետ» (9, 32):

3) Եւ նա ասաց. «.... Աղը լաւ բան է, բայց եթէ աղը անհամանայ, ինչո՞վ պիտի համեմուի. արդ, դուք ձեր մէ՛ջ ունեցէք աղը եւ իրար հետ խաղաղութեամբ ապրեցէ՛ք» - Յիսուս ըսաւ. «.... Աղը աղէկ է, բայց եթէ աղը անհամնայ, *ինչո՞վ* պիտի համովցնէք. Ձեր անձին մէջ աղ ունեցէք եւ իրարու հետ խաղաղութիւն ունեցէք» (9, 38, 49):

Гукасян Севак - В Евангелии от Марка в восточном варианте армянского языка есть 100 вопросительных предложениий, а в Западном - 121. Вапросы, содержащие только один вопрос в восточном варианте армянского языка в Евангелии от Марка - 53, и если учесть, что местоименные вопросы выступают также с другими вопросительными предложениями, эта цифра возрастает до 80. Только предложения, содержащих один вопрос, являются структуами как простых так и сложных предложений. В этих втруктурах из вопросительных местоимений чаще всего встречается ի՞նչ (что?) - 15 раз, ինչո՞ւ (почему?) -14 раз, ո՞վ (кто?) - 7 раз, ինչպե՞ս (как?) - 5 раз.

Ghukasyan Sevak - In the Gospel of Mark in the eastern version of the Armenian language there are 100 interrogative sentences, and in the Western version - 121. There are 53 H-W questions in the eastern version

of the Armenian language of the Gospel of Mark, and if we take into account that the H-W questions also appear with other interrogative questions, this number increases to 80. Only sentences containing one question are simple and complex structures. In these structures there are interrogative pronouns with ի՞նչ (what?) - 15 times, ինչո՞ւ (why?) -14 times, ո՞վ (who?) - 7 times, ինչպե՞ս (how?) - 5 times.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ..5

Գրիգորյան Գայանե - Խոսակցական և գրական լեզուների տեմպի համեմատական քննություն 7
Գրիգորյան Գայանե - Հնչերանգը 14
Խաչատրյան Օֆելյա - Բառերի խոսքիմաստային երկարժեք, եռարժեք և քառարժեք դրսևորումները Մ. Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարում...25
Հակոբյան Ֆրիդա - Համաբարբառների համակարգչային մշակման խնդիրները..36
Ղուկասյան Սևակ - Այո-ոչ հարցումները Մատթէոսի արևելահայերեն և արևմտահայերեն ավետարաններում..........45

2017

Գրիգորյան Գայանե - Բերդի և Գյումրու ենթախոսվածքների տեմպի համեմատություն (փորձառական հետազոտություն).....55
Գրիգորյան Գայանե - Կրկնակ բաղաձայնների տևողության փորձառական հետազոտություն)..63
Գրիգորյան Գայանե - Տարբեր բնույթի նախադասությունների հնչերանգները...72
Խաչատրյան Օֆելյա - Համանունները Մ.Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարում..79
Խաչատրյան Օֆելյա - Վարդան Արևելցի՞, թե՞ Վարդան պատմիչ...92

Հակոբյան Ֆրիդա - Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները...103
Հակոբյան Ֆրիդա - Հայաստառ հաղորդակցման խնդիրները համացանցում...112
Հակոբյան Ֆրիդա - Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգի ստեղծման նպատակը և խնդիրները......................120
Հովսեփյան Լիանա - Առկայացման կարգը գրաբարում.............130
Ղուկասյան Սևակ - Ինչու-որ հարցումները Մարկոսի արևելահայերեն և արևմտահայերեն ավետարաններում........141

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊՐԱԿ Բ

Ձևավորումը և էջադրումը՝ Ա. Օհանջանյանի